Հավելված

ՀՀ կրթության և գիտության նախարարի

2009թ. դեկտեմբերի 7 -ի N 1035-Ն հրամանի

# ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ 0301 «ՀԱՅՈՑ ԵՎ ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐԻ ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉ

## ԳԼՈՒԽ 1. ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ 0301 «ՀԱՅՈՑ ԵՎ ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐԻ ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

1. Միջին մասնագիտական կրթության «Մասնագետ» որակավորման աստիճանի 0301 «Հայոց և օտար լեզուների դասավանդում» մասնագիտությունը հաստատված է Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թ. հունվարի 12-ի «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների ցանկերը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի մայիսի 18-ի N 242 որոշման մեջ փոփոխություն կատարելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 73-Ն որոշմամբ:

2. ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից միջին մասնագիտական կրթության 0301 «Հայոց և օտար լեզուների դասավանդում» մասնագիտության համար սահմանվել են հետևյալ մասնագիտացումները՝

1) 0301.01 «Հայոց և ռուսաց լեզուների դասավանդում»

2) 0301.02 «Հայոց և անգլերեն լեզուների դասավանդում»

3) 0301.03 «Հայոց և ֆրանսերեն լեզուների դասավանդում»

4) 0301.04 «Հայոց և գերմաներեն լեզուների դասավանդում»

3. Միջին մասնագիտական կրթության 0301 «Հայոց և օտար լեզուների դասավանդում» մասնագիտության հիմնական կրթական ծրագիրն ավարտած, պետական ամփոփիչ ատեստավորումն անցած շրջանավարտին շնորհվում է «Հայոց և օտար լեզուների ուսուցիչ» որակավորում:

4. Միջին մասնագիտական կրթության 0301 «Հայոց և օտար լեզուների դասավանդում» մասնագիտության հիմնական կրթական ծրագիրը կարող է իրականացվել հետևյալ ձևերով՝

1) առկա,

2) հեռավար (դիստանցիոն),

3) դրսեկության (էքստեռնատ):

5. Միջին մասնագիտական կրթության 0301 «Հայոց և օտար լեզուների դասավանդում» մասնագիտության հիմնական կրթական ծրագրի իրականացման համար Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. հունվարի 12-ի «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների ցանկերը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2000թվականի մայիսի 18-ի N 242 որոշման մեջ փոփոխություն կատարելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 73-Ն որոշմամբ սահմանվում են ուսումնառության հետևյալ նորմատիվային ժամկետները.

1) կրթության առկա ձևով՝

ա. միջնակարգ (լրիվ) կրթության հիմքով՝ 4 տարի

2) դրսեկության (էքստեռնատ) և հեռավար (դիստանցիոն) ձևերով ուսուցման տևողությունը համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2007թ. սեպտեմբերի 6-ի «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական հիմնական կրթական ծրագրերի հեռավար (դիստանցիոն) և դրսեկությամբ (էքստեռնատով) ուսուցման կարգերը հաստատելու մասին» N 1028-Ն որոշմամբ սահմանված կարգի որոշում է ուսումնական հաստատությունը:

6. Միջին մասնագիտական կրթության 0301 «Հայոց և օտար լեզուների դասավանդում» մասնագիտության հիմնական կրթական ծրագիրը միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթության հիմքով յուրացնող ուսանողի ուսումնական բեռնվածության նվազագույն ծավալը 5184 ժամ է, առավելագույն ծավալը` 8910 ժամ: Հիմնական ընդհանուր կրթության հիմքով հիմնական կրթական ծրագրի յուրացման դեպքում ուսումնառության տևողությունն ավելանում է 52 շաբաթով:

## ԳԼՈՒԽ 2.
## ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ 0301 «ՀԱՅՈՑ ԵՎ ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐԻ ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ՄԱՍՆԱԳԵՏԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

7. Միջին մասնագիտական կրթության 0301 «Հայոց և օտար լեզուների դասավանդում» մասնագիտությամբ մասնագետն իրականացնում է հետևյալ զբաղմունքները`

1) ուսուցիչ` միջնակարգ կրթության,
2) դասավանդող` մեծահասակների կրթության:

8. Միջին մասնագիտական կրթության 0301 «Հայոց և օտար լեզուների դասավանդում» մասնագիտությամբ մասնագետի` զբաղմունքների ոլորտում մասնագիտական պարտականություններն են.

1) նախապատրաստում դասին,
2) դասարանային ուսուցում,
3) աշխատանք ծնողների հետ,
4) գնահատում,
5) աշխատանք փաստաթղթերի հետ,
6) մեթոդական աշխատանք:

## ԳԼՈՒԽ 3.
## ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՀԱՆՋՆԵՐ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ 0301 «ՀԱՅՈՑ ԵՎ ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐԻ ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ

9. Միջին մասնագիտական կրթության 0301 «Հայոց և օտար լեզուների դասավանդում» մասնագիտության հիմնական կրթական ծրագիրը շրջանավարտի համար պետք է ապահովի`

1) մասնագիտական գործունեության բնագավառի կարողություններն ու հմտությունները ձեռք բերելու համար պահանջվող ծավալով տեսական ու գործնական գիտելիքների յուրացում,
2) աշխատանքային և մասնագիտական պարտականությունները կատարելու ընթացքում աշխատանքային կոլեկտիվի անդամների և ղեկավարների հետ հաղորդակցվելու, մասնագիտական և ընդհանուր բնույթի հարցեր ներկայացնելու, դրանք պարզաբանելու կարողության ձևավորում,
3) ինչպես տիպական, այնպես էլ որոշակի փոփոխվող գործոններով իրավիճակներում մասնագիտական հարցերի լուծումների տարբերակներ առաջարկելու համար անհրաժեշտ կարողությունների ձևավորում,
4) մասնագիտական խնդիրների լուծման համար անհրաժեշտ փաստերը և տեղեկատվությունը որոշակի սոցիալական և էթիկական հարցերի հետ որպես մեկ ամբողջություն դիտարկելու, ակտիվ քաղաքացիական գիտակցության դրսևորման կարողության ձևավորում,

5) մասնագիտական գործունեության գործառնությունները կիրառվող նորմաների սահմաններում իրականացնելու հմտությունների ձևավորում,

6) ինքնազարգացման և մասնագիտական կատարելագործման նպատակով իր և աշխատակիցների ուսումնառության կարիքները գնահատելու, դրանք իրագործելու ուղիներն առաջարկելու կարողության ձևավորում,

7) մասնագիտական և ընդհանուր բնույթի տեղեկատվության գոյություն ունեցող աղբյուրներից օգտվելու, անհրաժեշտ տեղեկատվությունը ձեռք բերելու կարողության ձևավորում,

8) աշխատանքային խմբի գործունեությունը կազմակերպելու, խմբի անդամներին ուղղորդելու, նրանց անհատական հնարավորությունները գնահատելու և արդյունավետ օգտագործելու հմտությունների զարգացում,

9) ընթացիկ մասնագիտական խնդիրների լուծման ժամանակ ռազմավարական մոտեցումների տարրեր կիրառելու կարողությունների ձևավորում:

## ԳԼՈՒԽ 4.
## ՊԱՀԱՆՋՆԵՐ 0301 «ՀԱՅՈՑ ԵՎ ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐԻ ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ ՆՎԱԶԱԳՈՒՅՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ

10. Միջին մասնագիտական կրթության 0301 «Հայոց և օտար լեզուների դասավանդում» մասնագիտության հիմնական կրթական ծրագիրը ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական գիտելիքների բնագավառում շրջանավարտի համար պետք է ապահովի՝

1) իմանալ ՀՀ Սահմանադրության, տվյալ բնագավառի աշխատանքները, մարդու և հասարակության, քաղաքացիների միջև հարաբերությունները կարգավորող օրենքների և նորմատիվ փաստաթղթերի հիմնական դրույթները,

2) հաղորդակցվել մեկ՝ ոչ մասնագիտական օտար լեզվով,

3) պատկերացում ունենալ առողջ կենսակերպի մասին, տիրապետել ֆիզիկական կատարելագործման ունակություններին և հմտություններին հիմնական կամ սեկցիոն պարապմունքների միջոցով,

4) դրսևորել ազգային և համաշխարհային պատմության և մշակույթի որոշակի իմացություն,

5) պատկերացում ունենալ անձի և հասարակության զարգացման օրինաչափությունների, հասարակության սոցիալական կառուցվածքի, շարժումների, քաղաքականության սուբյեկտների, քաղաքական հարաբերությունների և գործընթացների մասին,

6) իմանալ հոգեբանության, միջանձնային փոխհարաբերությունների վարվելակերպի տարրերը,

7) իմանալ տնտեսագիտության տեսության հիմնադրույթները, մակրոտնտեսության և միկրոտնտեսության օրենքները, անցումային շրջանի տնտեսության առանձնահատկությունները:

8) ÇÙ³Ý³É ïÝï»ë³·ÇïáõÃÛ³Ý ï»ëáõÃÛ³Ý ÑÇÙÝ³¹ñáõÛÃÝ»ñÁ, Ù³Ïñáï Ýï»ëáõÃÛ³Ý ¨ ÙÇÏñáïÝï»ë-áõÃÛ³Ý ûñ»ÝùÝ»ñÁ, ³ÝóáõÙ³ÛÇÝ ßñç³ÝÇ ïÝï»ëáõÃÛ³Ý ³é³ÝÓÝ³Ñ³ïÏáõÃÛáõÝÝ»ñÁ:

11. Միջին մասնագիտական կրթության 0301 «Հայոց և օտար լեզուների դասավանդում» մասնագիտության հիմնական կրթական ծրագիրը մաթեմատիկական և ընդհանուր բնագիտական գիտելիքների բնագավառում շրջանավարտի համար պետք է ապահովի՝

1) ծանոթ լինել էկոլոգիական հիմնական հասկացություններին, բնապահպանական գլոբալ և տարածաշրջանային հիմնախնդիրներին,

2) պատկերացում ունենալ արտակարգ իրավիճակների մասին, տիրապետել արտակարգ իրավիճակներում գործելու սկզբունքներին, ծանոթ լինել փրկարարական աշխատանքների կազմակերպման կառույցներին և փրկարարական տեխնիկային, կարողանալ օգտագործել անհատական պաշտպանության միջոցներ:

12. Միջին մասնագիտական կրթության 0301 «Հայոց և օտար լեզուների դասավանդում» մասնագիտության հիմնական կրթական ծրագիրը պետք է ըստ աղյուսակ 1-ում բերված մոդուլների ապահովի շրջանավարտի կողմից առանցքային հմտություններին տիրապետում:

13. Միջին մասնագիտական կրթության 0301 «Հայոց և օտար լեզուների դասավանդում» մասնագիտության հիմնական կրթական ծրագիրը շրջանավարտի համար պետք է ապահովի ընդհանուր մասնագիտական և հատուկ մասնագիտական կարողությունների ձեռքբերում՝

1) 0301.02 «Հայոց և անգլերեն լեզուների դասավանդում», 0301.03 «Հայոց և ֆրանսերեն լեզուների դասավանդում» և 0301.04 «Հայոց և գերմաներեն լեզուների դասավանդում» մասնագիտացումների համար՝ ըստ աղյուսակ 2-ա - ում բերված մոդուլների:

2) 0301.01 «Հայոց և ռուսաց լեզուների դասավանդում» մասնագիտացման համար՝ ըստ աղյուսակ 2-բ - ում բերված մոդուլների:

## ԳԼՈՒԽ 5.
## ՊԱՀԱՆՋՆԵՐ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ 0301 «ՀԱՅՈՑ ԵՎ ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐԻ ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ

14. Միջին մասնագիտական կրթության 0301 «Հայոց և օտար լեզուների դասավանդում» մասնագիտության հիմնական կրթական ծրագիր իրականացնող հաստատության կադրային ապահովության և կադրային համապատասխանության նկատմամբ սահմանվում են հետևյալ պահանջները.

1) Միջին մասնագիտական կրթության 0301 «Հայոց և օտար լեզուների դասավանդում» մասնագիտությամբ մասնագետի պատրաստման հիմնական կրթական ծրագիր իրականացնող հաստատություններում ուսումնական գործընթացն իրականացնում են մանկավարժական և ուսումնաօժանդակ անձնակազմի աշխատողները:

2) Հաստատության մանկավարժական աշխատողների կազմում ընդգրկվում են դասախոսներ, մանկավարժական պրակտիկայի մեթոդիստներ: Դասախոսական անձնակազմի աշխատողները, որպես կանոն, պետք է ունենան իրենց կողմից ուսուցանվող դասընթացի գծով բարձրագույն մասնագիտական կրթություն: Հատուկ մասնագիտական դասընթացներ պարապող դասախոսների համար մասնագիտական աշխատանքի փորձի առկայությունը ցանկալի է:

3) Ուսումնական պրակտիկան վարող արտադրական ուսուցման վարպետը կարող է ունենալ ինչպես բարձրագույն մասնագիտական, այնպես էլ միջին մասնագիտական կրթություն, մասնագիտական աշխատանքի փորձ: Առանձին մասնագիտությունների գծով ուսումնական պրակտիկան կամ նրա որոշակի մասերը կարող է վարել նաև արհեստագործական կրթություն և բավարար մասնագիտական որակավորում ունեցող արհեստավորը:

4) Արտադրական և նախաավարտական պրակտիկաները վարում է մասնագիտական դասընթացի դասախոսը, որը տվյալ ոլորտում պետք է ունենա մասնագիտական-մեթոդական աշխատանքի մեծ փորձ:

15. Միջին մասնագիտական կրթության 0301 «Հայոց և օտար լեզուների դասավանդում» մասնագիտության հիմնական կրթական ծրագիր իրականացնող հաստատության ուսումնամեթոդական ապահովության նկատմամբ սահմանվում են հետևյալ պահանջները:

1) Միջին մասնագիտական կրթության 0301 «Հայոց և օտար լեզուների դասավանդում» մասնագիտության հիմնական կրթական ծրագրի իրականացումը պետք է ապահոված լինի ուսանողի համար մատչելի տեղեկատվական նյութերով (գրադարանային ֆոնդ, տվյալների համակարգչային բազա), ինչն, ըստ բովանդակության պետք է համապատասխանի մասնագիտության ուսումնական պլանով նախատեսված առարկաների և մոդուլների լրիվ ցանկին: Այդ առարկաների և մոդուլների,

ինչպես նաև ուսումնական գործընթացի կազմակերպման բոլոր ձևերի գծով (տեսական, գործնական պարապմունքների, ուսումնական, արտադրական և նախաավարտական պրակտիկաների, կուրսային և դիպլոմային աշխատանքերի) պետք է առկա լինեն դասագրքեր, ուսումնամեթոդական, մեթոդական ձեռնարկներ, ուղեցույցեր, գործնական խաղերի սցենարներ, թեստային հանձնարարականների հավաքածուներ, ալգորիթմներ, մեթոդական մշակումներ, ցուցումներ, երաշխավորություններ, տեղեկատվական գրականություն, դիտողական նյութեր, ուսուցման տեխնիկական միջոցներ, ինչպես նաև միջանկյալ և ամփոփիչ ատեստավորման նյութեր:

16. Միջին մասնագիտական կրթության 0301 «Հայոց և օտար լեզուների դասավանդում» մասնագիտության հիմնական կրթական ծրագիր իրականացնող կազմակերպության նյութատեխնիկական ապահովության նկատմամբ սահմանվում են հետևյալ պահանջները.

1) Ուսումնական կաբինետների երաշխավորվող ցանկը՝

ա. հայոց լեզվի կաբինետ,

բ. ուսումնասիրվող օտար լեզուների կաբինետներ,

գ. լինգաֆոնային կաբինետ,

դ. տեսակաբինետ,

ե. մանկավարժության կաբինետ:

զ հոգեբանական ծառայության կաբինետ

է. արտակարգ իրավիճակների կաբինետ

ը. համակարգչային տեխնիկայի կաբինետ

թ. պրակտիկայի և դիդակտիկայի կաբինետ

2) Սպորտային համալիր՝

ա. մարզադահլիճ,

բ. վազքուղի:

Կրթական ծրագիր իրականացնող կազմակերպությունը, ելնելով անհրաժեշտությունից, կարող է ձևավորել լրացուցիչ կաբինետներ, լաբորատորիաներ, արհեստանոցներ:

17. Միջին մասնագիտական կրթության 0301 «Հայոց և օտար լեզուների դասավանդում» մասնագիտության հիմնական կրթական ծրագրով ուսումնական գործընթացի կազմակերպման նկատմամբ սահմանվում են հետևյալ պահանջները.

1) Ուսանողի շաբաթական ուսումնական բեռնվածության առավելագույն ծավալը չպետք է գերանզանցի 54 ժամը՝ ներառյալ լսարանային և արտալսարանային /տնային/ ուսումնական աշխատանքի բոլոր տեսակները:

2) Ուսումնառության ընթացքում ուսանողի բեռնվածությունը պարտադիր լսարանային պարապմունքներով չպետք է գերազանցի շաբաթական 36 ժամը, ինչը նաև ուսումնական բեռնվածության նվազագույն ծավալն է, ընդ որում՝ նշված ծավալը չի ներառում նախասիրական առարկաների պարապմունքները, խորհրդատվությունները և լրացուցիչ արտալսարանային պարապմունքները:

3) Ուսումնական խմբի համար սահմանվում են խորհրդատվության ժամեր յուրաքանչյուր ուսումնական տարում մինչև 100 ժամ:

4) Ուսումնական տարվա սկիզբը և ավարտը բոլոր կուրսերում որոշվում է ուսումնական պլաններով:

5) Նախասիրական առարկաների ցանկը, դրանց ծավալը (ոչ ավել, քան շաբաթական 4 ժամ՝ առանձին դասացուցակով) և ուսուցման ժամկետները յուրաքանչյուր ուսումնական տարում որոշվում է հաշվի առնելով ուսանողների ընտրությունը:

18. Միջին մասնագիտական կրթության 0301 «Հայոց և օտար լեզուների դասավանդում» մասնագիտության հիմնական կրթական ծրագրի պրակտիկաների կազմակերպման նկատմամբ սահմանվում են հետևյալ պահանջները.

1) Միջին մասնագիտական կրթության «Հայոց և օտար լեզուների դասավանդում» մասնագիտության հիմնական կրթական ծրագրի որոշակի մասի ուսուցումն իրականացվում է ուսումնական (տեսական ուսուցմամբ և/կամ առանց տեսական ուսուցման), արտադրական և նախաավարտական պրակտիկաների ձևով: Պրակտիկաների ընթացքում ուսանողները կատարելագործում են իրենց գործնական հմտությունները:

2) Պրակտիկայի տևողությունը սահմանվում է մասնագիտության ուսումնական պլանով:

3) Պրակտիկաների ուսումնական ծրագրերը կազմում և հաստատում են ուսումնական հաստատությունները:

4) Պրակտիկաների անցկացումը վարում են մեթոդիստները, դասախոսները, արտադրական ուսուցման վարպետները:

5) Ուսումնական պրակտիկաներն անց են կացվում պրակտիկայի ծրագրի կատարումն ապահովելու համար բավարար կահավորում ու տեխնիկական հագեցում ունեցող ուսումնական, ուսումնա-արտադրական արհեստանոցներում, ուսումնական տնտեսություններում, ուսումնափորձնական տեղամասերում, ուսումնական հաստատության այլ ուսումնաօժանդակ օբյեկտներում, ինչպես նաև արտադրական կազմակերպություններում, հաստատություններում:

6) Արտադրական և նախաավարտական պրակտիկաները, որպես կանոն, անց են կացվում պրակտիկաների ուսումնական ծրագրերի բովանդակությանը համապատասխան պայմաններ ունեցող կազմակերպություններում:

19. Միջին մասնագիտական կրթության 0301 «Հայոց և օտար լեզուների դասավանդում» մասնագիտության հիմնական կրթական ծրագիրն իրականացնելու ընթացքում ուսանողների միջանկյալ և ամփոփիչ ատեստավորումների նկատմամբ սահմանվում են հետևյալ պահանջները.

1) Միջին մասնագիտական կրթության 0301 «Հայոց և օտար լեզուների դասավանդում» մասնագիտության հիմնական կրթական ծրագրով ուսուցման ընթացքը վերահսկելու և արդյունքների ձեռքբերումը գնահատելու նպատակով անց է կացվում ուսանողների միջանկյալ ատեստավորում, իսկ որակավորում շնորհելու համար՝ շրջանավարտների պետական ամփոփիչ ատեստավորում:

2) Միջանկյալ ատեստավորում կարող է անցկացվել ինչպես ուսումնական կիսամյակի ընթացքում այնպես էլ վերջում:

3) Ուսումնական կիսամյակի սկզբում ուսանողը տեղեկացվում է կիսամյակի ընթացքում միջանկյալ ատեստավորման բնույթի, ներառվող նյութի ծավալի և ժամկետների մասին:

4) Միջանկյալ ատեստավորման համար ընտրված ուսումնական նյութը չի կարող ավելին լինել երկու անընդմեջ կիսամյակների նյութից:

5) Շրջանավարտների պետական ամփոփիչ ատեստավորումը երաշխավորվում է անց կացնել առանձին առարկաներից կամ մոդուլներից քննության, համալիր (միջառարկայական կամ միջմոդուլային) քննության կամ ավարտական (դիպլոմային) աշխատանք կատարելու և պաշտպանելու ձևով:

6) Պետական ամփոփիչ ատեստավորման ընտրված ձևը և ներառվող նյութի ծավալը պետք է հնարավորություն տա համոզվել սույն չափորոշչով «Հայոց և օտար լեզուների դասավանդում» մասնագիտությամբ մասնագետի համար սահմանված պահանջներին շրջանավարտի համապատասխանության մեջ:

## ԳԼՈՒԽ 6.
## ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ 0301 «ՀԱՅՈՑ ԵՎ ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐԻ ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆԸ ԵՎ ՆՐԱ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐԸ

20. Միջին մասնագիտական կրթության 0301 «Հայոց և օտար լեզուների դասավանդում» մասնագիտության հիմնական կրթական ծրագիրն իրականացվում է

1) 0301.02 «Հայոց և անգլերեն լեզուների դասավանդում», 0301.03 «Հայոց և ֆրանսերեն լեզուների դասավանդում» և 0301.04 «Հայոց և գերմաներեն լեզուների դասավանդում» մասնագիտացումների համար`համաձայն աղյուսակ 3- ա- ում բերված օրինակելի ուսումնական պլանի:

2) 0301.01 «Հայոց և ռուսաց լեզուների դասավանդում» մասնագիտացման համար` համաձայն աղյուսակ 3-բ -ում բերված օրինակելի ուսումնական պլանի:

21. Միջին մասնագիտական կրթության 0301 «Հայոց և օտար լեզուների դասավանդում» մասնագիտության հիմնական կրթական ծրագիրն իրականացնող կազմակերպությունը օրինակելի ուսումնական պլանը կիրառելիս`

1) սույն չափորոշչով սահմանված օրինակելի ուսումնական պլանի հիման վրա կազմում և հաստատում է աշխատանքային ուսումնական պլանը,
2) աշխատանքային ուսումնական պլանը կազմելիս կարող է մինչև 5% չափով փոփոխել դասընթացների և մոդուլների ժամաքանակը,
3) կարող է փոփոխել առանձին առարկաների և մոդուլների ծրագրային նյութի բովանդակությունը 15%-ի սահմաններում` չփոփոխելով արդյունքները և կատարման չափանիշները,
4) առարկայի և /կամ/ մոդուլի ընդհանուր ժամաքանակի սահմաններում որոշում է տեսական, գործնական և լաբորատոր պարապմունքների ժամաքանակները,
5) պրակտիկայի համար նախատեսված շաբաթների սահմաններում որոշում է ուսումնական և արտադրական պրակտիկաների տևողությունները, անցկացման ժամկետները, նախաավարտական պրակտիկայի տևողությունը,
6) մասնագիտական առարկաների և մոդուլների ուսումնական ծրագրերը կազմելիս հաշվի է առնում գործատուների, գործադիր իշխանությունների, մասնագիտական ոլորտը կառավարող պետական լիազորված մարմինների, այլ շահագրգիռ սուբյեկտների (սոցիալական գործընկերների) առաջարկությունները,
7) ընտրում է շրջանավարտների` սույն չափորոշչով երաշխավորված ամփոփիչ ատեստավորման ձևերից մեկը:

Աղյուսակ 1

Միջին մասնագիտական կրթության 0301 «Հայոց և օտար լեզուների դասավանդում» մասնագիտության հիմնական կրթական ծրագրի առանցքային հմտությունների մոդուլներ

| ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ» | |
|---|---|
| **Մոդուլի դասիչը** | ԱՀԱԽ 4-09-001 |
| **Մոդուլի նպատակը** | Մոդուլի նպատակն է սովորողին տալ գիտելիքներ աշխատանքային գործունեության ընթացքում հաջողության հասնելու նախապայմանների մասին, ինչպես նաև ձևավորել ցանկացած բնագավառում անհրաժեշտ աշխատանքային կուլտուրա և էթիկա դրսևորելու, ղեկավարի և գործընկերների հետ արդյունավետ հարաբերվելու, առաջացած աշխատանքային խնդիրներն ընկալելու և համապատասխան լուծումներ տալու կարողություններ: |
| **Մոդուլի տևողությունը** | 54 ժամ |
| **Մուտքային պահանջները** | Չկան |
| **Մոդուլի գնահատման կարգը** | Մոդուլի կատարողականը գնահատվելու է կատարված աշխատանքի հիման վրա` հաշվի առնելով նաև յուրաքանչյուր արդյունքի կատարման չափանիշների մակարդակի ապահովումը: |
| **Ուսումնառության արդյունք 1** | րապետել աշխատանքի տեղավորվելու կարողությունների |
| **Կատարման չափանիշներ** | ա. ճիշտ է շարադրում գործող աշխատանքային օրենսգրքի անհրաժեշտ դրույթները.<br>բ. ճիշտ է ներկայացնում աշխատանքի ընդունվելու և դրանից ազատվելու համար անհրաժեշտ բոլոր գործընթացները.<br>գ. ճիշտ է կազմում գրավոր ինքնակենսագրություն (CV).<br>դ. ճիշտ և մանրամասն բանավոր ներկայացնում է իր կենսագրությունը: |
| **Ուսումնառության արդյունք 2** | սևորել անհրաժեշտ վերաբերմունք աշխատանքի և աշխատավայրի նկատմամբ: |
| **Կատարման չափանիշներ** | ա. ճիշտ է ներկայացնում աշխատանքի և շրջապատի նկատմամբ դրական տրամադրվելու կարողությունները.<br>բ. ճիշտ է ներկայացնում գործընկերների նկատմամբ հարգալից վերաբերմունքի և արդյունավետորեն հարաբերվելու օրինակներ.<br>գ. առաջադրված իրավիճակում ցուցաբերում է պատասխանատվության դրսևորումներ.<br>դ. ցուցաբերում է գործընկերոջը և ղեկավարին ուշադիր լսելու և հասկանալու դրսևորումներ: |
| **Ուսումնառության արդյունք 3** | Տիրապետել աշխատանքի կուլտուրային և էթիկային, արդյունավետ աշխատել թիմում: |
| **Կատարման չափանիշներ** | ա. ճիշտ է ներկայացնում կազմակերպության նպատակները, արժեքները և կիրառվող ընդհանուր աշխատանքային մեթոդները, աշխատանքային և միջանձնային հարաբերությունները.<br>բ. ճիշտ է ներկայացնում թիմային աշխատանքի հիմնական սկզբունքները.<br>գ. ճիշտ է ներկայացնում թիմային խնդիրների լուծման մեթոդները.<br>դ. թիմային աշխատանքի առաջադրված իրավիճակում դրսևորում է անհրաժեշտ վարքագիծ` ցուցաբերելով փոխօգնություն, համբերատարություն, նվիրվածություն աշխատանքին և ընկերներին.<br>ե. ճիշտ վերաբերմունք է դրսևորում և հարգալից է կոնֆլիկտային գործընկերների նկատմամբ.<br>զ. առաջարկում է խնդրի ճիշտ լուծումներ առաջադրված պրոբլեմային իրավիճակում |
| **Ուսումնառության արդյունք 4** | Իմանալ աշխատանքում հաջողության հասնելու նախապայմանները և պատշաճ հարաբերվի ղեկավարի հետ: |
| **Կատարման չափանիշներ** | ա. ճիշտ է բացատրում աշխատանքային կարգապահության և ճշտապահության կարևորությունը.<br>բ. ճիշտ է ներկայացնում ղեկավարի հետ հարաբերվելու ձևերը, իր և ղեկավարի իրավունքներն ու պարտականությունները.<br>գ. ճիշտ է ներկայացնում աշխատանքի արդյունավետության ու որակի ապահովման ընդհանուր սկզբունքները: |

| | |
|---|---|
| **Ուսումնառության արդյունք 5** | Դրսևորել քննադատական մտածողություն: |
| **Կատարման չափանիշներ** | ա. ճիշտ է գնահատում տեղեկատվության հուսալիության և զգացմունքայնության աստիճանը.<br>բ. ստացած տեղեկատվությունը ճիշտ և արդյունավետորեն համադրում է առկա գիտելիքների հետ.<br>գ. իրականացնում է կառուցողական քննադատություն և ճիշտ է բացատրում կառուցողական քննադատության կարևորությունը: |
| **Ուսումնառության արդյունք 6** | Կառավարել սթրեսը և ժամանակը, լուծել պրոբլեմներ և կոնֆլիկտներ: |
| **Կատարման չափանիշներ** | ա. ճիշտ է ներկայացնում սթրեսի կանխարգելման և անխուսափելի սթրեսին դիմակայելու մեթոդները.<br>բ. ճիշտ է կազմում իր աշխատանքային պլանը (պայմանական աշխատանքային պլան).<br>գ. ճիշտ է ներկայացնում ժամանակի արդյունավետ օգտագործման միջոցները.<br>դ. բացահայտում է և ճիշտ է սահմանում պրոբլեմը տրված իրավիճակում.<br>ե. ճիշտ է վերլուծում պրոբլեմը, տալիս է լուծման ճիշտ տարբերակ և գնահատում արդյունքը.<br>զ. բացահայտում է ցանկացած կոնֆլիկտի պատճառները.<br>է.ճիշտ է ներկայացնում կոնֆլիկտի կանխարգելման եղանակները, կարողանում է տալ դրանց արագ ու արդյունավետ լուծումներ: |
| **ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ»** | |
| **Մոդուլի դասիչը** | ԱՅՀ 4-09-001 |
| **Մոդուլի նպատակը** | Մոդուլի նպատակն է սովորողի մոտ ձևավորել աշխատանքային ու մասնագիտական գործունեության ընթացքում, ինչպես նաև անձնական կյանքում արդյունավետ և ակտիվ հաղորդակցվելու կարողություններ: |
| **Մոդուլի տևողությունը** | 34 ժամ |
| **Մուտքային պահանջները** | Չկան |
| **Մոդուլի գնահատման կարգը** | Մոդուլի կատարողականը գնահատվելու է կատարված աշխատանքի հիման վրա՝ հաշվի առնելով նաև յուրաքանչյուր արդյունքի կատարման չափանիշների մակարդակի ապահովումը: |
| **Ուսումնառության արդյունք 1** | Սահմանել ուսումնառության անձնական նպատակները: |
| **Կատարման չափանիշներ** | ա. ճիշտ է սահմանում ուսումնառության անձնական նպատակները.<br>բ. ճիշտ է պլանավորում և կիրառում ուսումնառության անձնական նպատակների ձեռքբերմանն ուղղված ուսումնառության գործընթացները.<br>գ. ճիշտ է սահմանում ուսումնառության տարբեր եղանակները: |
| **Ուսումնառության արդյունք 2** | Բանավոր և գրավոր տեղեկատվական հաղորդում կատարել պարզ թեմաների և տեքստերի մասին |
| **Կատարման չափանիշներ** | ա. օգտագործում է բանավոր և գրավոր խոսքի համապատասխան կառուցվածք,<br>բ. հաղորդումը պարունակում է պարզ տեղեկատվություն, կարծիքներ կամ գաղափարներ,<br>գ. տեղեկատվության առանձնացում/խմբավորումը կատարում է նպատակային,<br>դ. հաղորդումը իրականացնում է՝ հաշվի առնելով իրավիճակը և լսարանը: |
| **Ուսումնառության արդյունք 3** | Նախաձեռնել, պահպանել, եզրափակել երկխոսություններ և քննարկումներ: |
| **Կատարման չափանիշներ** | ա. ճիշտ է կիրառում «ակտիվ ունկնդրման» ժամանակ օգտագործվող հմտությունները, ինչպիսիք են՝ պարզաբանումներ ստանալու ձգտումը, գրառումներ կատարելը, ամփոփելը,<br>բ. ազատ կերպով ձևակերպում, արտահայտում և պաշտպանում է իր գաղափարները, տեսակետներն ու կարծիքները.<br>գ. ցուցաբերում է համոզելու կարողություն.<br>դ. կատարում է ճիշտ ամփոփում/եզրափակում: |
| **Ուսումնառության արդյունք 4** | Մեկնաբանել սխեմաներ, աղյուսակներ, դիագրամներ, քարտեզներ և նկարներ |
| **Կատարման չափանիշներ** | ա. ճիշտ է նախանշում սխեմաների, աղյուսակների, դիագրամների, քարտեզների և նկարների նշանակությունը և նրանց |

| | |
|---|---|
| | միջև եղած տարբերությունները.<br>բ. ճիշտ է մեկնաբանում առաջադրված սխեմաները, աղյուսակները, դիագրամները, քարտեզները և նկարները.<br>գ. մեկնաբանման ընթացքում օգտագործում է խոսքի համապատասխան կառուցվածք |
| **Ուսումնառության արդյունք 5** | Կատարել փաստաթղթավորում |
| **Կատարման չափանիշներ** | ա. ճիշտ է սահմանում տարբեր փաստաթղթերը՝ ըստ դրանց նշանակության.<br>բ. ճիշտ է նախանշում տարբեր փաստաթղթերի օգտագործման տեղն ու դերը.<br>գ. ճիշտ է կատարում տարբեր տեսակի տեղեկատվությունների փաստաթղթավորումը: |
| **ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ»** | |
| **Մոդուլի դասիչը** | ԱԱՕ 4-09-001 |
| **Մոդուլի նպատակը** | Մոդուլի նպատակն է սովորողի մոտ ձևավորել աշխատանքային անվտանգության պահպանման, աշխատանքի պաշտպանության միջոցառումների իրականացման և առաջին օգնության կազմակերպման կարողություններ: |
| **Մոդուլի տևողությունը** | 34 ժամ |
| **Մուտքային պահանջները** | Այս մոդուլն ուսումնասիրելու համար սովորողը պետք է ուսումնասիրած լինի ԱՅԱԽ 4-09-001 «Ընդհանուր աշխատանքային գործունեության հմտություններ», ՈՒՍՈՒՑ 4-09-003 «Դասավանդողի հաղորդակցման հմտությունների ձևավորում» մոդուլները: |
| **Մոդուլի գնահատման կարգը** | Մոդուլի կատարողականը գնահատվելու է կատարված աշխատանքի հիման վրա՝ հաշվի առնելով նաև յուրաքանչյուր արդյունքի կատարման չափանիշների մակարդակի ապահովումը: |
| **Ուսումնառության արդյունք 1** | Իմանալ աշխատանքի պաշտպանության իրավական և կազմակերպչական դրույթները |
| **Կատարման չափանիշներ** | ա. ճիշտ է ներկայացնում աշխատանքի պաշտպանության վերաբերյալ իրավական ակտերը.<br>բ. ճիշտ է ներկայացնում կազմակերպություններում աշխատանքի պաշտպանության կազմակերպման ներքին նորմատիվային փաստաթղթերը.<br>գ. ճիշտ է ներկայացնում աշխատանքի պաշտպանության նորմերի և կանոնների խախտման հետ կապված պատասխանատվությունը.<br>դ. ճիշտ է ներկայացնում աշխատանքի պաշտպանության նորմերի և կանոնների պահպանման նկատմամբ վերահսկողության ձևերը և մեխանիզմները.<br>ե. ճիշտ է ներկայացնում արտադրությունում դժբախտ դեպքերի և պատահարների հետաքննության, փաստաթղթավորման և հաշվառման կարգը.<br>զ. ճիշտ է ներկայացնում արտադրության տարբեր մակարդակների ղեկավարների պատասխանատվությունը աշխատանքի պաշտպանության նորմերի պահպանման վերաբերյալ: |
| **Ուսումնառության արդյունք 2** | Իմանալ անվտանգության տեխնիկայի նորմերը և կանոնները կազմակերպություններում, հիմնարկներում |
| **Կատարման չափանիշներ** | ա. ճիշտ է ներկայացնում սարքավորումների, մեխանիզմների շահագործման անվտանգության տեխնիկայի հիմնական պահանջները.<br>բ. ճիշտ է ներկայացնում էլեկտրաանվտանգության կանոնները և պաշտպանությունը.<br>գ. ճիշտ է ներկայացնում հակահրդեհային պաշտպանության կանոնները.<br>դ. ճիշտ է ներկայացնում ճնշման տակ աշխատող սարքավորումների և մեխանիզմների անվտանգ շահագործման կանոնները |
| **Ուսումնառության արդյունք 3** | Իմանալ արտադրական սանիտարիայի և հիգիենայի պահանջները |
| **Կատարման չափանիշներ** | ա. ճիշտ է ներկայացնում արտադրական սանիտարիայի և հիգիենայի հասկացությունները.<br>բ. ճիշտ է ներկայացնում արտադրական միկրոկլիմայի նկատմամբ նորմատիվային պահանջները.<br>գ. ճիշտ է թվարկում արտադրական աղմուկից և ցնցումներից պաշտպանվելու միջոցները. |

| | |
|---|---|
| | դ. ճիշտ է ներկայացնում արտադրական լուսավորվածությանը ներկայացվող պահանջները և նորմերը: |
| Ուսումնառության արդյունք 4 | Ցուցաբերել առաջին բուժօգնություն |
| Կատարման չափանիշներ | ա.ճիշտ է ցուցադրում արհեստական շնչառության իրականացումը.<br>բ.ճիշտ է ցուցադրում սրտի աշխատանքի վերականգնման իրականացումը.<br>գ.ճիշտ է ցուցադրում արյան հոսքի դադարեցման իրականացումը և ճիշտ է դնում վիրակապ.<br>դ.ճիշտ է վիրակապում կոտրվածքները.<br>ե.ճիշտ է ցուցադրում այրվածքների դեպքում առաջին օգնության ցուցաբերումը.<br>զ.ճիշտ է ցուցադրում էլեկտրահարման դեպքում առաջին օգնության իրականացումը; |

Աղյուսակ 2-ա

Միջին մասնագիտական կրթության 0301 «Հայոց և օտար լեզուների դասավանդում» մասնագիտության 0301.02 «Հայոց և անգլերեն լեզուների դասավանդում», 0301.03 «Հայոց և ֆրանսերեն լեզուների դասավանդում» և 0301.04 «Հայոց և գերմաներեն լեզուների դասավանդում» մասնագիտացումների հիմնական կրթական ծրագրի ընդհանուր մասնագիտական և հատուկ մասնագիտական կարողությունների մոդուլներ

| **ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ»** | |
|---|---|
| **Մոդուլի դասիչը** | ՈՒՍՈՒՑ 4-09-001 |
| **Մոդուլի նպատակը** | Մոդուլի նպատակն է սովորողին տալ գիտելիքներ հոգեկանի զարգացման ընդհանուր օրինաչափությունների, գործընթացների, որակների և վիճակների մասին, ինչպես նաև ձևավորել դպրոցական տարիքի երեխաների հոգեկան ձևավորման և զարգացման գործընթացը ճիշտ ուղղորդելու կարողություններ: |
| **Մոդուլի տևողությունը** | 68 ժամ |
| **Մուտքային պահանջները** | Չկան |
| **Մոդուլի գնահատման կարգը** | Մոդուլի կատարողականը գնահատվելու է կատարված աշխատանքի հիման վրա` հաշվի առնելով նաև յուրաքանչյուր արդյունքի կատարման չափանիշների մակարդակի ապահովումը: |
| **Ուսումնառության արդյունք 1** | Իմանալ հոգեբանության դերն ու նշանակությունը, նրա ուսումնասիրման մեթոդները, սկզբունքները, ֆունկցիաները և բնագավառները |
| **Կատարման չափանիշներ** | ա.ճիշտ է բացատրում հոգեբանությունը որպես գիտություն, նրա զարգացման հիմնական փուլերը.<br>բ.ճիշտ է բացատրում հոգեբանության ուսումնասիրության մեթոդները անձի հոգեկան կառուցվածքի ուսումնասիրության ժամանակ.<br>գ.ճիշտ է ներկայացնում հոգեբանության սկզբունքները, ֆունկցիաները և հոգեկանի ռեֆլեկտոր բնույթը.<br>դ.ճիշտ է բացատրում հոգեբանության բնագավառները և միջառարկայական կապերը: |
| **Ուսումնառության արդյունք 2** | Իմանալ անձը և ճանաչել նրա գործունեության ձևերը: |
| **Կատարման չափանիշներ** | ա.ճիշտ է բացատրում անձ, անհատ, անհատականություն և մարդ հասկացությունները և ճանաչում է անձը որպես օբյեկտ և սուբյեկտ,<br>բ.ճիշտ է ներկայացնում անձի գործունեությունը և նրա գործունեության տեսակները տարբեր տարիքային փուլերում,<br>գ.ճիշտ է ներկայացնում տարիքին բնորոշ գործունության առաջատար ձևը (խաղ, աշխատանք, ուսումնառություն),<br>դ.ճիշտ է ներկայացնում անձի վարքը, նրա ինքնակառավարման հնարավորությունները: |
| **Ուսումնառության արդյունք 3** | Իմանալ անձի ճանաչողական (իմացական) գործընթացները: |
| **Կատարման չափանիշներ** | ա.ճիշտ է ներկայացնում անձի ուշադրությունը, նրա տեսակները, հիմնական որակները, դպրոցականի ուշադրությունը, որպես ճանաչողաիմացական գործընթաց. |

| | |
|---|---|
| | բ.ճիշտ է ներկայացնում զգայությունը, նրա առանձնահատկությունները, տեսակները դպրոցականի զգայությունները.<br>գ.ճիշտ է ներկայացնում ընկալումները, նրա տեսակները, առանձնահատկությունները և նրանց իմացական դերը.<br>դ.ճիշտ է ներկայացնում հիշողությունը, նրա տեսակները, հիմնական գործընթացները և դպրոցականի հիշողությունը, որպես ճանաչողաիմացական գործընթաց.<br>ե.ճիշտ է ներկայացնում իմացական գործընթացներից երևակայությունը, նրա տեսակները, դպրոցականի տարիքի երեխաների երևակայական զարգացումը.<br>զ.ճիշտ է ներկայացնում խոսքը որպես հաղորդակցման միջոց, նրա տեսակները և զարգացնել դպրոցականի տարիքի երեխաների խոսքը.<br>է.ճիշտ է բացատրում մտածողությունը, նրա հիմնական գործընթացները և դպրոցականի մտածողությունը: |
| **Ուսումնառության արդյունք 4** | Իմանալ անձի գործունեության հուզակամային ոլորտը: |
| **Կատարման չափանիշներ** | ա. ճիշտ է ներկայացնում անձի հուզակամային ոլորտը և նրանց արտաքին դրսևորումները,<br>բ. ճիշտ է բացատրում հույզերը և զգացմունքները, նրանց տեսակները.<br>գ. ճիշտ է ներկայացնում կամքը, կամային ոլորտի դրսևորումները և հիմնական գործառույթները.<br>դ. ճիշտ է ներկայացնում հոգեկան վիճակներից սթրեսը, ֆրուստրացիան, աֆեկտը, կիրքը և դրանց հնարավոր հոգեբանական խաթարումների նախադրյալները: |
| **Ուսումնառության արդյունք 5** | Իմանալ անձի հոգեկան որակները կամ անհատական առանձնահատկությունները: |
| **Կատարման չափանիշներ** | ա. ճիշտ է ներկայացնում հոգեկան որակներից խառնվածքը դրա հոգեբանական բնութագիրը և նյարդային համակարգին համապատասխան տիպերը.<br>բ. ճիշտ է բացատրում բնավորությունը, դրա դրսևորումները, գծերը և դպրոցականի տարիքի երեխաների բնավորությունը.<br>գ. ճիշտ է ներկայացնում ընդունակությունները, դրանց դրսևորման պայմանները, տեսակները և դպրոցականի ընդունակությունները.<br>դ.ճիշտ է ներկայացնում դիրքորոշումների կառուցվածքը, ֆունկցիաները և տեսակները: |
| **Ուսումնառության արդյունք 6** | Իմանալ մանկավարժական հոգեբանության կապը տարիքային հոգեբանության հետ: |
| **Կատարման չափանիշներ** | ա.ճիշտ է բացատրում տարիքային և մանկավարժական հոգեբանությունը, դրա մեթոդներն ու սկզբունքները.<br>բ.ճիշտ է բացատրում տարիքային տարբեր փուլերում գտնվող երեխաների զարգացման հոգեբանական առանձնահատկությունները.<br>գ.ճիշտ է ներկայացնում ուսուցչի մանկավարժական ընդունակությունները, կարողությունները և հմտությունները.<br>դ.ճիշտ է ներկայացնում ուսուցչի անձի ազդեցությունը դպրոցականների անձի ձևավորման վրա: |
| **ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ** | **«ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆ ԻԲՐԵՎ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆՐԱ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ»** |
| **Մոդուլի դասիչը** | ՈՒՍՈՒՑ 4-09-002 |
| **Մոդուլի նպատակը** | Մոդուլի նպատակն է` սովորողին տալ գիտելիքներ մանկավարժության առարկայի, խնդիրների, հիմնական գործառույթների և հասկացությունների, ինչպես նաև մանկավարժական գիտության և պրակտիկայի փոխադարձ կապի մասին: |
| **Մոդուլի տևողությունը** | 18 ժամ |
| **Մուտքային պահանջները** | Չկան |
| **Մոդուլի գնահատման կարգը** | Մոդուլի կատարողականը գնահատվելու է կատարված աշխատանքի հիման վրա` հաշվի առնելով նաև յուրաքանչյուր արդյունքի կատարման չափանիշների մակարդակի ապահովումը: |
| **Ուսումնառության արդյունք 1** | Իմանալ մանկավարժության առարկան, խնդիրները, գործառույթները: |
| **Կատարման չափանիշներ** | ա.ճիշտ է ներկայացնում մանկավարժության առարկան.<br>բ.ճիշտ է ներկայացնում մանկավարժության խնդիրները.<br>գ.ճիշտ է թվարկում և մեկնաբանում մանկավարժության գործ առույթները: |

| | |
|---|---|
| **Ուսումնառության արդյունք 2** | Իմանալ մանկավարժական գիտության զարգացման փուլերը |
| **Կատարման չափանիշներ** | ա.ճիշտ է ներկայացնում մանկավարժական մտքի զարգացման պատմական բոլոր հիմնական փուլերը.<br>բ.ճիշտ է ներկայացնում հայ մանկավարժական մտքի պատմության բոլոր հիմնական փուլերը.<br>գ.ճիշտ է ներկայացնում մանկավարժության՝ որպես գիտության ձևավորման ընթացքը.<br>դ.ճիշտ է մեկնաբանում կրթական համակարգի բարեփոխումներին միտված տեսությունները (Ջ.Դյուի, Է.Թորնդայք, Մ.Մոնտեսորի, Ա.Բինե): |
| **Ուսումնառության արդյունք 3** | Իմանալ մանկավարժության հիմնական հասկացությունները: |
| **Կատարման չափանիշներ** | ա.ճիշտ է ներկայացնում «Կրթություն» հասկացությունը.<br>բ.ճիշտ է ներկայացնում «Դաստիարակություն» և «Ուսուցում» հասկացությունները և դրանց փոխկապակցվածությունը.<br>գ.ճիշտ է ներկայացնում «Զարգացում» և «Ձևավորում» հասկացությունները.<br>դ.ճիշտ է ներկայացնում տարիքային պարբերությունների իմացության անհրաժեշտությունը ուսուցչի համար: |
| **Ուսումնառության արդյունք 4** | Իմանալ մանկավարժական գիտությունների համակարգի զարգացման արդի ուղղությունները և դրանց դերը ուսումնադաստիարակչական գործընթացում: |
| **Կատարման չափանիշներ** | ա.ճիշտ է ներկայացնում մանկավարժական գիտության և պրակտիկայի փոխադարձ կապը.<br>բ.ճիշտ է ներկայացնում ավանդական մանկավարժության ուղղությունը.<br>գ.ճիշտ է ներկայացնում մանկավարժության հումանիստական ուղղությունը: |
| **ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԴԱՍԱՎԱՆԴՈՂԻ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄ»** | |
| **Մոդուլի դասիչը** | ՈՒՍՈՒՑ 4-09-003 |
| **Մոդուլի նպատակը** | Մոդուլի նպատակն է՝ սովորողին տալ գիտելիքներ մարդկանց հետ հաղորդակցման դերի, մանկավարժական արդյունավետ հաղորդակցման բաղադրիչների վերաբերյալ, ինչպես նաև ձևավորել արդյունավետ հաղորդակցվելու, հաղորդակցային սխալներից խուսափելու, խոչընդոտները ճանաչելու և վերացնելու կարողություն: |
| **Մոդուլի տևողությունը** | 18 ժամ |
| **Մուտքային պահանջները** | Այս մոդուլն ուսումնասիրելու համար սովորողը պետք է ուսումնասիրած լինի ԱՀԱԽ 4-09-001 «Ընդհանուր աշխատանքային գործունեության հմտություններ», ԱՀՀ 4-09-001 «Հաղորդակցման հմտություններ», ՈՒՍՈՒՑ 4-09-001 «Հոգեբանություն», ՈՒՍՈՒՑ 4-09-002 «Մանկավարժությունն իբրև գիտություն և նրա հիմնական հասկացությունները» մոդուլները: |
| **Մոդուլի գնահատման կարգը** | Մոդուլի կատարողականը գնահատվելու է կատարված աշխատանքի հիման վրա՝ հաշվի առնելով նաև յուրաքանչյուր արդյունքի կատարման չափանիշների մակարդակի ապահովումը: |
| **Ուսումնառության արդյունք 1** | Իմանալ հաղորդակցվելու մոդելը: |
| **Կատարման չափանիշներ** | ա.ճիշտ է նկարագրում ուղարկող-ստացող հաղորդակցական մոդելը.<br>բ. ճիշտ է ներկայացնում երկկողմանի հաղորդակցման առավելությունները միակողմանի հաղորդակցման նկատմամբ.<br>գ.ճիշտ է ներկայացնում ոչ խոսքային հաղորդակցման նշանակությունը: |
| **Ուսումնառության արդյունք 2** | Իմանալ հաղորդակցման աքսիոմները և խոչընդոտները: |
| **Կատարման չափանիշներ** | ա.ճիշտ է ներկայացնում հաղորդակցման խոչընդոտները և դրանց նշանակությունը.<br>բ.ճիշտ է ներկայացնում ուղերձի նշանակությունը.<br>գ. ճիշտ է ներկայացնում «մանկավարժական հաղորդակցում» հասկացությունը.<br>դ.տրված իրավիճակում ցուցադրում է հաղորդակցման օրինակներ՝ շրջանցելով խոչընդոտները: |
| **Ուսումնառության արդյունք 3** | Իմանալ և կիրառել առաջնորդության ցանկալի ոճերը: |
| **Կատարման չափանիշներ** | ա.ճիշտ է նկարագրում դասավանդողի ցանկալի ոճերը.<br>բ.ճիշտ է ներկայացնում առաջնորդության ոճերը.<br>գ.ճիշտ է տարբերակում ոճերի հատկանիշները. |

| | |
|---|---|
| | դ.տրված իրավիճակում ցուցադրում է առաջնորդման ճիշտ ոճի կիրառում: |
| **ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ « ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ »** | |
| **Մոդուլի դասիչը** | ՈՒՍՈՒՑ 4-09-004 |
| **Մոդուլի նպատակը** | Մոդուլի նպատակն է՝ սովորողին տալ գիտելիքներ դաստիարակության գործընթացի էության ու կառուցվածքի, մարդու կյանքում դաստիարակության դերի, դաստիարակության՝ որպես անձի սոցիալականացման գործոնի, դաստիարակության հիմնական հասկացությունների, հումանիստական դաստիարակության էության, դաստիարակության կաղապարների և ոճերի, ինչպես նաև անձի դաստիարակության և զարգացման նպատակի, առանձնահատկությունների, խնդիրների ու գործառույթների մասին: |
| **Մոդուլի տևողությունը** | 34 ժամ |
| **Մուտքային պահանջները** | Այս մոդուլն ուսումնասիրելու համար սովորողը պետք է ուսումնասիրած լինի ՈՒՍՈՒՑ 4-09-001 «Յոգեբանություն», ՈՒՍՈՒՑ 4-09-002 «Մանկավարժությունն իբրև գիտություն և նրա հիմնական հասկացությունները» և ՈՒՍՈՒՑ 4-09-003 «Դասավանդողի հաղորդակցման հմտությունների ձևավորում» մոդուլները: |
| **Մոդուլի գնահատման կարգը** | Մոդուլի կատարողականը գնահատվելու է կատարված աշխատանքի հիման վրա՝ հաշվի առնելով նաև յուրաքանչյուր արդյունքի կատարման չափանիշների մակարդակի ապահովումը: |
| **Ուսումնառության արդյունք 1** | Իմանալ դաստիարակության նպատակը, էությունը, օրինաչափությունները և հիմնական հասկացությունները: |
| **Կատարման չափանիշներ** | ա.ճիշտ է նկարագրում դաստիարակության զարգացումը հասարակության զարգացման գործընթացում և դաստիարակության նպատակի ձևավորումը.<br>բ. ճիշտ է ներկայացնում դաստիարակության օրինաչափությունները և դրանց իմացության անհրաժեշտությունը.<br>գ.ճիշտ է ձևակերպում և մեկնաբանում դաստիարակության հիմնական հասկացությունները.<br>դ.ճիշտ է ներկայացնում ինքնադաստիարակության դերն անձի ձևավորման գործընթացում |
| **Ուսումնառության արդյունք 2** | Իմանալ դաստիարակության սկզբունքները և դրանց դերը ամբողջական մանկավարժական գործընթացում: |
| **Կատարման չափանիշներ** | ա.ճիշտ է թվարկում դաստիարակության սկզբունքները.<br>բ.ճիշտ է ներկայացնում դաստիարակության սկզբունքների ձևավորման սոցիալական հիմքերը.<br>գ.ճիշտ է ներկայացնում դաստիարակության սկզբունքների կիրառման հնարավորությունները ամբողջական մանկավարժական գործընթացում: |
| **Ուսումնառության արդյունք 3** | Իմանալ դաստիարակության մեթոդները, դրանց դասակարգումն ու կիրառման հնարավորությունները ամբողջական մանկավարժական գործընթացում: |
| **Կատարման չափանիշներ** | ա.ճիշտ է ներկայացնում դաստիարակության հիմնական հասկացությունները՝ մեթոդ, հնար, միջոց.<br>բ.ճիշտ է ներկայացնում դաստիարակության մեթոդների դասակարգումը.<br>գ.ճիշտ է ներկայացնում մեթոդական խմբերի մեթոդների կիրառումը դասի ընթացքում և դասից դուրս.<br>դ.ճիշտ է ներկայացնում խմբային աշխատանքի, միմյանց կարծիքը լսելու և հանդուրժողականության արմատավորման դերը անձի դաստիարակության գործընթացում: |
| **Ուսումնառության արդյունք 4** | Իմանալ դաստիարակության կաղապարները և կողմերը: |
| **Կատարման չափանիշներ** | ա.ճիշտ է ներկայացնում հումանիստական դաստիարակության նպատակն ու խնդիրները.<br>բ.ճիշտ է ներկայացնում պատմամշակութային դաստիարակության նպատակն ու խնդիրները.<br>գ.ճիշտ է ներկայացնում դաստիարակության բոլոր սահմանված կողմերը: |
| **ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ»** | |
| **Մոդուլի դասիչը** | ՈՒՍՈՒՑ 4-09-005 |
| **Մոդուլի նպատակը** | Մոդուլի նպատակն է՝ սովորողին տալ գիտելիքներ կրթության բովանդակության, կրթակարգի, միջնակարգ դպրոցի պետական չափորոշչի վերաբերյալ: |

| | |
|---|---|
| **Մոդուլի տևողությունը** | 18 ժամ |
| **Մուտքային պահանջները** | Այս մոդուլն ուսումնասիրելու համար սովորողը պետք է ուսումնասիրած լինի ՈՒՍՈՒՑ 4-09-001 «Հոգեբանություն» և ՈՒՍՈՒՑ 4-09-003 «Դասավանդողի հաղորդակցման հմտությունների ձևավորում» մոդուլները |
| **Մոդուլի գնահատման կարգը** | Մոդուլի կատարողականը գնահատվելու է կատարված աշխատանքի հիման վրա՝ հաշվի առնելով նաև յուրաքանչյուր արդյունքի կատարման չափանիշների մակարդակի ապահովումը |
| **Ուսումնառության արդյունք 1** | Իմանալ կրթության բովանդակության բաղադրիչները |
| **Կատարման չափանիշներ** | ա.ճիշտ է ներկայացնում գիտելիք, կարողություն, հմտություն հասկացությունները.<br>բ.ճիշտ է ներկայացնում դասագրքերին և ուսումնական ձեռնարկներին ներկայացվող պահանջները.<br>գ.ճիշտ է ներկայացնում հիմնական և ավագ դպրոցների ուսումնական պլանի բաղադրիչները.<br>դ.ճիշտ է ներկայացնում ինտեգրված առարկաների զուգակցումը: |
| **Ուսումնառության արդյունք 2** | Իմանալ ՀՀ կրթակարգի հիմնադրույթները և դրանց կիրառման հնարավորությունները ուսումնական գործընթացում |
| **Կատարման չափանիշներ** | ա.ճիշտ է ներկայացնում ՀՀ կրթակարգի հիմնական դրույթները.<br>բ.ճիշտ է ներկայացնում ուսումնական գործընթացում ՀՀ կրթակարգի կիրառման հնարավորությունները.<br>գ.ճիշտ է ներկայացնում հանրակրթության կազմակերպման սկզբունքները և բարեփոխման ռազմավարությունը: |
| **Ուսումնառության արդյունք 3** | Իմանալ միջնակարգ կրթության պետական չափորոշչի կառուցվածքը և գործառույթները: |
| **Կատարման չափանիշներ** | ա.ճիշտ է ներկայացնում միջնակարգ կրթության պետական չափորոշչի կառուցվածքը և գործառույթները.<br>բ.ճիշտ է ներկայացնում սովորողների յուրացման համար նախատեսված գիտելիքների մակարդակները՝ ելնելով ուսուցման տարբեր աստիճանների նպատակներից.<br>գ.ճիշտ է ներկայացնում կարողությունների և հմտությունների ամբողջությունը (ճանաչողական, հաղորդակցական, համագործակցային, ինքնուրույն գործունեության և ստեղծագործական): |
| **ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ»** | |
| **Մոդուլի դասիչը** | ՈՒՍՈՒՑ 4-09-006 |
| **Մոդուլի նպատակը** | Մոդուլի նպատակն է՝ սովորողին տալ գիտելիքներ դիդակտիկայի առարկայի, հիմնական հասկացությունների, խնդիրների ու գործառույթների, ուսուցման գործընթացի էության, նպատակների ու խնդիրների, ուսուցման մեթոդների դասակարգման և ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաների մասին: |
| **Մոդուլի տևողությունը** | 34 ժամ |
| **Մուտքային պահանջները** | Այս մոդուլն ուսումնասիրելու համար սովորողը պետք է ուսումնասիրած լինի ՈՒՍՈՒՑ 4-09-001 «Հոգեբանություն», ՈՒՍՈՒՑ 4-09-002 «Մանկավարժությունն իբրև գիտություն և նրա հիմնական հասկացությունները», ՈՒՍՈՒՑ 4-09-003 «Դասավանդողի հաղորդակցման հմտությունների ձևավորում», ՈՒՍՈՒՑ 4-09-004 «Դաստիարակության գործընթաց» և ՈՒՍՈՒՑ 4-09-005 «Կրթության բովանդակություն» մոդուլները: |
| **Մոդուլի գնահատման կարգը** | Մոդուլի կատարողականը գնահատվելու է կատարված աշխատանքի հիման վրա՝ հաշվի առնելով նաև յուրաքանչյուր արդյունքի կատարման չափանիշների մակարդակի ապահովումը: |
| **Ուսումնառության արդյունք 1** | Իմանալ դիդակտիկայի առարկան, դրա հիմնական հասկացությունները, խնդիրները |
| **Կատարման չափանիշներ** | ա. ճիշտ է ներկայացնում դիդակտիկայի զարգացումը և հատուկ հասկացությունները.<br>բ. ճիշտ է ներկայացնում դիդակտիկան՝ որպես ուսուցման տեսություն.<br>գ. ճիշտ է ներկայացնում դիդակտիկայի կապը մասնավոր դիդակտիկաների հետ.<br>դ.ճիշտ է ներկայացնում արդի դիդակտիկայի հիմնախնդիրները: |
| **Ուսումնառության արդյունք 2** | Իմանալ ուսուցման գործընթացի էությունը, նպատակներն ու խնդիրները |
| **Կատարման չափանիշներ** | ա. ճիշտ է ներկայացնում ուսուցման գործընթացի կառուցվածքը և գործառույթները.<br>բ. ճիշտ է ներկայացնում ուսուցման գործընթացի կրթական, դաստիարակչական և զարգացնող գործառույթների |

| | |
|---|---|
| | միասնությունը.<br>գ. ճիշտ է ներկայացնում ուսուցում և ուսումնառություն հասկացությունները.<br>դ. ճիշտ է ներկայացնում ուսումնառության տեսակները.<br>ե. ճիշտ է ներկայացնում ուսումնառության վրա ազդող գործոնները.<br>զ.ճիշտ է ներկայացնում մանկավարժահոգեբանական ուսումնական տեսությունները: |
| **Ուսումնառության արդյունք 3** | Իմանալ ուսուցման սկզբունքները |
| **Կատարման չափանիշներ** | ա. ճիշտ է թվարկում ուսուցման հիմնական սկզբունքները.<br>բ. ճիշտ է ներկայացնում ուսուցման ավանդական և արդի սկզբունքները.<br>գ. ճիշտ է ներկայացնում ուսուցման սկզբունքների փոխկապակցվածությունը.<br>դ. ճիշտ է ներկայացնում ուսուցման և դաստիարակության սկզբունքների ընդհանրությունները |
| **Ուսումնառության արդյունք 4** | Իմանալ ուսուցման մեթոդների դասակարգումը և ուսուցման արդի տեխնոլոգիաները |
| **Կատարման չափանիշներ** | ա.ճիշտ է ներկայացնում ուսուցման մեթոդների պատմական զարգացումը.<br>բ.ճիշտ է ներկայացնում ուսուցման **մեթոդներ, միջոցներ, հնարքներ, կանոններ** հասկացությունները.<br>գ.ճիշտ է ներկայացնում ուսուցման ավանդական և ժամանակակից մեթոդները.<br>դ.ճիշտ է թվարկում ուսուցման մեթոդների դասակարգման սկզբունքները.<br>ե.ճիշտ է տարորոշում ուսուցման մեթոդների ընտրության օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառները.<br>զ.ճիշտ է ընտրում ուսուցման մեթոդը՝ ելնելով առաջադրված դասանպատակից.<br>է.ճիշտ է ներկայացնում ուսուցման ժամանակակից մանկավարժական տեխնոլոգիաները.<br>ը.ճիշտ է ներկայացնում ուսուցման ժամանակ դրդապատճառային տեխնիկաների կիրառումը |
| **ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԴՐԴԱՊԱՏՃԱՌԱՅԻՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ ԿԻՐԱՌՈՒՄ»** | |
| **Մոդուլի դասիչը** | ՈՒՍՈՒՑ 4-09-007 |
| **Մոդուլի նպատակը** | Մոդուլի նպատակն է սովորողին տալ գիտելիքներ ուսումնական մասնագիտական գործունեության մեջ դրդապատճառների դերի, ուսումնառության վրա դրդապատճառների դրական և բացասական ուժեղացման ազդեցության վերաբերյալ, ձևավորել գործնականում օժանդակություն ցուցաբերելու և դրդապատճառային տեխնիկա կիրառելու, տարբեր ուսումնական իրավիճակներում դրդապատճառային և օժանդակության ծագած գաղափարները մշակելու և դրանց հավաքածու կազմելու կարողություն |
| **Մոդուլի տևողությունը** | 18 ժամ |
| **Մուտքային պահանջները** | Այս մոդուլն ուսումնասիրելու համար սովորողը պետք է ուսումնասիրած լինի ՈՒՍՈՒՑ 4-09-001 «Հոգեբանություն», ՈՒՍՈՒՑ 4-09-002 «Մանկավարժությունն իբրև գիտություն և նրա հիմնական հասկացությունները» և ՈՒՍՈՒՑ 4-09-003 «Դասավանդողի հաղորդակցման հմտությունների ձևավորում» մոդուլները: |
| **Մոդուլի գնահատման կարգը** | Մոդուլի կատարողականը գնահատվելու է կատարված աշխատանքի հիման վրա՝ հաշվի առնելով նաև յուրաքանչյուր արդյունքի կատարման չափանիշների մակարդակի ապահովումը: |
| **Ուսումնառության արդյունք 1** | Իմանալ ուսումնառության և դրդապատճառների միջև կապը և տարբերել դրդապատճառների դրական և բացասական ուժեղացման ազդեցությունը |
| **Կատարման չափանիշներ** | ա.ճիշտ է ներկայացնում դրդապատճառի դերն ուսումնառություն գործընթացում.<br>բ.ճիշտ է ներկայացնում դրդապատճառների դրական և բացասական ուժեղացման ազդեցությունը.<br>գ.ճիշտ է ներկայացնում դրդապատճառի կախվածությունը անձի պահանջմունքների տեսակից և անձնային առանձնահատկություններից: |
| **Ուսումնառության արդյունք 2** | Խթանել տարբեր ուսումնական իրավիճակներում դրական դրդապատճառների ձևավորումը և մշակել օժանդակության գաղափարների հավաքածու: |

| | |
|---|---|
| **Կատարման չափանիշներ** | ա. ճիշտ պայմաններ է ստեղծում դրական դրդապատճառի ձևավորման համար.<br>բ. ճիշտ է ելնում արդեն առկա դրդապատճառներից.<br>գ. ճիշտ և հետաքրքիր է ներկայացնում ուսումնառության առարկան.<br>դ. վերացնում է կաշկանդվածությունը և աշակերտներին ներշնչում է վստահություն որոշումներ կայացնելու գործում.<br>ե. դյուրինացնում է ուսումնառության նյութի մտովի ընկալումը՝ թույլատրելով լուծման փորձարկումը.<br>զ. առաջադրված իրավիճակում ճիշտ է նշում դրդապատճառների դրական և բացասական ուժեղացման ազդեցությունը: |
| **ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄ»** | |
| Մոդուլի դասիչը | ՈՒՍՈՒՑ 4-09-008 |
| Մոդուլի նպատակը | Մոդուլի նպատակն է սովորողին տալ դասավանդմանն ու ուսումնառությանն աջակցելու նպատակով տեսողական և այլ օժանդակ միջոցների գործնական կիրառման կարողությունությունը: |
| Մոդուլի տևողությունը | 18 ժամ |
| Մուտքային պահանջները | Այս մոդուլն ուսումնասիրելու համար սովորողը պետք է ուսումնասիրած լինի ՈՒՍՈՒՑ 4-09-002 «Մանկավարժությունն իբրև գիտություն և նրա հիմնական հասկացությունները», ՈՒՍՈՒՑ 4-09-003 «Դասավանդողի հաղորդակցման հմտությունների ձևավորում», ՈՒՍՈՒՑ 4-09-006 «Ուսուցման գործընթաց» մոդուլները: |
| Մոդուլի գնահատման կարգը | Մոդուլի կատարողականը գնահատվելու է կատարված աշխատանքի հիման վրա՝ հաշվի առնելով նաև յուրաքանչյուր արդյունքի կատարման չափանիշների մակարդակի ապահովումը: |
| Ուսումնառության արդյունք 1 | Իմանալ ուսումնառության ժամանակ օգտագործվող օժանդակ միջոցներ: |
| Կատարման չափանիշներ | ա. ճիշտ է մեկնաբանում օժանդակ միջոցները և դրանց տեսողականացման նշանակությունը,<br>բ. ճիշտ է բացատրում օժանդակ միջոցների կիրառման անհրաժեշտությունը ուսուցման և ուսումնառության գործընթացում: |
| Ուսումնառության արդյունք 2 | Իմանալ օժանդակ միջոցների կիրառման նշանակությունն ուսանողների ուսումնառությանն աջակցելու հարցում: |
| Կատարման չափանիշներ | ա.ճիշտ է թվարկում տեսողականացման միջոցները և բացատրում դրանց ազդեցությունը ուսումնառության վրա,<br>բ. ճիշտ է ներկայացնում տվյալների տեսողականացման ընդհանուր սկզբունքները: |
| Ուսումնառության արդյունք 3 | Ընտրել մատչելի, նպատակահարմար օժանդակ միջոցները և օգտագործել դրանք կոնկրետ ուսումնառության գործունեության համար: |
| Կատարման չափանիշներ | ա. ճիշտ է ընտրում և կիրառում մատչելի, նպատակահարմար, օժանդակ միջոցներն առաջադրված ուսումնական գործունեության համար.<br>բ.ճիշտ է ցուցադրում առաջարկված օժանդակ պարագաներից 2-ի կիրառումը: |
| **ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅՈՒՆ»** | |
| **Մոդուլի դասիչը** | ՈՒՍՈՒՑ 4-09-009 |
| **Մոդուլի նպատակը** | Մոդուլի նպատակն է ներկայացնել համագործակցային ուսումնառության դերը անհատի անհրաժեշտ գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորման գործում և դրա կիրառման մի քանի մոդելներ: |
| **Մոդուլի տևողությունը** | 20 ժամ |
| **Մուտքային պահանջները** | Այս մոդուլն ուսումնասիրելու համար սովորողը պետք է ուսումնասիրած լինի ՈՒՍՈՒՑ 4-09-001 «Հոգեբանություն», ՈՒՍՈՒՑ 4-09-002 «Մանկավարժությունն իբրև գիտություն և նրա հիմնական հասկացությունները», ՈՒՍՈՒՑ 4-09-003 «Դասավանդողի հաղորդակցման հմտությունների ձևավորում», ՈՒՍՈՒՑ 4-09-004 «Դաստիարակության գործընթաց» մոդուլները: |
| **Մոդուլի գնահատման կարգը** | Մոդուլի կատարողականը գնահատվելու է կատարված աշխատանքի հիման վրա՝ հաշվի առնելով նաև յուրաքանչյուր արդյունքի կատարման չափանիշների մակարդակի ապահովումը: |
| **Ուսումնառության արդյունք 1** | Իմանալ համագործակցային ուսումնառության տարրերը: |
| **Կատարման չափանիշներ** | ա.ճիշտ է ներկայացնում դրական փոխկապակցվածությունը.<br>բ.գիտի դեմ առ դեմ խթանող փոխազդեցությունը. |

| | |
|---|---|
| | գ.ճիշտ է ներկայացնում համագործակցային խմբերի տեսակները: |
| **Ուսումնառության արդյունք 2** | Կազմակերպել համագործակցային ուսումնառություն: |
| **Մուտքային պահանջները** | հանրակրթական գիտելիքներ |
| **Մոդուլի գնահատման կարգը** | Մոդուլի կատարողականը գնահատվելու է կատարած աշխատանքի հիման վրա` հաշվի առնելով նաև յուրաքանչյուր արդյունքի կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովում: |
| **Ուսումնառության արդյունք 1** | Բնութագրել 8-րդ դարի արտասահմանյան գրականությունը: |
| **Կատարման չափանիշներ** | ա. ներկայացնում է ականավոր ստեղծագործողներին, թվարկում նրանց առավել հայտնի ստեղծագործությունները.<br>բ. բնութագրում է գրական հերոսներին առաջարկվող ստեղծագործության մեջ և թվարկում գեղարվեստական արժանիքները: |
| **Ուսումնառության արդյունք 2** | Ներկայացնել դասական գրողների ստեղծագործությունները: |
| **Կատարման չափանիշներ** | ա. ներկայացնում է դասական գրողների ստեղծագործությունները.<br>բ. ճիշտ է բացահայտում առաջադրված ստեղծագործությունների գեղարվեստական արժանիքները.<br>գ. բնութագրում է առաջադրված կերպարները: |
| **Ուսումնառության արդյունք 3** | Ներկայացնել 19-րդ դարում ռոմանտիզմի արտահայտությունը արտասահմանյան գրականության մեջ: |
| **Կատարման չափանիշներ** | ա. ներկայացնում է ռոմանտիզմի հետևորդ ստեղծագործողներին,<br>բ. բացահայտում է նրանց ստեղծագործությունների կարևորագույն գծերը /կյանքը իդեալին համապատասխան փոխելու ձգտումը/: |
| **Ուսումնառության արդյունք 4** | Բնութագրել ռոմանտիզմից անցումը ռեալիզմին: |
| **Կատարման չափանիշներ** | ա. ճիշտ է ներկայացնում ռեալիզմի մուտքը արտասահմանյան գրականության մեջ.<br>բ. բնութագրում է ռեալիստ ստեղծագործողների երկերը: |
| **Ուսումնառության արդյունք 5** | Ներկայացնել 20-րդ դարի դասական գործիչներին և նրանց ստեղծագործությունները: |
| **Կատարման չափանիշներ** | ա. բնութագրում է 20-րդ դարի արտասահմանյան գրականությունը.<br>բ. նշում է պատմական ժամանակաշրջանի կարևոր իրադարձությունների ազդեցությունը գրականության վրա.<br>. վերլուծում է առաջադրված երկերը: |
| **ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ « ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ. ՈՃԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ»** | |
| **Մոդուլի դասիչը** | ՅՕԼԴ 04– 09- 004 |
| **Մոդուլի նպատակը** | Մոդուլը նախատեսված է այն անձանց համար, ովքեր աշխատելու են ՅՅ հիմնական և ավագ դպրոցում որպես հայոց լեզվի և գրականության ուսուցիչ: Այս մոդուլը ներկայացնում է գիտական, հրապարակախոսական, վարչագործարարական և առօրյա-կենցաղային ոճերը: |
| **Մոդուլի տևողությունը** | 34 ժամ |
| **Մուտքային պահանջները** | հիմնական դպրոցի գիտելիքները: |
| **Մոդուլի գնահատման կարգը** | Մոդուլի կատարողականը գնահատվելու է կատարած աշխատանքի հիման վրա` հաշվի առնելով նաև յուրաքանչյուր արդյունքի կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովում: |
| **Ուսումնառության արդյունք 1** | Իմանալ գիտական ոճը: |
| **Կատարման չափանիշներ** | ա. ներկայացնում է գիտական ոճը.<br>բ. ներկայացնում է գիտական ենթաոճերը.<br>գ. կազմում է նյութեր գիտական ոճով.<br>դ. զանազանում է գիտական ենթաոճերը տեքստում.<br>ե. գիտական ոճի նյութեր կազմելիս պահպանում է գիտական ոճի 10 հատկանիշները: |
| **Ուսումնառության արդյունք 2** | Իմանալ հրապարակախոսական ոճը: |
| **Կատարման չափանիշներ** | ա. ներկայացնում է հրապարակախոսական ոճը.<br>բ. ներկայացնում է հրապարակախոսական ոճի ենթատեսակները, նախապատրաստումը և հրապարակային խոսքի |

| | |
|---|---|
| | ներգործման հիմնական պայմանները.<br>գ. գրում է հրապարակախոսական ոճի նյութեր ՝ պահպանելով խոսքի ներգործման հիմնական պայմանները<br>դ. առանձնացնում է հրապարակախոսական ոճը տարբեր ոճերի նյութերից.<br>ե. կազմում է հրապարակախոսական ոճի նյութեր՝ պահպանելով հրապարակային խոսք կառուցելու սխեման: |
| **Ուսումնառության արդյունք 3** | Իմանալ վարչագործարարական ոճը: |
| **Կատարման չափանիշներ** | ա. ներկայացնում է վարչագործարարական ոճը.<br>բ. ներկայացնում է վարչագործարարական ոճի ենթաոճերը.<br>գ. առանձնացնում է այդ ոճով գրած նյութերը այլ ոճերով գրված նյութերից.<br>դ. կազմում է վարչագործարարական բնույթի նյութեր՝ պահպանելով այդ ոճի 10 հիմնական հատկանիշները: |
| **Ուսումնառության արդյունք 4** | Իմանալ իմանա առօրյա կենցաղային ոճը |
| **Կատարման չափանիշներ** | ա. ներակայացնում է առօրյա կենցաղային ոճը.<br>բ. ներակայացնում է առօրյա-կենցաղային ոճի բաղադրիչները.<br>գ. առանձնացնում է այդ ոճով գրած նյութերը այլ ոճերով գրված նյութերից: |
| **ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԵՐԿՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ»** | |
| **Մոդուլի դասիչը** | ՅՕԼԴ 04 09 005 |
| **Մոդուլի նպատակը** | Մոդուլի նպատակն է՝ սովորողին տալ գիտելիքներ Հայաստանի աշխարհագրական դիրքի, պատմության, մշակույթի, երկրի քաղաքական և տնտեսական կապերի կարևորության, տվյալ երկրի պատմական վայրերի և նշանավոր մարդկանց կյանքի և գործունեության մասին |
| **Մոդուլի տևողությունը** | 54 ժամ |
| **Մուտքային պահանջները** | Այս մոդուլն ուսումնասիրելու համար սովորողը պետք է դպրոցում լիարժեք տիրապետի «Աշխարհագրություն» և «Պատմություն» առարկաները՝ միջնակարգ դպրոցի ծրագրերի ծավալներով:Այս մոդուլն ուսումնասիրելու համար սովորողը պետք է ուսումնասիրած լինի ԱՅԱԽ 4-09-001 «Ընդհանուր աշխատանքային գործունեության հմտություններ», ՈՒՍՈՒՑ 4-09-003 «Դասավանդողի հաղորդակցման հմտությունների ձևավորում» մոդուլները: |
| **Մոդուլի գնահատման կարգը** | Մոդուլի կատարողականը գնահատվելու է կատարած աշխատանքի հիման վրա՝ հաշվի առնելով նաև յուրաքանչյուր արդյունքի կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումը: |
| **Ուսումնառության արդյունք 1** | Իմանալ Հայաստանի երկրի, աշխարհագրության, պատմության և մշակույթի մասին: |
| **Կատարման չափանիշներ** | ա. ճիշտ է ցույց տալիս Հայաստանը քարտեզի վրա.<br>բ. ճիշտ է նկարագրում երկրի բնակլիմայական պայմանները.<br>գ. ճիշտ է մեկնաբանում երկրի պատմական դեպքերը.<br>դ. ճիշտ է ներկայացնում երկրի մշակույթը: |
| **Ուսումնառության արդյունք 2** | Իմանալ Հայաստանի պատմական, քաղաքական, տնտեսական, մշակութային և կրթական կապերի մասին: |
| **Կատարման չափանիշներ** | ա. ճիշտ է ներկայացնում մեր երկրի մշակութային կապերը.<br>բ. ճիշտ է պատկերացնում երկրի կրթական համակարգը.<br>գ. ներկայացնում է Հայաստանի քաղաքական և տնտեսական կապերը: |
| **Ուսումնառության արդյունք 3** | Իմանալ մեր երկրի պատմական վայրերի, նշանավոր մարդկանց անուններ, կարդացած լինի նրանց հայտնի ստեղծագործություններից մի քանիսը: |
| **Կատարման չափանիշներ** | ա. ճիշտ է թվարկում պատմական վայրերի անունները.<br>բ. թվարկում է նշանավոր մարդկանց անունները.<br>գ. ճիշտ է թվարկում աշխարհահռչակ գրողների անուններն ու ստեղծագործությունները.<br>դ. ճիշտ է մեկնաբանում աշխարհահռչակ գրողների ստեղծագործությունները. |

| | |
|---|---|
| | ե. քննադատում, գնահատում է աշխարհահռչակ գրողների գաղափարները. |
| ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈՒՂՂԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ» | |
| Մոդուլի դասիչը | ՀՕԼԴ 04- 09-006 |
| Մոդուլի նպատակը | Մոդուլը մշակվել է հայերենի ուղղագրության և ուղղախոսության կանոնները տիրապետելու, ճիշտ գրելու և ճիշտ խոսելու կարողություններ և հմտությունները ուսուցանելու նպատակով: |
| Մոդուլի տևողությունը | 62 ժամ |
| Մուտքային պահանջները | Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է նախնական գիտելիքներ ունենա հայերենի հնչյունական համակարգի մասին, իմանա հայերենի այբուբենի առանձնահատկությունները և նրա հետագա փոփոխությունները: |
| Մոդուլի գնահատման կարգը | Մոդուլի կատարողականը գնահատվելու է կատարած աշխատանքի հիման վրա՝ հաշվի առնելով նաև յուրաքանչյուր արդյունքի կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումը: |
| Ուսումնառության արդյունք 1 | Իմանալ հայերենի ձայնավորների ուղղագրության և ուղղախոսության կանոնները: |
| Կատարման չափանիշներ | ա. կատարում է **է-ե** ձայնավորների ուղղագրության և ուղղախոսության վերաբերյալ առաջադրանքներ, կազմել և վերլուծել բառակազմական պատկեր.<br>բ. կատարում է **օ-ո** ձայնավորների ուղղագրության և ուղղախոսության վերաբերյալ առաջադրանքներ, ունի բառակազմական պատկեր կազմելու և վերլուծելու հմտություններ.<br>գ. կատարում է *ը* ձայնավորի ուղղագրության և ուղղախոսության վերաբերյալ առաջադրանքներ, ունի բառակազմական պատկեր կազմելու և վերլուծելու հմտություններ.<br>դ. գրում է ձայնավորների ուղղագրության վերաբերյալ անսխալ թելադրություններ, թեստային աշխատանքներ, կազմում է ուղղագրական դժվարություն ներկայացնող բառերով հագեցած տեքստեր: |
| Ուսումնառության արդյունք 2 | Իմանալ հայերենի երկհնչյունների ուղղագրության և ուղղախոսության կանոնները: |
| Կատարման չափանիշներ | ա. տարբերակում է հայերենի երկհնչյունները և երկձայնավորները.<br>բ. կատարում է *յա-յե-յո* երկհնչյունների ուղղագրության վերաբերյալ առաջադրանքներ, ճիշտ գրել և արտասանել անձնանունները ու տեղանունները.<br>գ. կատարում է *յ* ձայնանակապի ուղղագրության վերաբերյալ առաջադրանքներ.<br>դ. կազմում է տրված բառերի բառակազմական պատկերը, անսխալ գրում թելադրություններ՝ երկհնչյունների ու ձայնակապի ուղղագրության վերաբերյալ: |
| Ուսումնառության արդյունք 3 | Գիտի բաղաձայնների ուղղագրության ու ուղղախոսության կանոնները: |
| Կատարման չափանիշներ | ա. կատարում է եռաշարք բաղաձայնների **(բ-պ-փ, գ-կ-ք, դ-տ-թ, ջ-ճ-չ,ձ-ծ-ց)** ուղղագրության և ուղղախոսության վերաբերյալ առաջադրանքներ.<br>բ. կատարում է երկշարք բաղաձայնների **(զ-ս, ժ-շ, վ-ֆ, ղ-խ,, ն-մ, ր-ռ)** ուղղագրության և ուղղախոսության վերաբերյալ առաջադրանքներ.<br>գ. կատարում է *եվ (և)* ուղղագրության և ուղղախոսության վերաբերյալ առաջադրանքներ.<br>դ. կատարում է կրկնակ բաղաձայնների ուղղագրության վերաբերյալ առաջադրանքներ.<br>ե. գրում է բաղաձայնների ուղղագրության վերաբերյալ անսխալ թելադրություններ, կազմել ուղղագրական դժվարություն ներկայացնող բառերով հագեցած տեքստեր: |
| ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀՆՉՅՈՒՆԱԲԱՆԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ» | |
| Մոդուլի դասիչը | ՀՕԼԴ 04 -09- 007 |
| Մոդուլի նպատակը | Մոդուլը մշակվել է հնչյունաբանության թեմայով գիտելիքները խորացնելու միջոցով գործնական կարողությունները կատարելագործելու նպատակով: |
| Մոդուլի տևողությունը | 34 ժամ |

| | |
|---|---|
| **Մուտքային պահանջները** | Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է յուրացրած լինի «Հայոց լեզվի ուղղագրություն և ուղղախոսություն» մոդուլը: |
| **Մոդուլի գնահատման կարգը** | Մոդուլի կատարողականը գնահատվելու է կատարած աշխատանքի հիման վրա` հաշվի առնելով նաև յուրաքանչյուր արդյունքի կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումը: |
| **Ուսումնառության արդյունք 1** | Իմանալ հայոց լեզվի ծագումն ու զարգացման փուլերը ( գրաբար,միջին հայերեն, աշխարհաբար` արևելահայ եվ արևմտահայ), բարբառների հիմնական առանձնահատկությունները: |
| **Կատարման չափանիշներ** | ա. տարբերում է հայերենի ցեղակից և ոչ ցեղակից լեզուները.<br>բ. զանազանում է գրաբարի եվ արևելահայերենի և արևմտահայերենի, միջին հայերենի հնչյունական հիմնական տարբերությունները.<br>գ. թվարկում է բարբառների հիմնական խմբերը, նշել հիմնական առանձնահատկությունները: |
| **Ուսումնառության արդյունք 2** | Դասակարգել ձայնավոր եվ բաղաձայն հնչյունները, կատարել հնչյունաբանական վերլուծություն: |
| **Կատարման չափանիշներ** | ա. բնութագրում է ձայնավորները` ըստ լեզվի բարձրացման դիրքի եվ ըստ շարքի.<br>բ. դասակարգում է բաղաձայնները` ըստ ձայնի եվ աղմուկի պարունակության, ըստ արտաբերման տեղի, ըստ արտաբերման եղանակի, ըստ կազմության.<br>գ. կատարում է հնչյունաբանական վերլուծություն: |
| **Ուսումնառության արդյունք 3** | Վանկատել տրված բառերը: |
| **Կատարման չափանիշներ** | ա. կարողանում է հնարավոր բոլոր ձևերով վանկատել բառերը.<br>բ. կարողանում է անսխալ տողադարձել ցանկացած բառ: |
| **Ուսումնառության արդյունք 4** | Իմանալ հնչյունափոխության տեսակները, հայերենի շեշտադրության կանոնները եվ շեշտից կախված հնչյունափոխության օրինաչափությունները: |
| **Կատարման չափանիշներ** | ա. կարողանում է տարբերակել բառային եվ տրամաբանական շեշտերը` բերելով նաև բառերի օրինակներ, որոնցում շեշտը չի դրվում վերջին վանկի վրա.<br>բ. տարբերակում է արմատի և ածանցի հնչյունափոխված և անհնչյունափոխ ձևերը` մատնանշելով **է/ե/,ի,ու** ձայնավորների, **յա,յու,ույ** երկհնչյունների հնչյունափոխությունը.<br>գ) տարբերակում է փոխազդեցական հնչյունափոխության տեսակները.<br>դ) անսխալ կարդում է գրաբարյան տեքստեր` ելնելով պատմական հնչյունափոխության վերաբերյալ տեսական գիտելիքներից: |
| **ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ « ՀՆՉՅՈՒՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈՒՂՂԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ »** | |
| **Մոդուլի դասիչը** | ՀՕԼԴ 04 -09 -008 |
| **Մոդուլի նպատակը** | Մոդուլը մշակվել է հնչյունափոխության հետ կապված ուղղագրության և ուղղախոսության կանոններին տիրապետելու, ճիշտ գրելու, հնչյունափոխված արմատը գտնելու կարողություններ և հմտություններ զարգացնելու համար: |
| **Մոդուլի տևողությունը** | 34 ժամ |
| **Մուտքային պահանջները** | Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է ուսումնասիրած լինի«Հայոց լեզվի ուղղագրություն և ուղղախոսություն», «Հնչյունաբանական վերլուծություններ կատարելու հմտություններ» մոդուլները: |
| **Մոդուլի գնահատման կարգը** | Մոդուլի կատարողականը գնահատվելու է կատարած աշխատանքի հիման վրա` հաշվի առնելով նաև յուրաքանչյուր արդյունքի կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումը: |
| **Ուսումնառության արդյունք 1** | Բացատրել ձայնավորների հնչյունափոխության հետ կապված ուղղագրությունը և ուղղախոսությունը: |
| **Կատարման չափանիշներ** | ա. ներկայացնում է շեշտից կախված հնչյունափոխության ուղղախոսական արժեքը.<br>բ. գտնում է բառի (արմատի) հնչյունափոխված և անհնչյունափոխ ձևերը` նշելով հնչյունափոխությունը.<br>գ. կազմում է նոր բառեր առաջադրված բառերից, որոնցում հնչյունափոխվում են *է*, **ու, ի** ձայնավորները |

| | |
|---|---|
| | դ. կազմում է այնպիսի բառ կամ բառաձև գաղտնավանկ ունեցող տրված բառերից ,որոնցում **ը** ձայնավորը սղվում է.<br>ե. դուրս է գրում տրված տեքստից այն բառերը,որոնցում կա հնչյունափոխություն կամ սղում՝ նշելով հնչյունափոխությունը.<br>զ. կատարում է բառակազմական վերլուծություն՝ վերականգնելով բառի բաղադրիչները, ըստ այդմ էլ՝ հնչյունափոխված կամ անհնչյունափոխ արմատը.<br>է. գտնում է այն բառը, որում ձայնավորը հնչյունափոխվել է բաղաձայնի տրված բառաշարքում |
| **Ուսումնառության արդյունք 2** | Մեկնաբանել յա, յու,ույ երկհնչյունների հնչյունափոխության հետ կապված ուղղագրությունը և ուղղախոսությունը: |
| **Կատարման չափանիշներ** | ա. վերականգնում է տրված բառերի հնչյունափոխված հիմքերի անհնչյունափոխ ձևերը՝ նշելով հնչյունափոխությունները.<br>բ. կազմում է այնպիսի բառեր, որոնցում տրված բառերը և արմատները մի դեպքում չենթարկվեն, մյուսում ենթարկվեն հնչյունափոխության (լույս-լուսավոր-վերջալույս).<br>գ. գտնում է արմատի և ածանցի հնչյունափոխությունը, բառում կատարված մեկից ավելի հնչյունափոխությունները.<br>դ. գտնում է այն բառերը, որոնցում երկհնչյունների սղում կա տրված բառաշարքերում.<br>ե.կատարում է երկհնչյունների ուղղագրության վերաբերյալ առաջադրանքներ, անսխալ գրել ուղղագրական դժվարություն ներկայացնող բառերով հագեցած թելադրություններ: |
| **Ուսումնառության արդյունք 3** | Պարզաբանել փոխազդեցական հնչյունափոխության հետ կապված ուղղագրության և ուղղախոսության կանոնները: |
| **Կատարման չափանիշներ** | ա. տարբերակում է փոխազդեցական հնչյունափոխության տեսակները և օրինակներ է բերում.<br>բ. գտնում է հնչյունի անկում կամ հավելում ունեցող բառերը, վերականգնել սկզբնաբառը, համեմատել գրական ձևերի հետ տրված տեքստում.<br>գ. բերում է դրափոխության օրինակներ, համեմատել նախնական ձևերը գրական ձևերի հետ.<br>դ. բերում է առնմանության և տարնմանության օրինակներ, համեմատում նախնական ձևերը գրական ձևերի հետ՝բացատրելով հնչյունների փոխազդեցությունը.<br>ե. բերում է հնչյունների պարզեցման և բարդացման օրինակներ՝ բացատրելով բառի ուղղագրությունը և ուղղախոսությունը (վաքսուն>վացուն (ք+ս=ց) սեպուհ + ական > սեպհական > սեփական (պ+հ=փ) և այլն).<br>զ. կարողանում է բերել հնչյունների ամփոփման և կրճատման, համաբանական հնչյունափոխության օրինակներ՝բացատրելով վանկերից կամ հնչյունակապակցություններից մեկի դուրսմղման հետևանքով առաջացած ուղղագրությունը: |
| **Ուսումնառության արդյունք 4** | Իմանալ պատմական հնչյունափոխության հետ կապված ուղղագրություն և ուղղախոսություն: |
| **Կատարման չափանիշներ** | ա. բերում է օրինակներ, որոնցում գրաբարյան բառասկզբի *յ* հնչյունը կարդացվում է **հ**, իսկ բառավերջի **յ**-*ն* ընկել է.<br>բ. բերում է օրինակներ, որոնցում ընկել են բառավերջի **ի** և **ն** վերջնահնչյունները, բացատրում է արդի հայերենում դրանց վերականգնելու հետևանքով առաջացած ուղղագրությունը.<br>գ.բերում է օրինակներ, որոնցում գրաբարյան պատճառական **-ուցան** ածանցը արդի հայերենում դարձել **է -ց-, -ցն-.**<br>. բացատրում է հնչյունների միացման և պարզեցման հետևանքով առաջացած հնչյունափոխությունը, բերել օրինակներ: |
| **ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ « ԲԱՌԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ »** | |
| **Մոդուլի դասիչը** | ՀՕԼԴ - 04 09 -009 |
| **Մոդուլի նպատակը** | Մոդուլը մշակվել է բառագիտությունից տեսական և գործնական գիտելիքներ հաղորդելու, դրանք կիրառելու հմտություններ զարգացնելու նպատակով: |
| **Մոդուլի տևողությունը** | 68 ժամ |
| **Մուտքային պահանջները** | Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է նախնական գիտելիքներ ունենա բառագիտությունից, յուրացրած լինի «Հայոց լեզվի ուղղագրության և ուղղախոսության հմտություններ», «Հնչյունաբանական վերլուծություններ կատարելու հմտություններ» մոդուլները: |

| | |
|---|---|
| **Մոդուլի գնահատման կարգը** | Մոդուլի կատարողականը գնահատվելու է կատարած աշխատանքի հիման վրա` հաշվի առնելով նաև յուրաքանչյուր արդյունքի կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումը: |
| **Ուսումնառության արդյունք 1** | Բնորոշել բառը, բառապաշարը, լեզվի բառային կազմը: |
| **Կատարման չափանիշներ** | ա. տարբերակում է բառապաշարի տարբեր շերտերը` համագործածական, գրքային, խոսակցական.<br>բ. ճիշտ է դասակարգում բառապաշարը` գործառական և գործածական, ծագումնաբանական.<br>գ. տարբերում է բառապաշարի հարստացման միջոցները` բառակազմություն, փոխառություն, պատճենում`մատնանշելով փոխառյալ և բնիկ բառերի համարժեքությունը.<br>դ. ճիշտ է ներկայավնում հնաբանությունների ոճական արժեքը և նորաբանությունների գործառական դերը.<br>դ. բնագրում, առանձնացնում է բարբառային կազմությունները, օտարաբանությունները.<br>ե. գործածում է տերմինային բառեր ու կապակցություններ, ելնելով հաղորդակցման նպատակներից<br>զ. ճիշտ է օգտագործել տարբեր ոճական կիրառություն ունեցող բառեր իր խոսքում: |
| **Ուսումնառության արդյունք 2** | Տարբերի բազմիմաստ բառերի նշանակությունները բանավոր և գրավոր խոսքում, առանձնացնի բառերի տեսակներն ըստ ձևի և իմաստի հարաբերության : |
| **Կատարման չափանիշներ** | ա. տարբերակում է բառերի տեսակներն ըստ իմաստի և ձևի փոխհարաբերության (հոմանիշներ, հականիշներ համանուններ,հարանուններ).<br>բ. գտնում է տրված բառերի հոմանիշներն ու հականիշները, հոմանիշների շարքից ընտրում տրված բառի հետ կապակցվող միավորը, ճիշտ կիրառում հոմանիշների իմաստային նրբերանգները.<br>գ. գտնում է հոմանիշները, հականիշները, համանունները, հարանունները հանձնարարված տեքստում.<br>դ. տարբերակում է բառային և քերականական, տարարմատ և նույնարմատ համանունները, կազմում նախադասություններ.<br>ե. տարբերակում է հարանունները և բառային տարբերակները` ընտրելով տվյալ նախադասությանը համապատասխանող բառը.<br>զ. տարբերում է մենիմաստ և բազմիմաստ բառերը, կարողանում է բառարանով ստուգել և գտնել բառի գլխավոր ու երկրորդական իմաստները.<br>է. կազմում է նախադասություններ բառի ուղիղ և փոխաբերական իմաստներով:<br>ը. կատարում է տեքստային աշխատանք(գտնել բազմիմաստ բառերը, բացատրել նրանց իմաստները, գտնել հոմանիշներն ու հականիշները, բառերը փոխարինել հարմար հոմանիշներով և այլն): |
| **Ուսումնառության արդյունք 3** | Տարբերակի բառը և դարձվածքը: |
| **Կատարման չափանիշներ** | ա. ներկայացնում է բառերի և դարձվածքների փոխաբերական իմաստները և դրանց ոճական արժեքը պատկերավոր խոսք կազմելիս, տարբերակում է դարձվածքներն այլ բառակապակցություններից.<br>բ. կազմում է դարձվածքներից և բառերից հոմանշային շարքեր և նախադասություններ` տրված բառակապակցությունների ուղիղ և դարձվածքային իմաստներով.<br>գ.տարբերակում է դարձվածքների և թևավոր խոսքերի ընդհանրություններն ու տարբերությունները, կարողանում է նշել տրված դարձվածքների սկզբնաղբյուրները.<br>դ. օգտվում է հայերենի դարձվածքների հարստությունից, կիրառում է ասացվածքներ, թևավոր խոսքեր իր խոսքում.<br>. կատարում է ստեղծագործական աշխատանք (տրված բառերով և դարձվածքներով կազմել նախադասություններ, գրել շարադրություն և այլն) : |
| **Ուսումնառության արդյունք 4** | Իմանալ բառերի տեսակներն ըստ կազմության` պարզ, բարդ, ածանցավոր և կարողանա կատարել բառակազմական վերլուծություն: |
| **Կատարման չափանիշներ** | ա. կատարում է ձևույթաբանական վերլուծություն` տարբերակելով հիմնական և երկրորդական ձևույթները` իրենց ենթատեսակներով.<br>բ. տարբերակում է գոյականակերտ, ածականակերտ, մակբայակերտ և բայակերտ ածանցները, կարողանում է բառեր |

| | |
|---|---|
| | կազմել տրված ածանցներով.<br>գ. տարբերակում է բարդությունների տեսակները՝ համադրական, հարադրական,, կրկնավոր, անսխալ գրում է բաղադրյալ բառերը և հնչյունափոխված արմատները.<br>դ. տարբերակում է հապավական բարդությունների տեսակները, արտահայտում բառակապակցություններով.<br>ե.կատարում է բառակազմական վերլուծություն(գտնել բառի բաղադրիչները՝ արմատներ, ածանցներ,հոդակապ, նշել արմատի հնչյունափոխված և անհնչյունափոխ տարբերակները և այլն), բառակազմական վարժություն(գտնել նույն արմատով և ածանցով բառեր, տրված նմուշով կազմել բաղադրյալ բառեր և այլն).<br>զ.համառոտագրում է տրված բառերը: |
| **ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԲԱՌԱԿԱԶՄՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈՒՂՂԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ»** | |
| **Մոդուլի դասիչը** | ՀՕԼԴ - 04 09 -010 |
| **Մոդուլի նպատակը** | Մոդուլը մշակվել է բառակազմության հետ կապված ուղղագրության և ուղղախոսության կանոններին տիրապետելու և դրանք գործնականում կիրառելու հմտություններ զարգացնելու նպատակով: |
| **Մոդուլի տևողությունը** | 34 ժամ |
| **Մուտքային պահանջները** | Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է յուրացրած լինի «Հայոց լեզվի ուղղագրություն և ուղղախոսություն»,«Հնչյունաբանական վերլուծություններ կատարելու հմտություններ», «Հնչյունափոխության հետ կապված ուղղագրություն և ուղղախոսություն» մոդուլները. |
| **Մոդուլի գնահատման կարգը** | մոդուլի կատարողականը գնահատվելու է կատարած աշխատանքի հիման վրա՝ հաշվի առնելով նաև յուրաքանչյուր արդյունքի կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումը: |
| **Ուսումնառության արդյունք 1** | Իմանալ նախածանցավոր,վերջածանցավոր, համածանցավոր բառերի ուղղագրությունն ու ուղղախոսությունը: |
| **Կատարման չափանիշներ** | ա. վերականգնում է հնչյունափոխված և անհնչյունափոխ հիմքերը, ավելացնելով ածանցներ՝կազմում է նոր բառեր,բացատրում դրանց ուղղագրությունը.<br>բ. գտնում է հնչյունափոխված ածանցը՝ վերականգնելով անհնչյունափոխ ձևը, բացատրում հնչյունափոխված ածանցի ուղղագրությունը.<br>գ. վերլուծում է բառակազմորեն տրված բառերը, ընդգծում ածանցները, բացատրում ուղղախոսությունը.<br>դ. տարբերակում է ածանցի՝ հոդակապով և առանց հոդակապի միացումը արմատներին, ճիշտ գրել այն բառերը, որոնցում ե-ով վերջացող բաղադրիչի վրա ավելացել է ածանց (ոսկևորել, ուղևոր): |
| **Ուսումնառության արդյունք 2** | Իմանալ բարդ բառերի բաղադրիչների միացման տարբեր ձևերը, դրանց ուղղագրությունն ու ուղղախոսությունը: |
| **Կատարման չափանիշներ** | ա. տարբերակում է բարդություններն ըստ գրության ձևի՝ համադրական (տեսակները՝ իսկական, կցական, հաստատական) և հապավական.<br>բ. կազմում է իսկական բարդություններ՝ հոդակապով և առանց հոդակապի, բացատրել հնչյունափոխված արմատի կամ ածանցի ուղղագրությունը.<br>գ. ճիշտ է գտնում կցական բարդություններ՝ խուսափելով զուգաձևություններից.<br>դ. տարբերակում է հարադրական (վերլուծական) բարդության տեսակները, կատարում առաջադրանքներ միության գծիկով և առանց գծիկի գրվող հարադրական բարդությունների վերաբերյալ.<br>. կատարում է բարդությունների ուղղագրության և ուղղախոսության վերաբերյալ տարբեր բնույթի առաջադրանքներ, թեստային աշխատանքներ: |
| **Ուսումնառության արդյունք 3** | Իմանալ հապավումների գրության ձևերը և դրանց ուղղագրությունն ու ուղղախոսությունը: |
| **Կատարման չափանիշներ** | ա. տարբերակում է հապավումների տեսակները(տառային, վանկային, խառը), ճիշտ է գրել և կարդալ տառային հապավումները (ԿԳՆ՝ կըգընը, ՀՄԸՄ՝ հոմենըըմնե և այլն).<br>բ. ճիշտ է կարդում օտար լեզուներից վերցված տառային հապավումները՝ ճիշտ հնչյունադարձելով և գրադարձելով |

| | |
|---|---|
| | (ՍԻԷՆԷՆ, ԲԻԲԻՍԻ, կամ ՆԱՏՕ, ՅՈՒՆԵՍԿՈ).<br>գ.կազմում է վանկային հապավումներ՝ ճիշտ կիրառելով մեծատառերի և փոքրատառերի գրության վերաբերյալ կանոնները.<br>դ.ճիշտ է կազմում և գրում խառը տիպի հապավումները, տրված հապավումներն արտահայտում է համապատասխան բառակապակցություններով՝ բացատրելով դրանց ուղղագրությունն ու ուղղախոսությունը: |
| **Ուսումնառության արդյունք 4** | Իմանալ համառոտագրությունների ուղղագրությունն ու ուղղախոսությունը: |
| **Կատարման չափանիշներ** | ա. ճիշտ է համառոտագրել՝ գրելով բառի սկզբնատառը(Ա.Բակունց)կամ առաջին մի քանի տառերը՝ բաղաձայնից հետո ընկած մասի կրճատումով(Հովհ. Թումանյան).<br>բ. ճիշտ է համառոտագրել՝ գրելով միայն բաղաձայնները կամ դրանց մեծ մասը (հմմտ., պրն.).<br>գ. ճիշտ է համառոտագրել չափ ու կշռի միավորները (կգ, դմ, մգ).<br>դ. ճիշտ է համառոտագրել եզակի և հոգնակի թվերը (ընկ. ընկ. կամ դդ., թթ.).<br>ե. ճիշտ է կարդում համառոտագրված բառերը: |
| **Ուսումնառության արդյունք 5** | Իմանալ մեծատառերի ուղղագրությունը: |
| **Կատարման չափանիշներ** | ա. ճիշտ է գրում հարադրավոր հատուկ անունները,որոնց բոլոր բաղադրիչները գրվում են մեծատառով.<br>բ. ճիշտ է գրում հարադրավոր բաղադրյալ հատուկ անունները, որոնց միայն առաջին բաղադրիչն է գրվում մեծատառով:<br>գ. ճիշտ է գրում գրական ստեղծագործությունների, գիտական գործերի, թերթերի, ամսագրերի, պատմական նշանավոր անցքերի, պետական տոների, շքանշանների, համաշխարհային կազմակերպությունների, հաստատությունների անունները.<br>դ. կատարում է տարբեր բնույթի առաջադրանքներ մեծատառերի գործածության վերաբերյալ, անսխալ գրում թելադրություններ, թեստային աշխատանքներ: |
| **ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ « ՁԵՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ .ԱՆՈՒՆ ԽՈՍՔԻ ՄԱՍԵՐ »** | |
| **Մոդուլի դասիչը** | ՀՕԼԴ - 04 09 -011 |
| **Մոդուլի նպատակը** | Մոդուլը մշակվել է ձևաբանությունից տեսական և գործնական գիտելիքներ հաղորդելու, ձևաբանական վերլուծություններ կատարելու կարողություններ և հմտություններ ձևավորելու համար: |
| **Մոդուլի տևողությունը** | 62 ժամ |
| **Մուտքային պահանջները** | Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է նախապես գիտելիքներ ունենա բառագիտությունից, յուրացրած լինի «Հայոց լեզվի ուղղագրության և ուղղախոսության հմտություններ», «Հնչյունաբանական վերլուծություններ կատարելու հմտություններ» մոդուլները: |
| **Մոդուլի գնահատման կարգը** | Մոդուլի կատարողականը գնահատվելու է կատարած աշխատանքի հիման վրա՝ հաշվի առնելով նաև յուրաքանչյուր արդյունքի կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումը: |
| **Ուսումնառության արդյունք 1** | Իմանալ լեզվի ձևաբանական կառուցվածքի և նրա տարրերի մասին: |
| **Կատարման չափանիշներ** | ա. տարբերակում է քերականական իմաստ և ձև հասկացությունները.<br>բ. տարբերակում է քերականական կարգերը.<br>գ.համադրում է կցական և թեքական, համադրական և վերլուծական ձևերի տեսակարար կշիռը հայերենի քերականական համակարգում.<br>դ.տարբերակում է խոսքի մասերը որպես բառապաշարի իմաստաքերականական խմբեր.<br>ե. տարբերակում է խոսքի մասերը ըստ նրանց արտահայտած ընդհանուր իմաստի.<br>զ. որոշում է նյութական, սպասարկու և վերաբերմունքային խոսքի մասերի դերը խոսքի կառուցման մեջ: |
| **Ուսումնառության արդյունք 2** | Իմանալ նյութական իմաստ ունեցող կամ անվանողական խոսքի մասերը, գոյական անունը: |
| **Կատարման չափանիշներ** | ա. տարբերակում է գոյականի տեսակները(անձնանիշ և իրանիշ, հատուկ և հասարակ, նյութական և վերացական և |

| | |
|---|---|
| | այլն),կարողանում է ճիշտ գրել բաղադրյալ հատուկ անունները.<br>բ. ճիշտ է կազմում գոյականի հոգնակի թիվը և խոսքում ճիշտ կիրառել, տարբերակում է անհոգնական, անեզական, հավաքական գոյականները.<br>գ. տարբերակում է գոյականի հոլովները՝ ուղղական, սեռական, տրական, հայցական, բացառական, գործիական, ներգոյական.<br>դ. տարբերակում է արտաքին և ներքին հոլովումները, կարողանում է անսխալ հոլովել տրված բառերը և գործածել նախադասությունների մեջ.<br>ե. տարբերակում է որոշյալ և անորոշ առումները, հայերենի հոդերի ցուցական, ստացական և դիմորոշ ֆունկցիաները.<br>զ. գտնում է գոյականի քերականական կարգերը, բնագրից դուրս գրում գոյականները, կատարում ձևաբանական վերլուծություն: |
| **Ուսումնառության արդյունք 3** | Իմանալ նյութական իմաստ ունեցող կամ անվանողական խոսքի մասերը, ածական և թվական անուններ: |
| **Կատարման չափանիշներ** | ա. տարբերակում է ածականի տեսակները՝ որակական և հարաբերական.<br>բ. տարբերակում է ածականի համեմատության աստիճանները՝ դրական, բաղդատական, գերադրական.<br>գ. կատարում է աշխատանք բնագրի վրա՝ ածականի մակդիրային կիրառության վերաբերյալ<br>դ. տարբերակում է թվականի տեսակները՝ քանակական (բացարձակ, կոտորակային, բաշխական) և դասական.<br>ե. ճիշտ է գործածում թվականի գրավոր արտահայտության ձևերը.<br>զ. հոլովում է ածական և թվական անունները և փոխանվանաբար գործածում նախադասությունների մեջ.<br>է. կատարում է ձևաբանական վերլուծություն, զանազան բնույթի վարժություններ, թեստային աշխատանքներ: |
| **Ուսումնառության արդյունք 4** | մանալ, թե ինչ է դերանունը, նրա կիրառությունը: |
| **Կատարման չափանիշներ** | ա. տարբերակում է դերանվան տեսակները՝ անձնական, ցուցական, փոխադարձ, հարցական, հարաբերական, որոշյալ, անորոշ, ժխտական.<br>բ. տարբերակում է դերանվանական հոլովումն անվանականից ճիշտ է հոլովում տրված դերանունները.<br>գ. ճիշտ է կիրառում դերանունների հոգնակի թվի կազմության և հոլովման առանձնահատկությունները խոսքում:<br>դ. բացատրում է դերանունների հարաբերակցությունը այլ խոսքի մասերի հետ՝ որպես անձնանիշ և իրանիշ գոյականներին փոխարինող բառեր, ածականին, թվականին, մակբային փոխարինող բառեր.<br>. կատարում է թեստային աշխատանքներ և վարժություններ՝ կապված քերականական ձևերի ճիշտ ընտրության և անսխալ գործածության հետ: |
| **ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ « ԲԱՅ. ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ »** | |
| **Մոդուլի դասիչը** | ՀՕԼԴ - 04 09 -012 |
| **Մոդուլի նպատակը** | Մոդուլը մշակվել է ձևաբանությունից տեսական և գործնական գիտելիքներ հաղորդելու, ձևաբանական վերլուծություններ կատարելու, բայի իմաստային, ձևաբանական, բառակազմական, շարահյուսական առանձնահատկությունները տարբերակելու, մակբայի տեսակներն ու առանձնահատկությունները տարբերակելու կարողություններ ու հմտություններ զարգացնելու նպատակով: |
| **Մոդուլի տևողությունը** | 68 ժամ |
| **Մուտքային պահանջները** | Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է ուսումնասիրած լինի «Հայոց լեզվի ուղղագրության և ուղղախոսության հմտություններ», «Հնչյունաբանական վերլուծություններ կատարելու հմտություններ», «Ձևաբանություն» մոդուլները: |
| **Մոդուլի գնահատման կարգը** | Մոդուլի կատարողականը գնահատվելու է կատարած աշխատանքի հիման վրա՝ հաշվի առնելով նաև յուրաքանչյուր արդյունքի կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումը: |
| **Ուսումնառության արդյունք 1** | Իմանալ բայի դրսևորման ձևերը՝ դիմավոր և անդեմ, անդեմ բայերի/դերբայների/ տեսակները և հարաբերակցությունը այլ |

| | |
|---|---|
| | խոսքի մասերի հետ: |
| Կատարման չափանիշներ | ա. տարբերակում է բայի դրսևորման ձևերը` դիմավոր և անդեմ.<br>բ. տարբերակում է դերբայներն ու ձևաբայերը, կազմում է տրված բայերի դերբայական ձևերը.<br>գ. հոլովում է դերբայները և որոշել նրանց ձևաբանական ու շարահյուսական առանձնահատկությունները.<br>դ. դուրս է գրում գեղարվեստական գրականությունից օրինակներ` դերբայների տարբեր հոլովաձևերով և շարահյուսական կիրառություններով.<br>ե. բացատրում է է դերբայների հարաբերակցությունը այլ խոսքի մասերի հետ և հարակատար դերբայի երկակի բնույթը.<br>զ. Կազմում է դերբայական դարձվածներով նախադասություններ և կետադրում: |
| Ուսումնառության արդյունք 2 | Իմանալ բայի կազմությունը, սեռը: |
| Կատարման չափանիշներ | ա. տարբերակում է ածանցավոր բայերի տեսակները` սոսկածանցավոր, պատճառական, բազմապատկական և կրավորական.<br>բ. կարողանում է տարբերակել բարդ (վերլուծական, հարադրական բայերի) տեսակները` հարադիր և զուգադրական.<br>գ. գտնում է անորոշի, անցյալ կատարյալի, դերբայական հիմքերից կազմվող ձևերը, զանազանում է անցյալ կատարյալի հիմքերի տիպերը` ցոյական, ըական, պարզ կամ արմատական Առանձնացնում է տրված բայերի հիմքերը և դրանցով կազմում բայանուն գոյականներ Տրված տեքստից առանձնացնում է բայերը, գտնում նրանց անորոշի և անցյալ կատարյալի հիմքերը.<br>դ.խմբավորում է տրված բայերն ըստ սեռի` ներգործական, կրավորական, չեզոք<br>ե. առանձնացնում է կրկնասեռ և կրավորաձև չեզոք բայերը.<br>զ. փոխակերպում է ներգործական կառուցվածքի նախադասությունները կրավորական կառուցվածքի նախադասությունների: |
| Ուսումնառության արդյունք 3 | Իմանալ բայի խոնարհումը. դեմք, թիվ, եղանակ, ժամանակ Օժանդակ բայի ուղղագրությունը: |
| Կատարման չափանիշներ | ա. տարբերակում է բայի դեմքի, թվի, եղանակի, ժամանակի քերականական կարգերը, կարողանում է ձևաբանական վերլուծության ենթարկել տրված բայերը.<br>բ. տարբերակում է բայի եղանակները (սահմանական, հրամայական, ըղձական, ենթադրական և հարկադրական).<br>գ. խոնարհում է տրված բայը սահմանական եղանակի բոլոր ժամանակաձևերով և գործածել նախադասության մեջ.<br>դ. խոնարհում է տրված բայը հրամայական եղանակով և գործածել նախադասության մեջ.<br>ե. խոնարհում է տրված բայը ըղձական, ենթադրական, հարկադրական եղանակների ժամանակներով և գործածել նախադասությունների մեջ.<br>զ. վերլուծում է բնագրը` առանձնացնելով բայի հարացուցային ձևերը և բնութագրելով դրանք: |
| Ուսումնառության արդյունք 4 | Իմանալ երկրորդական բաղադրյալ ժամանակաձևերի կազմությունը, ժխտական ձևերի կազմությունը և ուղղագրությունը Անկանոն և պակասավոր բայեր: |
| Կատարման չափանիշներ | ա. տարբերակում է երկրորդական բաղադրյալ ժամանակաձևերը (լինել օժանդակ բայով).<br>բ. խոնարհում է տրված բայերը շարունակական, վիճակային, մտադրական ժամանակաձևերով.<br>գ. ճիշտ է կիրառել խոսքում ժխտական ձևերի կազմության և ուղղագրության հետ կապված առանձնահատկությունները.<br>դ. դուրս է գրում տեքստից անկանոն բայերը և բացատրում, թե դիմավոր և անդեմ ո՞ր ձևերում են դրանք անկանոնություն դրսևորում.<br>ե. դուրս է գրում տեքստից անկանոն բայերը և բացատրում, թե որտե՞ղ է դրսևորվում նրանց պակասավորությունը.<br>զ. կատարում է տարբեր բնույթի առաջադրանքներ, վարժություններ, թեստային աշխատանքներ բայի կազմության, ուղղագրության, քերականական կարգերի, շարահյուսական կիրառության վերաբերյալ: |
| Ուսումնառության արդյունք 5 | Իմանալ մակբայի տեսակները և առանձնահատկությունները: |

| | |
|---|---|
| **Կատարման չափանիշներ** | ա. տարբերակում է մակբայի տեսակները (տեղի, ժամանակի, ձևի, չափ ու քանակի, ընդհանրական).<br>բ. ճիշտ է կիրառում մակբայների իմաստային, ձևաբանական, շարահյուսական, բառակազմական առանձնահատկությունները.<br>գ. կազմում է մակբայներ տրված գոյականներից ու ածականներից.<br>դ. գործածում է մակբայներ տրված բայերի հետ և դրանք խմբավորում ըստ տեսակների.<br>ե. մակբայների փոխարեն գործածում է համապատասխան դերանուններ, կազմում է բառակապակցություններ՝ մակբայները գործածելով բայանուն գոյականների և ածականների հետ: |
| **ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՍՊԱՍԱՐԿՈՒ ԵՎ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԱՅԻՆ ԽՈՍՔԻ ՄԱՍԵՐ»** | |
| **Մոդուլի դասիչը** | ՅՕԼԴ - 04 09 -013 |
| **Մոդուլի նպատակը** | Մոդուլը մշակվել է քերականական իմաստ ունեցող կամ սպասարկու խոսքի մասերի, ինչպես նաև վերաբերմունքային խոսքի մասերի վերաբերյալ տեսական և գործնական գիտելիքներ հաղորդելու, ձևաբանական վերլուծություններ կատարելու հմտություններ զարգացնելու նպատակով: |
| **Մոդուլի տևողությունը** | 32 ժամ |
| **Մուտքային պահանջները** | այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է ուսումնասիրած լինի «Հայոց լեզվի ուղղագրության և ուղղախոսության հմտություններ», «Հնչյունաբանական վերլուծություններ կատարելու հմտություններ», «Ձևաբանություն» մոդուլները |
| **Մոդուլի գնահատման կարգը** | Մոդուլի կատարողականը գնահատվելու է կատարած աշխատանքի հիման վրա՝ հաշվի առնելով նաև յուրաքանչյուր արդյունքի կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումը: |
| **Ուսումնառության արդյունք 1** | Արդյունք 1. Իմանալ կապը՝ որպես խոսքի մաս, նրա տեսակներն ու շարահյուսական դերը: |
| **Կատարման չափանիշներ** | ա. խմբավորում է կապերն ըստ շարադասության (նախադրություն, հետադրություն, երկդրություն)<br>բ. խմբավորում է կապերն ըստ կազմավորման աստիճանականության (իսկական, կապ, անիսկական կապ, կապական բառ).<br>գ. տարբերակում է կապերն ըստ նրանց արտահայտած հարաբերությունների և իմաստների.<br>դ. խմբավորում է անիսկական կապերն ու կապական բառերը ըստ այն խոսքի մասերի, որոնցից առաջացել են .<br>ե. լրացնում է աղյուսակը տվյալ հոլովները պահանջող կապերով : Տրված կապերի հետ գործածում է համապատասխան հոլովներով բառեր: |
| **Ուսումնառության արդյունք 2** | Իմանալ շաղկապը՝ որպես խոսքի մաս, նրա տեսակներն ու շարահյուսական դերը: |
| **Կատարման չափանիշներ** | ա. տարբերակում է համադասական և ստորադասական շաղկապները.<br>բ. խմբավորում է համադասական շաղկապներն ըստ իմաստի (միավորիչ-հավելական, ներհակական, տրոհական).<br>գ. խմբավորում է ստորադասական շաղկապները ըստ իմաստի (մեկնական, նպատակի, ժամանակի, պատճառի և հիմունքի և այլն).<br>դ. խմբավորում է շաղկապներն ըստ կազմության (պարզ, բարդ, ածանցավոր, քերականական ձևերից առաջացած, մենադիր, զուգադիր, կրկնադիր).<br>ե. ծավալում է համառոտ տեքստը՝ գործածելով տարբեր շաղկապներ: |
| **Ուսումնառության արդյունք 3** | Իմանալ վերաբերականը ՝որպես խոսքի մաս, նրա գործածությունը խոսքում: |
| **Կատարման չափանիշներ** | ա. տարբերակում է վերաբերականների տեսակները (հաստատական, ցուցական, ժխտական, երկբայական, գնահատողական,սաստկական, սահմանափակման, բաղձանքի, զիջական, կամային).<br>բ. խավորում է տրված վերաբերականներն ըստ ոճական-գործառական շերտերի.<br>գ. տարբերում է վերաբերականների միջոցով սեփական վերաբերմունք արտահայտել տրված տեղեկությունների նկատմամբ. |

| | |
|---|---|
| | դ. կետադրում է բնագիրը՝ ընդգծելով վերաբերականները և որոշելով նրանց տեսակը և կազմությունը: |
| **Ուսումնառության արդյունք 4** | Իմանալ ձայնարկությունը՝ որպես խոսքի մաս, նրա գործածությունը խոսքում: |
| **Կատարման չափանիշներ** | ա. տարբերակում է ձայնարկությունների տեսակները (զգացական, կոչական, նմանաձայնական).<br>բ. խմբավորում է ձայնարկություններն ըստ կազմության՝ պարզ, բարդ (կցական, հարադրավոր).<br>գ. կազմում է զգացական ձայնարկություններով նախադասություններ, որոնցում նրանք արտահայտեն զարմանք, ուրախություն, ափսոսանք, ցավ:<br>դ. բերում է դարձվածքների օրինակներ, որոնց մի բաղադրիչը ձայնարկություն է.<br>. փոխադրում է տրված հատվածի բովանդակությունը՝ գործածելով համապատասխան ձայնարկություններ և կետադրելով: |
| **ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ « ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ . ՏԵՍԱԿՆԵՐԸ »** | |
| **Մոդուլի դասիչը** | ՅՕԼԴ - 04 09 -014 |
| **Մոդուլի նպատակը** | Այս մոդուլը մշակվել է նախադասության մասին տեսական գիտելիքները գործնականում ուսուցանելու հմտություններ տալու նպատակով: |
| **Մոդուլի տևողությունը** | 94 ժամ |
| **Մուտքային պահանջները** | Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է նախապես ուսումնասիրած լինի նախադասություն, նախադասության բնորոշ հատկանիշները, նախադասության տեսակներն ըստ կազմության մոդուլները: |
| **Մոդուլի գնահատման կարգը** | Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է: |
| **Ուսումնառության արդյունք 1** | Արդյունք 1. Իմանալ շարահյուսական կապակցման միջոցներն ու եղանակները: |
| **Կատարման չափանիշներ** | ա. տարբերակում է համաձայնությունը, խնդրախոսությունը/կամ կառավարում/ և առդրությունը.<br>բ. օգտագործում է կապակցության միջոցները՝ բառաձևերը, կապերն ու շաղկապները.<br>ե. գիտի շարահյուսության առանձնահատկությունները, կարողանում է ճիշտ կիրառել հնչերանգը |
| **Ուսումնառության արդյունք 2** | Իմանալ ինչ է բառակապակցությունը, նախադասության տեսակներն ըստ խոսողի վերաբերմունքի կամ եղանակավորման, հաստատական ու ժխտական նախադասություն: |
| **Կատարման չափանիշներ** | ա. տարբերակում է բառակապակցության տեսակները.<br>բ. տարբերակում է նախադասության տեսկաներն ըստ խոսողի վերաբերմունքի կամ եղանակավորման.<br>գ. կազմում է հաստատական և ժխտական նախադասություն: |
| **Ուսումնառության արդյունք 3** | Իմանալ նախադասության տեսակներն ըստ կառուցվածքի և կազմության: |
| **Կատարման չափանիշներ** | ա. կազմում է երկկազմ նախադասություն.<br>բ. կազմում է միակազմ նախադասություն.<br>գ. կազմում է համառոտ նախադասություն.<br>դ. կազմում է ընդարձակ նախադասություն: |
| **Ուսումնառության արդյունք 4** | Իմանալ բարդ նախադասության տեսակները: |
| **Կատարման չափանիշներ** | ա. տարբերակում է բարդ համադասական նախադասությունը,նրա տեսակները.<br>բ. տարբերակում է բարդ ստորադասական նախադասության տեսակներն ըստ բաղադրիչների քանակի, նրանց կապակցման միջոցները.<br>գ. տարբերում է գլխավոր և երկրորդական նախադասությունները.<br>դ. տարբերակում է ստորադաս նախադասությունների բնույթն ու նրանց կապակցությունը: |
| **Ուսումնառության արդյունք 5** | Իմանալ նախադասության հարակից միավորներն ու մեջբերվող խոսքը,, կետադրական օրինաչափությունները: |
| **Կատարման չափանիշներ** | ա. տարբերակում է միջանկյալ և ներդրյալ նախադասություններ.<br>բ. տարբերակում է ուրիշի ուղղակի և անուղղակի խոսքը. |

| | |
|---|---|
| | գ. կետադրում է բազմակի անդամներով,տրոհվող որոշչով նախադասություն.<br>գ. կետադրում է տրոհվող հատկացուցչով, բացահայտիչով և իմաստով չկապվող բառերը.<br>դ. կետադրում է դերբայական դարձվածը՝ նրա տարբեր կիրառությունների դեպքում.<br>ե. կետադրում է կոչականը, ուրիշի ուղղակի խոսքի և հրամայական եղանակի բայերը.<br>զ. կետադրում է տրոհվող բառերը, բառակապակցությունները, ձայնարկությունները.<br>է. կետադրում է բարդ համադասական, ստորադասական և միջանկյալ նախադասությունները: |
| **ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ « ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐ»** | |
| **Մոդուլի դասիչը** | ՅOLԴ - 04-09 -015 |
| **Մոդուլի նպատակը** | Այս մոդուլը մշակվել է նախադասության գլխավոր, երկրորդական անդամների մասին տեսական գիտելիքներ տալու նպատակով: |
| **Մոդուլի տևողությունը** | 54 ժամ |
| **Մուտքային պահանջները** | Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է ուսումնասիրած լինի նախորդ՝ «Նախադասության տեսակները» մոդուլը: |
| **Մոդուլի գնահատման կարգը** | Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է: |
| **Ուսումնառության արդյունք 1** | Իմանալ նախադասության գլխավոր անդամները: |
| **Կատարման չափանիշներ** | ա. տարբերում է ենթական և նրա արտահայտությունները նախադասության մեջ,<br>բ. թվարկում է ենթակայի տեսակները,<br>գ. տարբերում է ստորոգյալի տեսակները,<br>դ. համաձայնեցնում է ենթական ու ստորոգյալը: |
| **Ուսումնառության արդյունք 2** | Իմանալ նախադասության երկրորդական անդամները: |
| **Կատարման չափանիշներ** | ա. տարբերակում է գոյական անդամի լրացումները.<br>բ. տարբերակում է բայական անդամի լրացումները /խնդիրներ, պարագաներ/.<br>գ. տարբերակում է տրոհվող լրացումները: |
| **Ուսումնառության արդյունք 3** | Իմանալ նախադասության բազմակի անդամները: |
| **Կատարման չափանիշներ** | ա. առանձնացնում է բազմակի ենթական, բազմակի բայական ստորոգյալը, բազմակի անվանական ստորոգյալը նախադասության մեջ.<br>բ. տարբերակում է գոյականական անդամի բազմակի անդամներ.<br>գ. տարբերակում է բայական անդամի բազմակի անդամներ: |
| **Ուսումնառության արդյունք 4** | Իմանալ պարզ նախադասության շարադասությունը: |
| **Կատարման չափանիշներ** | ա. ճիշտ շարադասությամբ է օգտագործում գլխավոր անդամները նախադասության մեջ,<br>բ. ճիշտ է կիրառում գոյականական անդամը (լրացումների շարադասությունը) նախադասության մեջ,<br>գ. ճիշտ է կիրառում բայական անդամի լրացումները (պարագաների շարադասություն) նախադասության մեջ.<br>դ. ճիշտ է կիրառում խնդիրների շարադասությունը նախադասության մեջ: |
| **Ուսումնառության արդյունք 5** | Գիտի նախադասության այլ տեսակները: |
| **Կատարման չափանիշներ** | ա. տարբերակում է միադեմ, բայական, անդեմ անվանական նախադասությունները,<br>բ. տարբերակում է բառ-նախադասությունը (տեսակները),<br>գ. տարբերակում է թերի նախադասությունը(տեսակները): |
| **ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ « ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ »** | |
| **Մոդուլի դասիչը** | ՅOLԴ - 04 09 -016 |

| | |
|---|---|
| **Մոդուլի նպատակը** | Մոդուլը մշակվել է հայոց լեզվի դասավանդման ընթացքում մեթոդական կարողություններ տալու, ինտերակտիվ մեթոդներով դասավանդելու հմտություններ մշակելու նպատակով: |
| **Մոդուլի տևողությունը** | 56 ժամ |
| **Մուտքային պահանջները** | Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է նախապես ուսումնասիրած լինի «Հայոց լեզվի ուղղագրության և ուղղախոսության հմտություններ»,«Հնչյունաբանական վերլուծություններ կատարելու հմտություններ», «Բառագիտություն», «Ձևաբանություն», «Շարահյուսություն», «Ոճաբանություն և խոսքի մշակույթ» մոդուլները: Այս մոդուլն ուսումնասիրելու համար սովորողը պետք է ուսումնասիրած լինի ԱՀԱԽ 4-09-001 «Ընդհանուր աշխատանքային գործունեության հմտություններ», ՈՒՍՈՒՑ 4-09-001 «Հոգեբանություն», ՈՒՍՈՒՑ 4-09-002 «Մանկավարժությունն իբրև գիտություն և նրա հիմնական հասկացությունները», ՈՒՍՈՒՑ 4-09-003 «Դասավանդողի հաղորդակցման հմտությունների ձևավորում», ՈՒՍՈՒՑ 4-09-004 «Դաստիարակության գործընթաց», ՈՒՍՈՒՑ 4-09-005 «Կրթության բովանդակություն», ՈՒՍՈՒՑ 4-09-006 «Ուսուցման գործընթաց», ՈՒՍՈՒՑ 4-09-007 «Դրդապատճառային տեխնիկայի կիրառում», ՈՒՍՈՒՑ 4-09-008 «Դասավանդման և ուսումնառության օժանդակ միջոցների կիրառում», ՈՒՍՈՒՑ 4-09-009 «Համագործակցային ուսումնառություն», ՈՒՍՈՒՑ 4-09-010 «Ուսուցման արդյունքների ստուգում և գնահատում» և ՈՒՍՈՒՑ 4-09-011 «Դասի նախապատրաստում» մոդուլները: |
| **Մոդուլի գնահատման կարգը** | Մոդուլի կատարողականը գնահատվելու է կատարած աշխատանքի հիման վրա՝ հաշվի առնելով նաև յուրաքանչյուր արդյունքի կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումը: |
| **Ուսումնառության արդյունք 1** | Ուսուցանել գրագիտություն, ձևավորել անսխալ ու վարժ գրելու և կարդալու հմտություններ: |
| **Կատարման չափանիշներ** | ա. ուսուցանում է հայերենի հնչյունական համակարգը, հնչյունների դասակարգումը, ձայնավոր և բաղաձայն հնչյունները, երկհնչյունները.<br>բ. ուսուցանում է հայերենի շեշտադրության կանոնները, շեշտից կախված հնչյունափոխությունը.<br>գ. ուսուցանում է ձայնավորների, բաղաձայնների, երկհնչյունների ուղղագրությունը.<br>դ. ստուգում է գրավոր աշխատանքները, ուղղում ուղղագրական, կետադրական և ոճական սխալները, բացատրում և սովորեցնում է ուղղագրական և ուղղախոսական նորմերը: |
| **Ուսումնառության արդյունք 2** | Ուսուցանել հայոց լեզվի կառուցվածքի, լեզվական միավորների և նրանց միջև առկա հարաբերությունների մասին համակարգված գիտելիքներ, խթանել բառապաշարի հարստացմանը: |
| **Կատարման չափանիշներ** | ա. ուսուցանում է բառերի տեսակներն ըստ իմաստի և ձևի փոխհարաբերության (հոմանիշներ, հականիշներ, համանուններ,հարանուններ) .<br>բ. ուսուցանում է բառապաշարի տարբեր շերտերը՝ գրական և խոսակցական, ընդհանուր և սահմանափակ գործածության.<br>գ. ուսուցանում է բառիմաստի տեսակները՝ ուղիղ և փոխաբերական, մենիմաստ և բազմիմաստ.<br>դ. ձևավորում է դարձվածքներ, ասացվածքներ, թևավոր խոսքեր կիրառելու հմտություններ, դարձվածքները այլ բառակապակցություններից տարբերակելու, տեքստի լեզվավոճական և պատկերավորման առանձնահատկությունները ընկալելու հմտություն.<br>ե. ձևավորում է բառերի տեսակներն ըստ կազմության (պարզ, բարդ, ածանցավոր) դասակարգելու, բառի բաղադրիչները (արմատ, ածանց, հոդակապ, հիմք և վերջավորություն) տարբերակելու, բառակազմության հետ կապված ուղղագրությունն ու հնչյունափոխությունը ուսուցանելու կարողություններ.<br>զ. կազմում է բառակազմական առաջադրանքներ՝ գրավոր և բանավոր խոսքում հոմանիշ բառերը ճիշտ կիրառելու, բառերի ճիշտ ընտրություն կատարելու և դրանք տեղին գործածելու նպատակով: |
| **Ուսումնառության արդյունք 3** | Ձևավորել լեզվաքերականական գիտելիքների հիման վրա խոսքի և նրա միավորների վերլուծություն կատարելու ունակություն: |
| **Կատարման չափանիշներ** | ա. ուսուցանում է նյութական բովանդակություն ունեցող կամ անվանողական խոսքի մասերը, թեքվող խոսքի |

| | |
|---|---|
| | մասերը(գոյական, դերանուն, բայ), մատնանշելով բանավոր խոսքի մեջ դրանց փոփոխությունները.<br>բ. ուսուցանում է նյութական բովանդակությունից զուրկ կամ սպասարկու խոսքի մասերը.<br>գ. ձևավորում է խոսքի մասերի քերականական հատկանիշները (գոյականի թիվը, հոլովը, առումը, դերանվան դեմքը, թիվը, հոլովը, բայի ժամանակը,եղանակը, դեմքը, թիվը, սեռը) գտնելու հմտություններ.<br>դ. մշակում է ինքնուրույն բանավոր և գրավոր խոսք կառուցելու կարողություններ, լեզվաքերականական գիտելիքները խոսքի կառուցման ընթացքում կիրառելու ունակություն.<br>ե. ձևավորում է տեքստի վրա կատարվող գործնական աշխատանքի միջոցով գրվածքի լեզվավոճական առանձնահատկությունները բացահայտելու.<br>զ. ուսուցանում է բառակապակցությունը նախադասությունից, նախադասության տեսակներն ըստ կազմության և ըստ հաղորդակցության նպատակի տարբերակելու հմտություններ.<br>է. ձևավորում է շարահյուսական վերլուծություն կատարելու հմտություններ: |
| **Ուսումնառության արդյունք 4** | Մշակել շարադրությունների, փոխադրությունների, ռեֆերատների, համառոտագրման և այլ ստեղծագործական աշխատանքների միջոցով կապակցված շարադրանք ստեղծելու հմտություն: |
| **Կատարման չափանիշներ** | ա. հաղորդում է գիտելիքներ տեքստի,նրա իմաստային, կառուցվածքային ու ոճական ամբողջականության վերաբերյալ.<br>բ. ձևավորում է գրավոր շարադրանքները ձևակերպելու և ներկայացնելու համար բառերը ճիշտ ընտրելու և դրանք տեղին գործածելու, հոմանիշ բառերը ոճականական նրբերանգները ճիշտ կիրառելու, գրավոր խոսքում մտքերը ճիշտ արտահայտելու, ուղղագրության և կետադրության կանոնները պահպանելու, գրական լեզվի բառակազմական, ձևաբանական, և շարահյուսական նորմերը պահպանելու հմտություններ.<br>գ. ձևավորում է գրավոր խոսքում լեզվի պատկերավորման և հուզաարտահայտչական միջոցներ կիրառելու հմտություններ .<br>դ. ձևավորում է ուսուցողական և ստուգողական թելադրություններ տալու և դրանք ստուգելու կարողություններ ու հմտություններ.<br>ե. ձևավորում է ուսուցողական կամ ձևավորող, հայտորոշիչ և ստուգման կամ ամփոփիչ թեստեր կազմելու, հանձնարարելու և ստուգելու կարողություններ և հմտություններ |
| **Ուսումնառության արդյունք 5** | Զարգացնել աշակերտների բանավոր խոսքը կարդացածը պատմելու, քննարկելու,տարբեր թեմաներով զրույցներ անցկացնելու, երկխոսություններ կառուցելու միջոցով: |
| **Կատարման չափանիշներ** | ա. ձևավորում է աշակերտների լեզվական ճաշակը և խոսքի մշակույթը զարգացնելու հմտություններ տարբեր բնույթի տեքստերի լեզվավոճական վերլուծության միջոցով.<br>բ. ուսուցանում է խոսքային գործունեության տեսակները (ունկնդրում, ընթերցանություն, մտքերի գրավոր և բանավոր արտահայտում, մենախոսություն և երկխոսություն, դերային խաղ, բեմականացում, քննարկում, բանավեճ).<br>գ. ձևավորում է հաղորդակցական գործունեության տեսակները (հաղորդում, հարցում, կամքի արտահայտում, ժխտում) և դրանց հետևանքով ձևավորվող խոսքի տեսակները (պատմողական, նկարագրական, դատողական խոսք, դիմում, հրաման, հորդոր, իղձ) ուսուցանելու կարողություններ և հմտություններ.<br>դ. ձևավորում է խոսքն ավելի պատկերավոր դարձնելու նպատակով հայերենի դարձվածքների հարստությունից օգտվելու,խոսքում ասացվածքներ, թևավոր խոսքեր և արտահայտություններ կիրառելու, ոճական երանգավորում ունեցող բառերն՝ ըստ անհրաժեշտության կիրառելու հմտություն: |
| **ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ « ՀԱՅ ՀԻՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ»** | |
| **Մոդուլի դասիչը** | ՀOLԴ - 04 -017 |
| **Մոդուլի նպատակը** | Այս մոդուլը մշակվել է հայ գրականության սկզբնավորման, գրերի գյուտի, Մաշտոցի կյանքի և գործունեության, 5-րդ դարի հայ մատենագության, հայ պատմիչների և նրանց ստեղծագործության մասին գաղափար տալու համար: |
| **Մոդուլի տևողությունը** | 34 ժամ |

| | |
|---|---|
| **Մուտքային պահանջները** | Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը նախապես պետք է կարդացած լինի 5-րդ դարի հայ պատմիչների գործերը, Կորյունի « Վարք Մաշտոցի» աշխատությունը: |
| **Մոդուլի գնահատման կարգը** | Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է: |
| **Ուսումնառության արդյունք 1** | Արդյունք 1.Իմանալ հայ գրականության սկզբնավորման նախամաշտոցային գիր ու գրականության գոյության, գրերի գյուտի, Մաշտոցի կյանքի ու գործունեության մասին: |
| **Կատարման չափանիշներ** | ա. ներկայացնում է հայ գրականության սկզբնավորումը.<br>բ. արտահայտում, հաստատում ու պաշտպանում է իր կարծիքը.<br>նախամաշտոցյան գիր ու գրականության մասին.<br>գ. հիմնավորում ու պատճառաբանում է գրերի գյուտի ազգապահպան դերն ու<br>նշանակությունը.<br>դ. անգիր գիտի Աստվածաշնչից թարգմանված առաջին հայերեն նախադասությունը.<br>ե. կարողանում է պատմել Մաշտոցի հոգևոր և աշխարհիկ կյանքի, գրերի գյուտի մասին: |
| **Ուսումնառության արդյունք 2** | Իմանալ 5-րդ դարի հայ մատենագրության ընդհանուր բնութագրի,<br>հայ պատմիչների ու նրանց ստեղծագործությունների մասին: |
| **Կատարման չափանիշներ** | ա. ներկայացնում է 5-րդ դարի հայ մատենագրության ընդհանուր բնութագիրը.<br>բ. ներկայացնում է Փավստոս Բյուզանդի «Հայոց պատմություն» երկասիրության բովանդակությունը,<br>գ. վերլուծում է Վասակ և Մուշեղ Մամիկոնյանների կերպարները,<br>դ. արժևորում է Եղիշեի «Վարդանաց պատմության» պատմական և գրական արժեքը, բնութագրում Վարդան Մամիկոնյանին, Ղևոնդ Երեցին, Վասակ Սյունեցուն, Հազկերտ II-ին և Միհրներսեհին,<br>ե. ներկայացնում է ընդհանուր գաղափար Ղազար Փարպեցու «Հայոց պատմության» և «Ստախոս աբեղաների մեղադրությունը» թղթի մասին, ներկայացնում հոգևորականության շահամոլության, խարդախության, տգիտության և խավարամոլության քննադատությունն ըստ Փարպեցու «Թղթի»,<br>զ. արժևորում է Խորենացու «Հայոց պատմություն» երկասիրության գրական և պատմական արժեքը, ներկայացնում առասպելների սյուժեն, բնութագրում կերպարները, ներկայացնում «Ողբը»՝ որպես ժամանակի այլանդակ բարքերի, հասարակական անարդար կարգերի մերկացում: |
| **ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 10-12-ՐԴ ԴԱՐԵՐՈՒՄ»** | |
| **Մոդուլի դասիչը** | ՀՕԼԴ - 04 09 -018 |
| **Կատարման չափանիշներ** | ա.ճիշտ է ներկայացնում արտադպրոցական աշխատանքի խնդիրները, սկզբունքները և կազմակերպման հիմնական ձևերը.<br>բ.ճիշտ է ներկայացնում համակարգում է դպրոցական և արտադպրոցական աշխատանքները՝ ըստ աշակերտների հետաքրքրությունների.<br>գ.ճիշտ է ներկայացնում համակարգում է դպրոցական և արտադպրոցական օլիմպիադաները, մրցույթները, ստուգատեսները: |
| **ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝ «ԿՐԹՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ»** | |
| **Մոդուլի դասիչը** | ՅՌԼԴ 04 -09 -13 |
| **Մոդուլի նպատակը** | Մոդուլի նպատակն է՝ սովորողին տալ գիտելիքներ կրթության ոլորտի ՅՅ հիմնական օրենքների հիմնադրույթների, հանրակրթության իրականացումը կարգավորող հիմնական իրավական ակտերի, ինչպես նաև ուսումնական գործընթացում դրանց նշանակության մասին |
| **Մոդուլի տևողությունը** | 18 ժամ |
| **Մուտքային պահանջները** | Այս մոդուլն ուսումնասիրելու համար սովորողը պետք է ուսումնասիրած լինի ԱՅԱխ 4-09-001 «Ընդհանուր աշխատանքային գործունեության հմտություններ», ՅՌԼԴ 4-09-001 «Դասավանդողի հաղորդակցման հմտությունների ձևավորում» մոդուլները |
| **Մոդուլի գնահատման կարգը** | Մոդուլի կատարողականը գնահատվելու է կատարված աշխատանքի հիման վրա՝ հաշվի առնելով նաև յուրաքանչյուր արդյունքի կատարման չափանիշների մակարդակի ապահովումը |
| **Ուսումնառության արդյունք 1** | Իմանալ ՅՅ կրթության ոլորտը կարգավորվող ՅՅ հիմնական օրենքների հիմնադրույթները: |
| **Կատարման չափանիշներ** | ա.ճիշտ է ներկայացնում «Կրթության մասին» ՅՅ օրենքի հիմնադրույթները.<br>բ.ճիշտ է ներկայացնում «Յանրակրթության մասին» ՅՅ օրենքի հիմնադրույթները.<br>գ.ճիշտ է ներկայացնում «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության |

| | |
|---|---|
| | մասին» ՀՀ օրենքի հիմնադրույթները.<br>դ.ճիշտ է ներկայացնում «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին» ՀՀ օրենքի հիմնադրույթները և դրա կիրառումը դպրոցում.<br>ե.ճիշտ է ներկայացնում «Բարձրագույն և հետբուհական կրթության մասին» ՀՀ օրենքի հիմնադրույթները.<br>զ.ճիշտ է ներկայացնում «Երեխաների իրավունքների մասին» ՀՀ օրենքի հիմնադրույթները |
| **Ուսումնառության արդյունք 2** | Իմանալ միջնակարգ դպրոցի պետական չափորոշչի կառուցվածքը և գործառույթները |
| **Կատարման չափանիշներ** | ա.ճիշտ է ներկայացնում միջնակարգ դպրոցի պետական չափորոշչի կառուցվածքը.<br>բ.ճիշտ է ներկայացնում միջնակարգ դպրոցի պետական չափորոշչի գործառույթները |
| **Ուսումնառության արդյունք 3** | Իմանալ միջնակարգ դպրոցի գործունեությունը կարգավորող հիմնական նորմատիվային իրավական ակտերի և այլ փաստաթղթերի հիմնական դրույթները |
| **Կատարման չափանիշներ** | ա.ճիշտ է ներկայացնում հանրակրթական դպրոցի հենքային ուսումնական պլանի հիմնադրույթները.<br>բ.ճիշտ է ներկայացնում քննությունների կազմակերպման, աշակերտների փոխադրման, ավարտման կարգի հիմնադրույթները.<br>գ.ճիշտ է ներկայացնում հանրակրթական դպրոցի կանոնադրության հիմնադրույթները.<br>դ.ճիշտ է ներկայացնում հանրակրթական դպրոցի մանկավարժական խորհրդի,առարկայական մեթոդմիավորման կանոնադրությունների հիմնադրույթները: |
| **ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝ «ԻՆՔՆԱԿՐԹՈՒԹՅՈՒՆ»** | |
| **Մոդուլի դասիչը** | ՅՈՒԼԴ 04 -09 -014 |
| **Մոդուլի նպատակը** | Մոդուլի նպատակն է՝ սովորողին տալ գիտելիքներ ինքնակրթության, ինքնազարգացման, կատարելագործման մասին, ինչպես նաև ձևավորել մտքի ճկունության, բարդ խնդիրներին ճիշտ լուծումներ տալու, ինքնաուղղորդման, սեփական եզրակացություններ կատարելու կարողություններ |
| **Մոդուլի տևողությունը** | 18 ժամ |
| **Մուտքային պահանջները** | Այս մոդուլն ուսումնասիրելու համար սովորողը պետք է ուսումնասիրած լինի ԱՀԱԽ 4-09-001 «Ընդհանուր աշխատանքային գործունեության հմտություններ», ՈՒՍՈՒՑ 4-09-001 «Հոգեբանություն», ՈՒՍՈՒՑ 4-09-002 «Մանկավարժությունն իբրև գիտություն և նրա հիմնական հասկացությունները», ՈՒՍՈՒՑ 4-09-003 «Դասավանդողի հաղորդակցման հմտությունների ձևավորում», ՈՒՍՈՒՑ 4-09-004 «Դաստիարակության գործընթաց», ՈՒՍՈՒՑ 4-09-005 «Կրթության բովանդակություն», ՈՒՍՈՒՑ 4-09-006 «Ուսուցման գործընթաց», ՈՒՍՈՒՑ 4-09-007 «Դրդապատճառային տեխնիկայի կիրառում», ՈՒՍՈՒՑ 4-09-008 «Դասավանդման և ուսումնառության օժանդակ միջոցների կիրառում», ՈՒՍՈՒՑ 4-09-009 «Համագործակցային ուսումնառություն», ՈՒՍՈՒՑ 4-09-010 «Ուսուցման արդյունքների ստուգում և գնահատում», ՈՒՍՈՒՑ 4-09-011 «Դասի նախապատրաստում», ՈՒՍՈՒՑ 4-09-012 «Լեզուն որպես լեզվաբանության ուսումնասիրության առարկա», ՈՒՍՈՒՑ 4-09-013 «Լեզուն որպես լեզուներ ուսումնասիրող գիտությունների առարկա», ՈՒՍՈՒՑ 4-09-014 «Լեզվի համակարգը ու կառուցվածքը», ՈՒՍՈՒՑ 4-09-015 «Արտադասարանային և արտադպրոցական աշխատանք», ՈՒՍՈՒՑ 4-09-016 «Կրթության օրենսդրությունը» |
| **Մոդուլի գնահատման կարգը** | Մոդուլի կատարողականը գնահատվելու է կատարված աշխատանքի հիման վրա՝ հաշվի առնելով նաև յուրաքանչյուր արդյունքի կատարման չափանիշների մակարդակի ապահովումը |
| **Ուսումնառության արդյունք 1** | Իմանալ ինքնագնահատման մեթոդները: |
| **Կատարման չափանիշներ** | ա.ճիշտ է ընտրում ինքնագնահատման մեթոդները.<br>բ.համարժեք է գնահատում իր կարողունակությունները.<br>գ.համարժեք է գնահատում իր առանցքային հմտությունները |
| **Ուսումնառության արդյունք 2** | Վերհանել իր մասնագիտական զարգացման կարիքները |

| | |
|---|---|
| **Կատարման չափանիշներ** | ա.ճիշտ է ներկայացնում անհրաժեշտ մասնագիտական կարողությունները.<br>բ.ճիշտ է որոշում իր կարիքները մասնագիտական զարգացման տեսանկյունից.<br>գ.ցուցադրում է իր մասնագիտական կարիքները բավարարելու համար տեղեկատվության. ուսումնառության աղբյուրներ որոշարկելու, հայթայթելու և դրանցից օգտվելու օրինակներ: |
| **Ուսումնառության արդյունք 3** | Իմանալ ֆորմալ, ոչ ֆորմալ և ինֆորմալ կրթության առանձնահատկությունները |
| **Կատարման չափանիշներ** | ա.ճիշտ է ներկայացնում կրթության և ուսումնառության ֆորմալ, ոչ ֆորմալ և ինֆորմալ ձևերը.<br>բ.ճիշտ է ներկայացնում ոչ ֆորմալ և ինֆորմալ կրթությունից ֆորմալ կրթության անցնելու ճանապարհները: |
| **ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝ «ՄԱՏԵՆԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՍՏԵՂԾՈՒՄ»** | |
| **Մոդուլի դասիչը** | ՅՈՒԼԴ 04 -09 -015 |
| **Մոդուլի նպատակը** | Մոդուլի նպատակն է՝ սովորողին տալ գիտելիքներ դպրոցում մատենավարության, ուսումնական և վերլուծական փաստաթղթերի ստեղծման մասին |
| **Մոդուլի տևողությունը** | 18 ժամ |
| **Մուտքային պահանջները** | Այս մոդուլն ուսումնասիրելու համար սովորողը պետք է ուսումնասիրած լինի ԱՅԱԽ 4-09-001 «Ընդհանուր աշխատանքային գործունեության հմտություններ», ՈՒՍՈՒՑ 4-09-004 «Դաստիարակության գործընթաց», ՈՒՍՈՒՑ 4-09-005 «Կրթության բովանդակություն», ՈՒՍՈՒՑ 4-09-006 «Ուսուցման գործընթաց», ՈՒՍՈՒՑ 4-09-008 «Դասավանդման և ուսումնառության օժանդակ միջոցների կիրառում», ՈՒՍՈՒՑ 4-09-009 «Համագործակցային ուսումնառություն», ՈՒՍՈՒՑ 4-09-010 «Ուսուցման արդյունքների ստուգում և գնահատում», ՈՒՍՈՒՑ 4-09-011 «Դասի նախապատրաստում» մոդուլները |
| **Մոդուլի գնահատման կարգը** | Մոդուլի կատարողականը գնահատվելու է կատարված աշխատանքի հիման վրա՝ հաշվի առնելով նաև յուրաքանչյուր արդյունքի կատարման չափանիշների մակարդակի ապահովումը: |
| **Ուսումնառության արդյունք 1** | Կատարել գրանցում դասամատյանում՝ ըստ թեմատիկ պլանի և դասամատյանի վարման կանոնների |
| **Կատարման չափանիշներ** | ա.դասամատյանում գրանցումները կատարում է ըստ թեմատիկ պլանի.<br>բ.գրանցումները դասամատյանում կատարում է ըստ դասամատյանի վարման կանոնների |
| **Ուսումնառության արդյունք 2** | Կազմել ամփոփաթերթ |
| **Կատարման չափանիշներ** | ա.ճիշտ է ներկայացնում ամփոփաթերթերի կառուցվածքները.<br>բ.ճիշտ է կազմում ամփոփաթերթ՝ ըստ սահմանված նքուշի.<br>գ.ամփոփաթերթի հիման վրա ճիշտ է կատարում վերլուծություններ |
| **Ուսումնառության արդյունք 3** | Կազմել անձնական գործեր [դասղեկ] |
| **Կատարման չափանիշներ** | ա.ճիշտ է ներկայացնում անձնական գործերի տիպերը.<br>բ.ճիշտ է կազմում անձնական գործ.<br>գ.կարողանում է վարել անձնական գործեր |
| **Ուսումնառության արդյունք 4** | Կազմել աշակերտի բնութագիր |
| **Կատարման չափանիշներ** | ա.ճիշտ է ներկայացնում աշակերտի բնութագրի տիպերը.<br>բ.ճիշտ է կազմում աշակերտի բնութագիր.<br>գ.ներկայացված բնութագրերից ճիշտ հետևություններ է անու |
| **Ուսումնառության արդյունք 5** | Կազմել քննական արձանագրություն, զեկուցագիր |
| **Կատարման չափանիշներ** | ա.ճիշտ է ներկայացնում քննական արձանագրությունների տիպերը.<br>բ.ճիշտ է կազմում քննական արձանագրություն.<br>գ.ճիշտ է կազմում զեկուցագիր՝ ըստ առաջադրված խնդրի |
| **Ուսումնառության արդյունք 6** | Կազմել և վարել աշակերտների անհատական թղթապանակ |
| **Կատարման չափանիշներ** | ա.ճիշտ է ներկայացնում անհատական թղթապանակների տիպերը. |

| | |
|---|---|
| | բ.ճիշտ է կազմում անհատական թղթապանակ.<br>գ.կարողանում է վարել անձնական թղթապանակներ |
| **ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ»** | |
| **Մոդուլի դասիչը** | ՀՌԼԴ 04 -09 -016 |
| **Մոդուլի նպատակը** | Մոդուլի նպատակն է էկոլոգիական գիտելիքների ուսուցման միջոցով ուսանողին օժտել ընդհանուր էկոլոգիական գրագիտությամբ, դրա հիման վրա ձևավորել էկոլոգիական վարքագիծ, ինչը ուսանողը կօգտագործի իր հետագա մասնագիտական գործունեության մեջ: |
| **Մոդուլի տևողությունը** | 34 ժամ |
| **Մուտքային պահանջները** | Այս մոդուլն ուսումնասիրելու համար սովորողը պետք է ուսումնասիրած լինի ԱՀԱԽ 4-09-001 «Ընդհանուր աշխատանքային գործունեության հմտություններ», ՈՒՍՈՒՑ 4-09-003 «Դասավանդողի հաղորդակցման հմտությունների ձևավորում» մոդուլները |
| **Մոդուլի գնահատման կարգը** | Մոդուլի կատարողականը գնահատվելու է կատարված աշխատանքի հիման վրա՝ հաշվի առնելով նաև յուրաքանչյուր արդյունքի կատարման չափանիշների մակարդակի ապահովումը: |
| **Ուսումնառության արդյունք 1** | Իմանալ էկոլոգիական հիմնական հասկացությունները |
| **Կատարման չափանիշներ** | ա.ճիշտ է ներկայացնում էկոլոգիան՝ որպես բնագիտական, սոցիալական գիտություն, և նրա կապը այլ գիտությունների հետ.<br>բ.ճիշտ է բացատրում անկենդան, կենդան և մարդածին գործոնների ազդեցությունը օրգանիզմի վրա.<br>գ.ճիշտ է ներկայացնում էկոլոգիական համակարգերը և նրանց բաղադրիչները: |
| **Ուսումնառության արդյունք 2** | Իմանալ էկոլոգիական հիմնախնդիրների բովանդակությունը և դրանց լուծմանն ուղղված միջոցառումները: |
| **Կատարման չափանիշներ** | ա.ճիշտ է թվարկում հիմնական էկոլոգիական հիմնախնդիրները.<br>բ.ճիշտ է ներկայացնում յուրաքանչյուր էկոլոգիական հիմնախնդրի էությունը.<br>գ.ճիշտ է թվարկում ՀՀ կողմից վավերացված էկոլոգիական հռչակագրերը, ճիշտ է ներկայացնում ՀՀ «Կարմիր գիրքը» և նրանց ընդհանուր բովանդակությունը.<br>դ.ճիշտ է ներկայացնում անձի էկոլոգիական իրավունքներն ու պարտականությունները |
| **Ուսումնառության արդյունք 3** | Իմանալ էկոլոգիական դաստիարակության նպատակն ու բովանդակությունը |
| **Կատարման չափանիշներ** | ա.ճիշտ է ներկայացնում էկոլոգիական դաստիարակության նպատակն ու բովանդակությունը.<br>բ.ճիշտ է ներկայացնում էկոլոգիական դաստիարակության կապը մարդկային գործունեության բոլոր ոլորտների հետ.<br>գ.ճիշտ է բացատրում էկոլոգիական դաստիարակության դերը մարդու առօրյա գործունեության մեջ |
| **Ուսումնառության արդյունք 4** | Դրսևորել էկոլոգիական վարքագիծ իր ամենօրյա գործունեության մեջ: |
| **Կատարման չափանիշներ** | ա.կողմնորոշվում է և ճիշտ լուծումներ է տալիս էկոլոգիական իրավիճակային խնդիրներին |
| **ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԱՆԱՏՈՄԻԱ, ՖԻԶԻՈԼՈԳԻԱ, ՀԻԳԻԵՆԱ ԵՎ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ»** | |
| **Մոդուլի դասիչը** | ՀՌԼԴ 04 -09 -057 |
| **Մոդուլի նպատակը** | Մոդուլի նպատակն է սովորողներին տալ գիտելիքներ երեխաների օրգանիզմի աճի և զարգացման ընդհանուր օրինաչափությունների մասին՝ երեխաների առողջության պահպանման, հնարավոր հիվանդությունները և առողջության խանգարումները ժամանակին նկատելու և համապատասխան գործողություններ իրականացնելու համար: |
| **Մոդուլի տևողությունը** | 105 ժամ |
| **Մուտքային պահանջները** | Այս մոդուլն ուսումնասիրելու համար սովորողը պետք է ուսումնասիրած լինի ԱՀԱԽ 4-09-001 «Ընդհանուր աշխատանքային գործունեության հմտություններ», ՀՌԼԴ 4-09-003 «Դասավանդողի հաղորդակցման հմտությունների ձևավորում» մոդուլները |
| **Մոդուլի գնահատման կարգը** | Մոդուլի կատարողականը գնահատվելու է կատարված աշխատանքի հիման վրա՝ հաշվի առնելով նաև յուրաքանչյուր |

| | |
|---|---|
| | արդյունքի կատարման չափանիշների մակարդակի ապահովումը: |
| **Ուսումնառության արդյունք 1** | Իմանալ դպրոցականի օրգանիզմի աճի և զարգացման հիմնական օրինաչափությունները և նրանց վրա ազդող գործոնները |
| **Կատարման չափանիշներ** | ա.ճիշտ է ներկայացնում դպրոցականի օրգանիզմի աճի առանձնահատկությունները և նրա վրա ազդող գործոնները.<br>բ.ճիշտ է ներկայացնում դպրոցականի օրգանիզմի զարգացման առանձնահատկությունները և նրա վրա ազդող գործոնները.<br>գ.օգտվում է դպրոցականների ֆիզիկական զարգացման ցուցանիշների տեղեկատվական տիպօրինակներից և դրա հիման վրա ճիշտ հետևություններ է կատարում երեխաների օրգանիզմի աճի և զարգացման մասին |
| **Ուսումնառության արդյունք 2** | Իմանալ դպրոցականի օրգան-համակարգերի անատոմիական կառուցվածքային առանձնահատկությունները |
| **Կատարման չափանիշներ** | ա.մուլյաժի կամ ցուցապաստառի վրա ճիշտ է ցուցադրում կմախքի, մկանների տեղն ու կառուցվածքը և ճիշտ է ներկայացնում հենաշարժիչ համակարգի կառուցվածքի տարիքային առանձնահատկությունները.<br>բ.մուլյաժի կամ ցուցապաստառի վրա ճիշտ է ցուցադրում սիրտ-անոթային համակարգի տեղն ու կառուցվածքը և ճիշտ է ներկայացնում սիրտ-անոթային համակարգի կառուցվածքի տարիքային առանձնահատկությունները.<br>գ.մուլյաժի կամ ցուցապաստառի վրա ճիշտ է ցուցադրում շնչառական համակարգի տեղն ու կառուցվածքը և ճիշտ է ներկայացնում շնչառական համակարգի կառուցվածքի տարիքային առանձնահատկությունները.<br>դ.մուլյաժի կամ ցուցապաստառի վրա ճիշտ է ցուցադրում մարսողական համակարգի տեղն ու կառուցվածքը և ճիշտ է ներկայացնում մարսողական համակարգի կառուցվածքի տարիքային առանձնահատկությունները.<br>ե.մուլյաժի կամ ցուցապաստառի վրա ճիշտ է ցուցադրում միզազատական համակարգի տեղն ու կառուցվածքը և ճիշտ է ներկայացնում միզազատական համակարգի կառուցվածքի տարիքային առանձնահատկությունները.<br>զ.մուլյաժի կամ ցուցապաստառի վրա ճիշտ է ցուցադրում ներզատիչ գեղձերի տեղը և ճիշտ է ներկայացնում նրանց կառուցվածքի տարիքային առանձնահատկությունները,<br>է.մուլյաժի կամ ցուցապաստառի վրա ճիշտ է ցուցադրում աղջիկների և տղաների սեռական օրգանների տեղն ու կառուցվածքը և ճիշտ է ներկայացնում սեռական համակարգի կառուցվածքի տարիքային առանձնահատկությունները.<br>թ.մուլյաժի կամ ցուցապաստառի վրա ճիշտ է ցուցադրում նյարդային համակարգի տեղն ու կառուցվածքը և ճիշտ է ներկայացնում նյարդային համակարգի կառուցվածքի տարիքային առանձնահատկությունները.<br>ժ.մուլյաժի կամ ցուցապաստառի վրա ճիշտ է ցուցադրում վերլուծիչների տեղն ու կառուցվածքը.<br>ժա.մուլյաժի կամ ցուցապաստառի վրա ճիշտ է ցուցադրում մաշկի կառուցվածքը և ճիշտ է ներկայացնում մաշկի կառուցվածքի տարիքային առանձնահատկությունները |
| **Ուսումնառության արդյունք 3** | Իմանալ դպրոցականի օրգան-համակարգերի ֆիզիոլոգիական առանձնահատկությունները |
| **Կատարման չափանիշներ** | ա.ճիշտ է ներկայացնում կմախքի և մկանների ֆիզիոլոգիայի տարիքային առանձնահատկությունները.<br>բ.ճիշտ է ներկայացնում սիրտ-անոթային համակարգի ֆիզիոլոգիայի տարիքային առանձնահատկությունները.<br>գ.ճիշտ է ներկայացնում շնչառական համակարգի ֆիզիոլոգիայի տարիքային առանձնահատկությունները.<br>դ.ճիշտ է ներկայացնում մարսողական համակարգի ֆիզիոլոգիայի տարիքային առանձնահատկությունները.<br>ե.ճիշտ է ներկայացնում միզազատական համակարգի ֆիզիոլոգիայի տարիքային առանձնահատկությունները.<br>զ.ճիշտ է ներկայացնում ներզատիչ գեղձերի ֆիզիոլոգիայի տարիքային առանձնահատկությունները.<br>է.ճիշտ է ներկայացնում աղջիկների և տղաների սեռական օրգանների սեռական համակարգի ֆիզիոլոգիայի տարիքային առանձնահատկությունները.<br>ը.ճիշտ է ներկայացնում նյարդային համակարգի ֆիզիոլոգիայի տարիքային առանձնահատկությունները<br>թ.ճիշտ է ներկայացնում վերլուծիչների ֆիզիոլոգիան.<br>ժ.ճիշտ է ներկայացնում մաշկի ֆիզիոլոգիայի տարիքային առանձնահատկությունները.<br>ժա. ճիշտ է բացատրում նյութերի և էներգիայի փոխանակության տարիքային առանձնահատկությունները.<br>ժբ. ճիշտ է բացատրում բարձրագույն նյարդային գործունեության մեխանիզմը երեխաների մոտ |

| | |
|---|---|
| **Ուսումնառության արդյունք 4** | Իմանալ մանկական տարածված հիվանդությունները և դրանց հիմնական ախտանիշները |
| **Կատարման չափանիշներ** | ա.ճիշտ է թվարկում մանկական տարածված հիվանդությունների անվանումները և ճիշտ է ներկայացնում այդ հիվանդությունների հիմնական ախտանիշները.<br>բ. ճիշտ է ներկայացնում հիվանդությունների առաջացման, տարածման և կանխման ընդհանուր մեխանիզմը |
| **Ուսումնառության արդյունք 5** | Իմանալ դպրոցականի առողջության պահպանման հիմնական կանոնները և կարողանալ կիրառել դրանք |
| **Կատարման չափանիշներ** | ա.ճիշտ է բացատրում հիգիենայի՝ որպես առողջության պահպանման և ամրապնդման գիտության նպատակը.<br>բ.ճիշտ է ներկայացնում դպրոցականի առողջությունը ամրապնդող և թուլացնող գործոնները.<br>գ.ճիշտ է ներկայացնում հենաշարժիչ համակարգի դեֆորմացիայի պատճառները և ճիշտ է ցուցադրում կեցվածքի պահպանման ձևերը.<br>դ.ճիշտ է ներկայացնում հիգիենիկ ռեժիմի կազմակերպումը վարակիչ հիվանդությունների ժամանակ.<br>ե.ճիշտ է ներկայացնում սննդամթերքի և սննդի ռեժիմի նկատմամբ հիգիենիկ պահանջները.<br>զ.ճիշտ է կիրառում աշխատանքի և հանգստի հերթագայումը ուսուցման գործընթացում.<br>է.ճիշտ է հաշվում դպրոցականի պուլսը, շնչառության հաճախականությունը.<br>ը.արյան ճնշումը չափելու գործիքով ճիշտ է չափում դպրոցականի արյան ճնշումը.<br>թ.ճիշտ է ներկայացնում դպրոցականի հագուստին և կոշիկին ներկայացվող հիգիենիկ պահանջները.<br>ժ.ճիշտ է ներկայացնում մաշկի, մազերի և եղունգների խնամքի հիգիենայի կանոնները.<br>ժա.ճիշտ է ներկայացնում ուսումնական հաստատությանը ներկայացվող հիգիենիկ պահանջները: |
| **ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀԱՏՈՒԿ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ»** | |
| **Մոդուլի դասիչը** | ՅՈՒԴ 04 -09 -018 |
| **Մոդուլի նպատակը** | Մոդուլի նպատակն է սովորողներին տալ գիտելիքներ զարգացման տարբեր շեղումներ ունեցող աշակերտների առանձնահատկությունների մասին, ինչպես նաև ձևավորվել նրանց ուսուցման, դաստիարակության և սոցիալականացման համար մեթոդների ու միջոցների կիրառման կարողություններ |
| **Մոդուլի տևողությունը** | 34 ժամ |
| **Մուտքային պահանջները** | Այս մոդուլն ուսումնասիրելու համար սովորողը պետք է ուսումնասիրած լինի ԱՀԱԽ 4-09-001 «Ընդհանուր աշխատանքային գործունեության հմտություններ», ՈՒՍՈՒՑ 4-09-001 «Հոգեբանություն», ՈՒՍՈՒՑ 4-09-002 «Մանկավարժությունն իբրև գիտություն և նրա հիմնական հասկացությունները», ՈՒՍՈՒՑ 4-09-003 «Դասավանդողի հաղորդակցման հմտությունների ձևավորում» մոդուլները |
| **Մոդուլի գնահատման կարգը** | Մոդուլի կատարողականը գնահատվելու է կատարված աշխատանքի հիման վրա՝ հաշվի առնելով նաև յուրաքանչյուր արդյունքի կատարման չափանիշների մակարդակի ապահովումը: |
| **Ուսումնառության արդյունք 1** | Իմանալ հատուկ մանկավարժության ուսումնասիրության առարկան, խնդիրները, ճյուղերը |
| **Կատարման չափանիշներ** | ա.ճիշտ է ներկայացնում հատուկ մանկավարժության ուսումնասիրման առարկան և խնդիրները.<br>բ.ճիշտ է բնութագրում հատուկ մանկավարժության բնագավառները.<br>գ.ճիշտ է ներկայացնում հատուկ մանկավարժության տեղն ու դերը մանկավարժական գիտության մեջ |
| **Ուսումնառության արդյունք 2** | Իմանալ «նորմա» և «շեղումներ նորմայից» հասկացությունների էությունը, շեղումների տեսությունները |
| **Կատարման չափանիշներ** | ա.ճիշտ է ներկայացնում «նորմա» և «շեղումներ նորմայից» հասկացությունների էությունը,<br>բ.ճիշտ է ներկայացնում անոմալ աշակերտների հիմնական խմբերը.<br>գ.ճիշտ է ներկայացնում սահմանափակ հնարավորություններով աշակերտների արատների ու շեղումների ծագման պատճառները և դրանց դեմ պայքարելու ուղիները.<br>դ.ճիշտ է ներկայացնում զարգացման շեղումների կենսաբանական, սոցիալական և հոգեբանական տեսությունները.<br>ե.ճիշտ է տարբերակում առաջնային և երկրորդային խանգարումները և ճիշտ է ներկայացնում երկրորդային |

| | |
|---|---|
| | խանգարումների հաղթահարման ուղիները |
| **Ուսումնառության արդյունք 3** | Իմանալ աշակերտի ֆիզիկական զարգացման խանգարումները |
| **Կատարման չափանիշներ** | ա.ճիշտ է ներկայացնում տեսողության խանգարումներ ունեցող աշակերտների զարգացման առանձնահատկությունները, ուսուցման և դաստիարակության մեթոդները.<br>բ.ճիշտ է բնութագրում լսողության խանգարումներ ունեցող աշակերտների զարգացման առանձնահատկությունները, ուսուցման և դաստիարակության մեթոդները.<br>գ.ճիշտ է բնութագրում շարժողական օրգանների արատներ ունեցող աշակերտներին.<br>դ.ճիշտ է բացատրում աշակերտի առողջական վիճակի ազդեցությունը նրա զարգացման վրա |
| **Ուսումնառության արդյունք 4** | Իմանալ աշակերտի հոգեկան զարգացման խանգարումները |
| **Կատարման չափանիշներ** | ա.ճիշտ է բնութագրում հոգեկան զարգացման հապաղումով տառապող աշակերտներին,<br>բ.ճիշտ է ներկայացնում օլիգոֆրեն աշակերտների զարգացման առանձնահատկությունները և դաստիարակության խնդիրները.<br>գ.նկարի վրա ճիշտ է ցուցադրում խոսքային կառույցի մասերը և նշում հնարավոր թերությունները.<br>դ.ճիշտ է բնութագրում խոսքի խանգարումները և դրանց շտկման մեթոդները.<br>ե.ճիշտ է բնութագրում հուզակամային ոլորտի խանգարումներ ունեցող աշակերտներին.<br>զ.ճիշտ է նկարագրում օժտված աշակերտներին.<br>է.ճիշտ է բացատրում հոգեկան և (կամ) ֆիզիկական շեղումների դերը աշակերտի սոցիալականացման գործում: |
| **Ուսումնառության արդյունք 5** | Իմանալ աշակերտի սոցիալական զարգացման խանգարումները |
| **Կատարման չափանիշներ** | ա.ճիշտ է ներկայացնում վարքի սոցիալական նորմերը և դրանց առանձնահատկությունները տարբեր տարիքում.<br>բ.ճիշտ է բնութագրում «դժվար» աշակերտներին և ներկայացնում նրանց հետ տարվող աշխատանքի սկզբունքներն ու բովանդակությունը.<br>գ.ճիշտ է նկարագրում սահմանային գոտում գտնվող աշակերտներին և նշում շեղումների կանխարգելման ուղիները.<br>դ.ճիշտ է ներկայացնում զարգացման շեղումներով աշակերտների ընտանեկան դաստիարակության առանձնահատկությունները.<br>ե.ճիշտ է ցուցադրում զարգացման շեղումներով աշակերտների ծնողներին խորհրդատվական օգնություն տրամադրելու օրինակներ: |
| **Ուսումնառության արդյունք 6** | Իմանալ ներառական կրթության նպատակը և նշանակությունը |
| **Կատարման չափանիշներ** | ա. ճիշտ է ներկայացնում ներառական կրթության կազմակերպման ձևերը.<br>բ. ճիշտ է բացատրում ներառական կրթության դերը հատուկ կարիքներով աշակերտների սոցիալականացման գործում.<br>գ. ճիշտ է հիմնավորում ներառական կրթության դերը, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտների նկատմամբ հասարակական վերաբերմունքի բարելավման գործում: |
| **ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԼԵԶՈՒՆ ՈՐՊԵՍ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱ»** | |
| **Մոդուլի դասիչը** | ՅՌԼԴ 04 -09 -019 |
| **Մոդուլի նպատակը** | Մոդուլի նպատակն է՝ սովորողին տալ գիտելիքներ լեզվի, դրա հատկանիշների և գործառույթների, ինչպես նաև լեզվի բնույթի, ծագման, զարգացման, ծագումնաբանական և տիպաբանական դասակարգումների վերաբերյալ: |
| **Մոդուլի տևողությունը** | 16 ժամ |
| **Մուտքային պահանջները** | Այս մոդուլն ուսումնասիրելու համար սովորողը պետք է ուսումնասիրած լինի ԱՅԱԽ 4-09-001 «Ընդհանուր աշխատանքային գործունեության հմտություններ», ՈՒՍՈՒՑ 4-09-003 «Դասավանդողի հաղորդակցման հմտությունների ձևավորում» |
| **Մոդուլի գնահատման կարգը** | Մոդուլի կատարողականը գնահատվելու է կատարված աշխատանքի հիման վրա՝ հաշվի առնելով նաև յուրաքանչյուր արդյունքի կատարման չափանիշների մակարդակի ապահովումը: |

| | |
|---|---|
| **Ուսումնառության արդյունք 1** | Իմանալ լեզվի հիմնական հատկանիշները |
| **Կատարման չափանիշներ** | ա.ճիշտ է որոշում տվյալ լեզվի բնույթը.<br>բ.ճիշտ է ներկայացնում լեզվի երկկողմանի միավորներն իբրև արտահայտության և բովանդակության տարբեր բարդություն ունեցող միասնություններ.<br>գ.ճիշտ է ներկայացնում հաղորդակցման ակտի թեմա-ռեմատիկ հորինվածքը.<br>դ.ճիշտ է ներկայացնում լեզվի դերակատարությունները հասարակության կյանքում: |
| **Ուսումնառության արդյունք 2** | Իմանալ լեզվի ծագումը և զարգացումը |
| **Կատարման չափանիշներ** | ա.ճիշտ է ներկայացնում լեզուների ծագման հիմնական տեսությունները, լուսաբանում է լեզվի ծագման խնդիրը լեզվաբանական գիտության վերջին նվաճումների լույսի տակ, ճիշտ է խմբավորում դրանք բնական և հասարակական կոչված խմբերում.<br>բ.ճիշտ է ներկայացնում լեզվի զարգացման պարզագույն ըմբռնումներն ու դրանց ժամանակակից մեկնաբանությունները, շարժման և դադարի, էներգիայի և էրգոնի, սինխրոնիայի և դիախրոնիայի հետ դրա կապը.<br>գ.ճիշտ է տարբերակում լեզվի զարգացման ներքին և արտաքին դրդիչները.<br>դ.ճիշտ է ներկայացնում հին հույների ֆյուսեյ և թեսեյ տեսություններն իրի և անվան կապի մասին: |
| **Ուսումնառության արդյունք 3** | Իմանալ Իմանալ լեզուների ծագումնաբանական և տիպաբանական դասակարգումները, դրանց ընդհանրությունները և տարբերությունները |
| **Կատարման չափանիշներ** | ա.ճիշտ է ներկայացնում լեզվաընտանիք, լեզվաճյուղ, հեռու և մոտիկ ցեղակցության լեզուներ, նախալեզու, քույր և եղբայր լեզուներ հասկացությունները հնդեվրոպական լեզվաընտանիքի նյութի հիման վրա.<br>բ.ճիշտ է ներկայացնում լեզուների ձևաբանական դասակարգումը, տիպերը, ընդհանրություններն ու տարբերությունները.<br>գ.ճիշտ է ներկայացնում լեզուների տիպաբանական դասակարգումը նախնական պարզագույն վիճակից մինչև ժամանակակից տիպաբանական համակարգը.<br>դ.ճիշտ է տարբերակում լեզվաընտանիքի և լեզվամիության (Shprachbund) առանձնահատկությունները |
| **Ուսումնառության արդյունք 4** | Իմանալ լեզու, բարբառ և ժարգոն հասկացությունները, դրանց ընդհանրություններն ու տարբերություններ |
| **Կատարման չափանիշներ** | ա.ճիշտ է ներկայացնում աշխարհի լեզվական քարտեզը.<br>բ.ճիշտ է ներկայացնում լեզվի հատկանիշներն ու սահմանումները.<br>գ.ճիշտ է ներկայացնում լեզու – լեզու, լեզու - բարբառ, բարբառ - բարբառ զուգահեռները.<br>դ.ճիշտ է ներկայացնում մասնագիտական լեզու – համաժողովրդական լեզու ոլորտների ընդհանրություններն ու տարբերությունները.<br>ե.ճիշտ է ներկայացնում բառապաշար, եզրութապաշար, անվանակարգ ոլորտների ընդհանրություններն ու տարբերությունները: |
| **ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԼԵԶՈՒՆԵՐ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՂ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳ»** | |
| **Մոդուլի դասիչը** | ՅՌԼԴ 04 -09 -020 |
| **Մոդուլի նպատակը** | Մոդուլի նպատակն է` սովորողին տալ գիտելիքներ լեզվաբանություն մակրոգիտության, դրա տեղի և դերի մասին` բոլոր, հատկապես հասարակական գիտությունների շարքում |
| **Մոդուլի տևողությունը** | 16 ժամ |
| **Մուտքային պահանջները** | Այս մոդուլն ուսումնասիրելու համար սովորողը պետք է ուսումնասիրած լինի ԱՅԱԽ 4-09-001 «Ընդհանուր աշխատանքային գործունեության հմտություններ», ՈՒՍՈՒՑ 4-09-003 «Դասավանդողի հաղորդակցման հմտությունների ձևավորում», ՅՌԼԴ 4-09-019 «Լեզուն որպես լեզվաբանության ուսումնասիրության առարկա» մոդուլները |
| **Մոդուլի գնահատման կարգը** | Մոդուլի կատարողականը գնահատվելու է կատարված աշխատանքի հիման վրա` հաշվի առնելով նաև յուրաքանչյուր արդյունքի կատարման չափանիշների մակարդակի ապահովումը |

| | |
|---|---|
| Ուսումնառության արդյունք 1 | Իմանալ պատմահամեմատական լեզվաբանությունը որպես գիտական լեզվաբանության առաջին ծյուղ և պատմահամեմատական մեթոդի տեսական և գործնական սկզբունքները |
| Կատարման չափանիշներ | ա.ճիշտ է ներկայացնում պատմահամեմատական լեզվաբանության ստեղծման նախադրյալները.<br>բ.ճիշտ է ներկայացնում պատմահամեմատական լեզվաբանության հիմնադիրներին և առաջին գիտական լեզվաբանության ձևավորման ընթացքը.<br>գ.ճիշտ է ներկայացնում լեզուների ցեղակցության գաղափարը գիտականորեն հիմնավորող առաջին ներկայացուցիչների գործունեությունը հնդեվրոպական լեզուների ոլորտում.<br>դ.ճիշտ է ներկայացնում պատմահամեմատական մեթոդի տեսական և գործնական սկզբունքները.<br>ե.ճիշտ է ներկայացնում լեզուների ծագումնաբանական դասակարգման էությունն ու ընթացակարգը: |
| Ուսումնառության արդյունք 2 | Իմանալ «Ընդհանուր լեզվաբանություն» գիտաճյուղը, «Ընդհանուր համեմատությունների մեթոդը» և առնչությունը «Մասնավոր լեզվաբանություն» գիտաճյուղին ու նրա ուսումնասիրության մեթոդներին |
| Կատարման չափանիշներ | ա. ճիշտ է ներկայացնում ընդհանուր լեզվաբանության հիմնական հասկացությունները.<br>բ.ճիշտ է տարբերակում անհատի լեզու, ազգային լեզու և համամարդկային լեզու հասկացությունները և ներկայացնում դրանց ընդհանուր կապերը.<br>գ.ճիշտ է ներկայացնում ընդհանուր համեմատությունների մեթոդի սկզբունքները.<br>դ.լեզվից վերցված պարզագույն օրինակների վրա ճիշտ է ցուցադրում ազգային լեզվի (քերականության) և մտածողության փոխազդեցությունն ու պատմական փոխպայմանավորվածությունը.<br>ե.ճիշտ է ներկայացնում մասնավոր լեզվաբանության նպատակը, խնդիրները և հիմնական հասկացությունները.<br>զ.ճիշտ է տարբերակում մասնավոր լեզվաբանության գիտական և նորմատիվ քերականությունների խնդիրներն ու նպատակները: |
| Ուսումնառության արդյունք 3 | Իմանալ «Լեզվաբանական աշխարհագրություն» գիտաճյուղը և նրա ուսումնասիրության մեթոդը |
| Կատարման չափանիշներ | ա.ճիշտ է ներկայացնում աշխարհագրական լեզվաբանության զարգացման նախադրյալները.<br>բ.ճիշտ է ներկայացնում բարբառների գիտական ուսումնասիրության անհրաժեշտությունը.<br>գ.ճիշտ է ներկայացնում բարբառների գիտական ուսումնասիրության մեթոդները.<br>դ.ճիշտ է ցուցադրում, որ բարբառները նույնքան հին են, որքան նախալեզուները: |
| Ուսումնառության արդյունք 4 | Իմանալ «Սոցիոլոգիզմ» ուղղությունը, դրա Ժնևի և Փարիզի դպրոցները, Ֆ.դը Սոսյուրի երկատումները |
| Կատարման չափանիշներ | ա. ճիշտ է ներկայացնում սոցիոլոգիզմի առաջացման պատմական նախադրյալները.<br>բ. ճիշտ է ներկայացնում Ֆ. դը Սոսյուրի ծառայությունները պատմահամեմատական լեզվաբանության ոլորտում և նոր լեզվաբանական հիմնադրման գործում.<br>գ. ճիշտ է ներկայացնում Սոսյուրի լեզվաբանական տեսության կառույցը որպես երկատումների համակարգ.<br>դ. ճիշտ է ներկայացնում Սոսյուրի տեսության զարգացումը Ժնևի և Փարիզի դպրոցների նրա աշակերտների և համախոհների կողմից.<br>ե. ճիշտ է ներկայացնում սոցիոլոգիզմի ազդեցությունը նկարագրական կառուցվածքային լեզվաբանության ձևավորման, զարգացման և տարածման գործում: |
| Ուսումնառության արդյունք 5 | Իմանալ «Կառուցվածքային լեզվաբանություն» ուղղությունը և դրա չեխական, դանիական, ամերիկյան, լոնդոնյան և խորհրդային դպրոցները, դրանց բերած մեթոդական նորությունները |
| Կատարման չափանիշներ | ա. ճիշտ է ներկայացնում չեխական ֆունկցիոնալ կառուցվածքային լեզվաբանական դպրոցը և նրա բերած գիտական-մեթոդական նորությունները.<br>բ. ճիշտ է ներկայացնում Կոպենհագենի համալսարանի կառուցվածքային լեզվաբանական գլոսեմատիկա դպրոցը իբրև ունիվերսալ քերականություն. |

| | |
|---|---|
| | գ. ճիշտ է ներկայացնում ամերիկյան Յելում և Մասաչուսեթս նահանգում ձևավորված կառուցվածքային լեզվաբանական դպրոցներն ու նրանց բերած գիտական-մեթոդական նորությունները.<br>դ. ճիշտ է ներկայացնում խորհրդային և հայկական կառուցվածքաբանական դպրոցները և նրանց դեմ մղվող պայքարը.<br>ե. ճիշտ է ներկայացնում կառուցվածքային լեզվաբանության մեթոդների ընդհանուր բնութագիրը: |
| **ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԼԵԶՎԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ»** | |
| Մոդուլի դասիչը | ՀՈԼԴ 04 -09 -021 |
| Մոդուլի նպատակը | Մոդուլի նպատակն է` սովորողին տալ գիտելիք լեզվի երկու գոյաձևերի` իբրև համակարգ և կառուցվածք, նրանց փոխակերպումների, միավորների և նրանց միջև գործող հարաբերությունների, որոնց գործարկումով հնարավոր է դառնում կատարել հասարակության համար լեզվի կարևորագույն դերի` հաղորդակցման մասին: |
| Մոդուլի տևողությունը | 36 ժամ |
| Մուտքային պահանջները | Այս մոդուլն ուսումնասիրելու համար սովորողը պետք է ուսումնասիրած լինի ԱՀԱԽ 4-09-001 «Ընդհանուր աշխատանքային գործունեության հմտություններ», ՈՒՍՈՒՑ 4-09-003 «Դասավանդողի հաղորդակցման հմտությունների ձևավորում», ՀՈԼԴ 4-09-019 «Լեզուն որպես լեզվաբանության ուսումնասիրության առարկա», ՀՈԼԴ 4-09-020 «Լոզուն որպես լեզուներ ուսումնասիրող գիտությունների առարկա» մոդուլները: |
| Մոդուլի գնահատման կարգը | Մոդուլի կատարողականը գնահատվելու է կատարված աշխատանքի հիման վրա` հաշվի առնելով նաև յուրաքանչյուր արդյունքի կատարման չափանիշների մակարդակի ապահովումը: |
| Ուսումնառության արդյունք 1 | Տարբերել «Լեզվի համակարգ» և «Լեզվի կառուցվածք» հասկացությունները, իմանալ «Լեզու» և «Լեզվաբանություն» հասկացությունների բաղադրիչների հարաբերությունները` որպես լեզվի կառուցվածքային մակարդակներ և լեզվաբանության բաժիններ |
| Կատարման չափանիշներ | ա.ճիշտ է ներկայացնում «Լեզվի մակրոհամակարգ» հասկացությունը` որպես միկրոհամակարգերի համակարգ.<br>բ. ճիշտ է ներկայացնում «Լեզվի կառուցվածք» հասկացությունը` որպես լեզվական մակարդակների ենթադասություն.<br>գ. ճիշտ է ներկայացնում «Լեզվի մակարդակ» և «Լեզվաբանության բաժիններ» հարաբերակցությունը.<br>դ. ճիշտ է ներկայացնում լեզվի մակարդակները դրանց միավորներն ու նրանց միջև գործող հարաբերությունները սահմանելու ընթացակարգը.<br>ե. ճիշտ է ներկայացնում լեզվաբանության բաժիններն ու ենթաբաժինները: |
| Ուսումնառության արդյունք 2 | Իմանալ «Լեզվի հնչութային մակարդակ» և «Հնչյունաբանություն» հասկացությունների հարաբերակցությունը |
| Կատարման չափանիշներ | ա.ճիշտ է ներկայացնում հնչութային մակարդակի միավորների ինտեգրալ հատկանիշները, միավորների բնութագրերը.<br>բ.ճիշտ է ներկայացնում հնչույթ-հնչյուն տարբերակումը, հնչույթի սահմանումները, տարբերակիչ հատկանիշն իբրև լեզվի արտահայտության պլանի նվազագույն միավոր և հնչութային համակարգերի առանձնահատկությունները.<br>գ.ճիշտ է ներկայացնում հնչյունների ֆիզիկական և ֆիզիոլոգիական հատկանիշներն ու դրանց բնութագրերը.<br>դ.ճիշտ է դասակարգում բառերի հնչյունային շղթայում կատարվող պատմական փոփոխությունները.<br>ե.ճիշտ է ներկայացնում հնչյունաբանության ենթաբաժինները և դրանց ուսումնասիրության առարկան.<br>զ.ճիշտ է ներկայացնում գրի ծագման, զարգացման և միմյանց փոխարինող տեսակների առանձնահատկությունները: |
| Ուսումնառության արդյունք 3 | Իմանալ «Լեզվի ձևույթային մակարդակ» և «Ձևաբանություն» հասկացությունների հարաբերակցությունը և քերականական կարգի կառուցվածքը |
| Կատարման չափանիշներ | ա.ճիշտ է ներկայացնում լեզվի ձևույթների սահմանումը, տեսակների սահմանազատումը` ըստ արտահայտած իմաստի տիպերի և ըստ բառի կազմում գրաված դիրքի.<br>բ.ճիշտ է ներկայացնում օբյեկտիվ իրականության լեզվական արտացոլման իմաստաբանական մակարդակները` ըստ փաստերի ընդհանրացման ու վերացարկման աստիճանների.<br>գ.ճիշտ է ներկայացնում արմատական ձևույթների ձևաիմաստային և գործառական առանձնահատկությունները. |

| | |
|---|---|
| | դ.ճիշտ է ներկայացնում բառակազմական/ածանցական ձևույթների ձևաիմաստային և գործառական առանձնահատկությունները.<br>ե.ճիշտ է ներկայացնում վերաբերական ձևույթների ձևաիմաստային և գործառական առանձնահատկությունները.<br>զ.ճիշտ է ներկայացնում «քերականական կարգ», «քերականական իմաստ» և «քերականական արտահայտության միջոցներ» հասկացություններն ու նրանց հետ կապված հասկացական ապարատը.<br>է.ճիշտ է ներկայացնում քերականական իմաստների արտահայտության քերականական տեխնիկաները: |
| **Ուսումնառության արդյունք 4** | Իմանալ «Լեզվի նշանային մակարդակ» և «Բառագիտություն (նշանագիտություն)» հասկացությունների հարաբերակցությունը |
| **Կատարման չափանիշներ** | ա.ճիշտ է տալիս բառույթի սահմանումն իբրև լեզվական նշան, դրա հետ կապված սուբյեկտիվ և օբյեկտիվ դժվարությունները.<br>բ.ճիշտ է ներկայացնում բառի ստուգաբանական և ըստ ներքին ձևի վերլուծության օրինաչափությունները.<br>գ.ճիշտ է ներկայացնում բառիմաստի բաղադրիչները, բառույթի բառակազմական և իմաստակազմական կաղապարները, սուբյեկտիվ և օբյեկտիվ, ուղիղ և փոխաբերական իմաստները բառույթում, սեմա, սեմեմա, սեմանտեմա հասկացությունները.<br>դ.ճիշտ է ներկայացնում լեզվի կայուն բառակապակցությունների/դարձվածքների տեսակները, իմաստային դաշտերը, թարգմանական համարժեքների ստացման ուղիները.<br>ե.ճիշտ է ներկայացնում բառապաշարի տարբեր դասակարգումները, բառարաններում գրառման տեխնոլոգիան, բառարանների տեսակները.<br>զ.ճիշտ է ներկայացնում բառույթի ուսումնասիրությամբ զբաղվող բաժինները: |
| **Ուսումնառության արդյունք 5** | Իմանալ «Լեզվի ստորոգական մակարդակ» և «Շարահյուսություն» հասկացությունների հարաբերակցությունը |
| **Կատարման չափանիշներ** | ա.ճիշտ է ներկայացնում ստորոգական մակարդակի միավորների ընդհանուր բնութագիրը.<br>բ.ճիշտ է ներկայացնում շարույթը իբրև ստորոգական մակարդակի նվազագույն միավոր, շարույթի տեսակները լեզուներում, միահիմքությունը և բազմահիմքությունը.<br>գ.ճիշտ է ներկայացնում բառակապակցությունն ու դերբայական դարձվածն իբրև ստորոգական մակարդակի միավորներ.<br>դ.ճիշտ է ներկայացնում նախադասությունն իբրև ստորոգական մակարդակի և լեզվի գերագույն միավոր, նախադասության հիմնական հատկանիշները.<br>ե.ճիշտ է ներկայացնում խոսողի վերաբերմունքի դրսևորման լեզվական ձևերը.<br>զ.ճիշտ է ներկայացնում շարահյուսական արտահայտության միջոցները: |
| **ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ « ՄԱՆԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ »** | |
| **Մոդուլի դասիչը** | ՅՌԼԴ 04 -09- 001 |
| **Մոդուլի նպատակը** | Մոդուլի նպատակն է ուսանողներին գիտելիքներ տալ հայ մանկական գրականության մասին, բացահայտել մանկական գրականության առանձնահատկությունները և զարգացման օրինաչափությունները |
| **Մոդուլի տևողությունը** | 56 ժամ |
| **Մուտքային պահանջները** | Չկան |
| **Մոդուլի գնահատման կարգը** | Մոդուլի կատարողականը գնահատվելու է կատարած աշխատանքի հիման վրա՝ հաշվի առնելով նաև յուրաքանչյուր արդյունքի կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումը |
| **Ուսումնառության արդյունք 1** | Ներկայացնել մանկական գրականության նշանակությունը բառապաշարի հարստացման և կրտսեր սերնդի դաստիարակության գործում |
| **Կատարման չափանիշներ** | ա. պատմում է մանկական որևէ ստեղծագործություն՝ օգտագործելով տեսական նյութի ընթացքում յուրացրած նոր բառերն ու դարձվածքները. |

| | |
|---|---|
| | բ. ներկայացնում է մանկական գրականության նշանակությունը երեխաների մտավոր , բարոյական և գեղագիտական դաստիարակության գործում.<br>գ. ներկայացնում է մեսրոպյան առաջին դպրոցների և դպրոցական գործի ընդարձակման կարևորությունը.<br>դ. ներկայացնում է Շնորհալու հանելուկները և «Խրատ ուսումնական մանկանցը» ստեղծագործությունը.<br>ե. ներկայացնում է Մ.Գոշի առակները և Վ. Այգեկցու առակները: |
| **Ուսումնառության արդյունք 2** | Ներկայացնել հայ գրականության վերածնության շրջանը, մեսրոպյան առաջին դպրոցների ստեղծումն ու դպրոցական գործը |
| **Կատարման չափանիշներ** | ա. ներկայացնում է մեսրոպյան առաջին դպրոցների և դպրոցական գործի ընդարձակման կարևորությունը.<br>բ. ներկայացնում է դպրոցական գործի ծավալումը Բագրատունյաց թագավորության շրջանում / 10-11դարերում/.<br>գ. ներկայացնում է 12-13 դդ. հայ գրողների ստեղծագործությունները՝ իբրև մանկական ընթերցանության նյութ |
| **Ուսումնառության արդյունք 3** | Ներկայացնել հայ մանկագիրներին և նրանց ստեղծագործությունները |
| **Կատարման չափանիշներ** | ա. ներկայացնում է հայ մանկագիրներին,նրանց կյանքն ու ստեղծագործությունների ընդհանուր բնութագիրը.<br>բ. ընթերցում է ցանկացած մանկական ստեղածագործություն արտահայտիչ ձևով.<br>գ. վերլուծում է առաջադրված մանկական ստեղծագործությունները,նշում դաստիարակչական, գեղագիտական արժեքը: |
| **Ուսումնառության արդյունք 4** | Իմանալ ռուս և արտասահմանյան մանկական գրականության դասական ներկայացուցիչներին |
| **Կատարման չափանիշներ** | ա. ներկայացնում է ռուս և արտասահմանյան մանկական գրականության դասական ներկայացուցիչներին.<br>բ. ներկայացնում է ռուս և արտասահմանյան հայտնի մանկագիրների կյանքը, ստեղծագործության ընդհանուր բնութագիրը և կարևորությունը հայ մանկական գրականության զարգացման գործում.<br>գ. վերլուծում է նշանավոր մանկագիրների ստեղծագործությունները, նշում է գեղարվեստական և դաստիարակչական արժանիքները: |
| **Ուսումնառության արդյունք 5** | Ներկայացնել թարգմանական գրականության ազդեցությունը հայ մանկական գրականության վրա |
| **Կատարման չափանիշներ** | ա. ներկայացնում է նշանավոր մանկագիրների թարգմանությունները.<br>բ. նշում է առաջադրված թարգմանությունների լեզվական և ժանրային առանձնահատկությունները.<br>գ. ներկայացնում է ռուս և արտասահմանյան մանկագիրների թարգմանությունների արդյունքում հայ մանկագրության մեջ նոր հերոսների, արտահայտչամիջոցների փոփոխությունն ու հարստացումը : |
| **ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ « ԱՆՏԻԿ ԵՎ ՎԵՐԱԾՆՆԴԻ ՇՐՋԱՆԻ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ »** | |
| **Մոդուլի դասիչը** | ՅՌԼԴ 04 -09- 002 |
| **Մոդուլի նպատակը** | Մոդուլի նպատակն է՝ ուսանողներին ծանոթացնել անտիկ գրականության հետ, գիտելիքներ տալ վերածննդի դարաշրջանի գրականության մասին |
| **Մոդուլի տևողությունը** | 56 ժամ |
| **Մուտքային պահանջները** | Չկան |
| **Մոդուլի գնահատման կարգը** | Մոդուլի կատարողականը գնահատվելու է կատարած աշխատանքի հիման վրա՝ հաշվի առնելով նաև յուրաքանչյուր արդյունքի կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովում |
| **Ուսումնառության արդյունք 1** | Ներկայացնել անտիկ գրականության պատմական և գեղարվեստական նշանակությունը |
| **Կատարման չափանիշներ** | ա. ներկայացնում է անտիկ գրականության ակունքները.<br>բ. ներկայացնոմ է անտիկ գրականության գեղարվեստական նշանակությունը |
| **Ուսումնառության արդյունք 2** | Բնութագրել հելլենական շրջանի քնարերգությունը |
| **Կատարման չափանիշներ** | ա. բնութագրում է հելլենական շրջանի քնարերգությունը.<br>բ. արտասանում է որոշ հատվածներ այդ ստեղծագործություններից |
| **Ուսումնառության արդյունք 3** | Ներկայացնել Հոմերոսի պոեմների բովանդակությունը |

| | |
|---|---|
| **Կատարման չափանիշներ** | ա. ներկայացնում է «Իլիական» և «Ոդիսական» պոեմների բովանդակությունը և գեղարվեստական արժանիքները.<br>բ. ներկայացնում է վերոհիշյալ ստեղծագործությունների բովանդակային հիմքերը, ժողովրդայնությունն ու ազգային նշանակությունը.<br>գ. վերլուծում է պոեմները.<br>դ. պարզաբանում է առաջադրված հատվածները.<br>ե. օգտվում է դիցաբանական բառարանից |
| **Ուսումնառության արդյունք 4** | Ներկայացնել անտիկ շրջանի առակագրությունը և դրամատուրգիան |
| **Կատարման չափանիշներ** | ա. ներկայացնում է առակագիրներին և նրանց լեզվամտածողության նշանակությունը աշակերտների տրամաբանական մտածողության զարգացման վրա.<br>բ. բնութագրում է անտիկ շրջանի դրամատուրգիայի առանձնահատկությունները |
| **Ուսումնառության արդյունք 5** | Բնութագրել Վերածննդի շրջանի գրականությունը |
| **Կատարման չափանիշներ** | ա. ներկայացնում և բնութագրում է Վերածննդի շրջանի իտալացի նշանավոր գրողների ստեղծագործությունները.<br>բ. ներկայացնում և վերլուծում է Վերածննդի շրջանի անգլիացի և ֆրանսիացի նշանավոր գրողների ստեղծագործությունները.<br>գ. ներկայացնում և վերլուծում է Վերածննդի շրջանի գերմանացի նշանավոր գրողների ստեղծագործությունները |
| **ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ « ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ »** | |
| **Մոդուլի դասիչը** | ՅՈՒԼԴ 04 -09- 003 |
| **Մոդուլի նպատակը** | Մոդուլի նպատակն է ուսանողներին գիտելիքներ տալ արտասահմանյան գրականության մասին, բացահայտել արտասահմանյան գրականության զարգացման օրինաչափությունները, առանձնահատկությունները |
| **Մոդուլի տևողությունը** | 58 ժամ |
| **Մուտքային պահանջները** | Լիարժեքորեն տիրապետի «Օտար լեզու» առարկայից առնվազն հանրակրթական հիմնական ծրագրի ծավալով |
| **Մոդուլի գնահատման կարգը** | Մոդուլի կատարողականը գնահատվելու է կատարած աշխատանքի հիման վրա` հաշվի առնելով նաև յուրաքանչյուր արդյունքի կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովում |
| **Ուսումնառության արդյունք 1** | Բնութագրել 8-րդ դարի արտասահմանյան գրականությունը |
| **Կատարման չափանիշներ** | ա. ներկայացնում է ականավոր ստեղծագործողներին, թվարկում նրանց առավել հայտնի ստեղծագործությունները.<br>բ. բնութագրում է գրական հերոսներին առաջարկվող ստեղծագործության մեջ և թվարկում գեղարվեստական արժանիքները |
| **Ուսումնառության արդյունք 2** | Ներկայացնել դասական գրողների ստեղծագործությունները |
| **Կատարման չափանիշներ** | ա. ներկայացնում է դասական գրողների ստեղծագործությունները.<br>բ. ճիշտ է բացահայտում առաջադրված ստեղծագործությունների գեղարվեստական արժանիքները.<br>գ. բնութագրում է առաջադրված կերպարները |
| **Ուսումնառության արդյունք 3** | Ներկայացնել 19-րդ դարում ռոմանտիզմի արտահայտությունը արտասահմանյան գրականության մեջ |
| **Կատարման չափանիշներ** | ա. ներկայացնում է ռոմանտիզմի հետևորդ ստեղծագործողներին.<br>բ. բացահայտում է նրանց ստեղծագործությունների կարևորագույն գծերը / կյանքը իդեալին համապատասխան փոխելու ձգտումը/ |
| **Ուսումնառության արդյունք 4** | Բնութագրել անցումը ռոմանտիզմից ռեալիզմին |
| **Կատարման չափանիշներ** | ա. ճիշտ է ներկայացնում ռեալիզմի մուտքը արտասահմանյան գրականության մեջ.<br>բ. բնութագրում է ռեալիստ ստեղծագործողների երկերը |
| **Ուսումնառության արդյունք 5** | Ներկայացնել 20-րդ դարի դասական գործիչներին և նրանց ստեղծագործությունները |
| **Կատարման չափանիշներ** | ա. բնութագրում է 20-րդ դարի արտասահմանյան գրականությունը. |

| | |
|---|---|
| | բ. նշում է պատմական ժամանակաշրջանի կարևոր իրադարձությունների ազդեցությունը գրականության վրա.<br>գ. վերլուծում է առաջադրված երկերը |
| **ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ « ԵՐԿՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ »** | |
| **Մոդուլի դասիչը** | ՀՈՒԼԴ 04 09 004 |
| **Մոդուլի նպատակը** | 54 ժամ |
| **Մոդուլի տևողությունը** | Այս մոդուլը նախատեսված է Հայոց լեզվի ուսուցիչ» որակավորմամբ մասնագետի պատրաստման համար Մոդուլի նպատակն է՝ սովորողին տալ գիտելիքներ Հայաստանի աշխարհագրական դիրքի, պատմության, մշակույթի, երկրի քաղաքական և տնտեսական կապերի կարևորության, տվյալ երկրի պատմական վայրերի և նշանավոր մարդկանց կյանքի և գործունեության մասին |
| **Մուտքային պահանջները** | Այս մոդուլն ուսումնասիրելու համար սովորողը պետք է դպրոցում լիարժեք տիրապետի «Աշխարհագրություն» և «Պատմություն» առարկաները՝ միջնակարգ դպրոցի ծրագրերի ծավալներով |
| **Մոդուլի գնահատման կարգը** | Մոդուլի կատարողականը գնահատվելու է կատարած աշխատանքի հիման վրա՝ հաշվի առնելով նաև յուրաքանչյուր արդյունքի կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովում |
| **Ուսումնառության արդյունք 1** | Իմանալ Հայաստանի երկրի, աշխարհագրության, պատմության և մշակույթի մասին |
| **Կատարման չափանիշներ** | ա. ճիշտ է ցույց տալիս Հայաստանը քարտեզի վրա.<br>բ. ճիշտ է նկարագրում երկրի բնակլիմայական պայմանները.<br>գ. ճիշտ է մեկնաբանում երկրի պատմական դեպքերը.<br>դ. ճիշտ է ներկայացնում երկրի մշակույթը |
| **Ուսումնառության արդյունք 2** | Իմանալ Հայաստանի պատմական, քաղաքական, տնտեսական, մշակութային և կրթական կապերի մասին |
| **Կատարման չափանիշներ** | ա. ճիշտ է ներկայացնում մեր երկրի մշակութային կապերը.<br>բ. ճիշտ է պատկերացնում երկրի կրթական համակարգը.<br>գ. ներկայացնում է Հայաստանի քաղաքական և տնտեսական կապերը |
| **Ուսումնառության արդյունք 3** | Իմանալ մեր երկրի պատմական վայրերի, նշանավոր մարդկանց անուններ, կարդացած լինի նրանց հայտնի ստեղծագործություններից մի քանիսը |
| **Կատարման չափանիշներ** | ա. ճիշտ է թվարկում պատմական վայրերի անունները.<br>բ. թվարկում է նշանավոր մարդկանց անունները.<br>գ. ճիշտ է թվարկում աշխարհահռչակ գրողների անուններն ու ստեղծագործությունները.<br>դ. ճիշտ է մեկնաբանում աշխարհահռչակ գրողների ստեղծագործությունները.<br>ե. քննադատում, գնահատում է աշխարհահռչակ գրողների գաղափարները |
| **ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ « ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ. ՈՃԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ»** | |
| **Մոդուլի դասիչը** | ՀՈՒԼԴ 04– 09- 005 |
| **Մոդուլի նպատակը** | Մոդուլը նախատեսված է այն անձանց համար, ովքեր աշխատելու են ՀՀ հիմնական և ավագ դպրոցում որպես հայոց լեզվի և գրականության ուսուցիչ: Այս մոդուլը ներկայացնում է գիտական, հրապարակախոսական, վարչագործարարական և առօրյա-կենցաղային ոճերը |
| **Մոդուլի տևողությունը** | 34 ժամ |
| **Մուտքային պահանջները** | Հիմնական դպրոցի գիտելիքները |
| **Մոդուլի գնահատման կարգը** | Մոդուլի կատարողականը գնահատվելու է կատարած աշխատանքի հիման վրա՝ հաշվի առնելով նաև յուրաքանչյուր արդյունքի կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովում |
| **Ուսումնառության արդյունք 1** | Իմանալ գիտական ոճը |
| **Կատարման չափանիշներ** | ա. ներկայացնում է գիտական ոճը. |

| | |
|---|---|
| | բ. ներկայացնում է գիտական ենթաոճերը.<br>գ. կազմում է նյութեր գիտական ոճով.<br>դ. զանազանում է գիտական ենթաոճերը տեքստում.<br>ե. գիտական ոճի նյութեր կազմելիս պահպանում է գիտական ոճի 10 հատկանիշները |
| **Ուսումնառության արդյունք 2** | Իմանալ հրապարակախոսական ոճը |
| **Կատարման չափանիշներ** | ա. ներկայացնում է հրապարակախոսական ոճը.<br>բ. ներկայացնում է հրապարակախոսական ոճի ենթատեսակները, նախապատրաստումը և հրապարակային խոսքի ներգործման հիմնական պայմանները.<br>գ. գրում է հրապարակախոսական ոճի նյութեր ` պահպանելով խոսքի ներգործման հիմնական պայմանները<br>դ. առանձնացնում է հրապարակախոսական ոճը տարբեր ոճերի նյութերից.<br>ե. կազմում է հրապարակախոսական ոճի նյութեր` պահպանելով հրապարակային խոսք կառուցելու սխեման |
| **Ուսումնառության արդյունք 3** | Իմանալ վարչագործարարական ոճը |
| **Կատարման չափանիշներ** | ա. ներկայացնում է վարչագործարարական ոճը.<br>բ. ներկայացնում է վարչագործարարական ոճի ենթաոճերը.<br>գ. առանձնացնում է այդ ոճով գրած նյութերը այլ ոճերով գրված նյութերից.<br>դ. կազմում է վարչագործարարական բնույթի նյութեր` պահպանելով այդ ոճի 10 հիմնական հատկանիշները |
| **Ուսումնառության արդյունք 4** | Իմանալ առօրյա կենցաղային ոճը |
| **Կատարման չափանիշներ** | ա. ներակայացնում է առօրյա կենցաղային ոճը.<br>բ. ներակայացնում է առօրյա-կենցաղային ոճի բաղադրիչները.<br>գ. առանձնացնում է այդ ոճով գրած նյութերը այլ ոճերով գրված նյութերից |
| | **ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ « ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈՒՂՂԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ»** |
| **Մոդուլի դասիչը** | ՀՌԼԴ 04- 09-006 |
| **Մոդուլի նպատակը** | Մոդուլը մշակվել է հայերենի ուղղագրության և ուղղախոսության կանոնները տիրապետելու, ճիշտ գրելու և ճիշտ խոսելու կարողություններ և հմտությունները ուսուցանելու նպատակով |
| **Մոդուլի տևողությունը** | 62 ժամ |
| **Մուտքային պահանջները** | Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է նախնական գիտելիքներ ունենա հայերենի հնչյունական համակարգի մասին, իմանա հայերենի այբուբենի առանձնահատկությունները և նրա հետագա փոփոխությունները |
| **Մոդուլի գնահատման կարգը** | Մոդուլի կատարողականը գնահատվելու է կատարած աշխատանքի հիման վրա` հաշվի առնելով նաև յուրաքանչյուր արդյունքի կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումը |
| **Ուսումնառության արդյունք 1** | Արդյունք 1. Իմանալ հայերենի ձայնավորների ուղղագրության և ուղղախոսության կանոնները |
| **Կատարման չափանիշներ** | ա. կատարում է *է-ե* ձայնավորների ուղղագրության և ուղղախոսության վերաբերյալ առաջադրանքներ, կազմել և վերլուծել բառակազմական պատկեր .<br>բ. կատարում է *օ-ո* ձայնավորների ուղղագրության և ուղղախոսության վերաբերյալ առաջադրանքներ, ունի բառակազմական պատկեր կազմելու և վերլուծելու հմտություններ.<br>գ. կատարում է *ը* ձայնավորի ուղղագրության և ուղղախոսության վերաբերյալ առաջադրանքներ, ունի բառակազմական պատկեր կազմելու և վերլուծելու հմտություններ.<br>դ. գրում է ձայնավորների ուղղագրության վերաբերյալ անսխալ թելադրություններ, թեստային աշխատանքներ, կազմում է ուղղագրական դժվարություն ներկայացնող բառերով հագեցած տեքստեր |
| **Ուսումնառության արդյունք 2** | Իմանալ հայերենի երկհնչյունների ուղղագրության և ուղղախոսության կանոնները |
| **Կատարման չափանիշներ** | ա. տարբերակում է հայերենի երկհնչյունները և երկձայնավորները. |

| | |
|---|---|
| | բ. կատարում է *յա-յե-յո* երկհնչյունների ուղղագրության վերաբերյալ առաջադրանքներ, ճիշտ գրել և արտասանել անձնանունները ու տեղանունները.<br>գ. կատարում է *յ* ձայնանակապի ուղղագրության վերաբերյալ առաջադրանքներ.<br>դ. կազմում է տրված բառերի բառակազմական պատկերը, անսխալ գրում թելադրություններ՝ երկհնչյունների ու ձայնակապի ուղղագրության վերաբերյալ |
| Ուսումնառության արդյունք 3 | Իմանալ բաղաձայնների ուղղագրության ու ուղղախոսության կանոնները |
| Կատարման չափանիշներ | ա. կատարում է եռաշարք բաղաձայնների (բ-պ-փ, գ-կ-ք, դ-տ-թ, ջ-ճ-չ,ձ-ծ-ց) ուղղագրության և ուղղախոսության վերաբերյալ առաջադրանքներ.<br>բ. կատարում է երկշարք բաղաձայնների (զ-ս, ժ-շ, վ-ֆ, ղ-խ,, ն-մ, ր-ռ) ուղղագրության և ուղղախոսության վերաբերյալ առաջադրանքներ.<br>գ. կատարում է *եվ (և)* ուղղագրության և ուղղախոսության վերաբերյալ առաջադրանքներ.<br>դ. կատարում է կրկնակ բաղաձայնների ուղղագրության վերաբերյալ առաջադրանքներ .<br>ե. գրում է բաղաձայնների ուղղագրության վերաբերյալ անսխալ թելադրություններ, կազմել ուղղագրական դժվարություն ներկայացնող բառերով հագեցած տեքստեր |
| **ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ « ՀՆՉՅՈՒՆԱԲԱՆԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ»** | |
| Մոդուլի դասիչը | ՀՌԼԴ 04 -09- 007 |
| Մոդուլի նպատակը | Մոդուլը մշակվել է հնչյունաբանության թեմայով գիտելիքները խորացնելու միջոցով գործնական կարողությունները կատարելագործելու նպատակով |
| Մոդուլի տևողությունը | 34 ժամ |
| Մուտքային պահանջները | Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է յուրացրած լինի «Հայոց լեզվի ուղղագրություն և ուղղախոսություն» մոդուլը |
| Մոդուլի գնահատման կարգը | մոդուլի կատարողականը գնահատվելու է կատարած աշխատանքի հիման վրա՝ հաշվի առնելով նաև յուրաքանչյուր արդյունքի կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումը |
| Ուսումնառության արդյունք 1 | Իմանալ հայոց լեզվի ծագումն ու զարգացման փուլերը ( գրաբար,միջին հայերեն, աշխարհաբար՝ արևելահայ եվ արև-մտահայ), բարբառների հիմնական առանձնահատկությունները |
| Կատարման չափանիշներ | ա. տարբերում է հայերենի ցեղակից և ոչ ցեղակից լեզուները.<br>բ. զանազանում է գրաբարի եվ արևելահայերենի և արևմտահայերենի, միջին հայերենի հնչյունական հիմնական տարբերությունները.<br>գ. թվարկում է բարբառների հիմնական խմբերը, նշել հիմնական առանձնահատկությունները |
| Ուսումնառության արդյունք 2 | Դասակարգել ձայնավոր եվ բաղաձայն հնչյունները, կատարել հնչյունաբանական վերլուծություն |
| Կատարման չափանիշներ | ա) ձայնավորները՝ ըստ լեզվի բարձրացման դիրքի եվ ըստ շարքի.<br>բ) դասակարգում է բաղաձայնները՝ ըստ ձայնի եվ աղմուկի պարունակության, ըստ արտաբերման տեղի, ըստ արտաբերման եղանակի, ըստ կազմության.<br>գ) կատարում է հնչյունաբանական վերլուծություն |
| Ուսումնառության արդյունք 3 | Վանկատել տրված բառերը |
| Կատարման չափանիշներ | ա. կարողանում է հնարավոր բոլոր ձևերով վանկատել բառերը.<br>բ. կարողանում է անսխալ տողադարձել ցանկացած բառ |
| Ուսումնառության արդյունք 4 | Իմանալ հնչյունափոխության տեսակները, հայերենի շեշտադրության կանոնները եվ շեշտից կախված հնչյունափոխության օրինաչափությունները |
| Կատարման չափանիշներ | ա. կարողանում է տարբերակել բառային եվ տրամաբանական շեշտերը՝ բերելով նաև բառերի օրինակներ, որոնցում |

| | |
|---|---|
| | շեշտը չի դրվում վերջին վանկի վրա.<br>բ. տարբերակում է արմատի և ածանցի հնչյունափոխված և անհնչյունափոխ ձևերը՝ մատնանշելով **է/ե/,ի,ու** ձայնավորների, **յա,յու,ույ** երկհնչյունների հնչյունափոխությունը..<br>գ) տարբերակում է փոխազդեցական հնչյունափոխության տեսակները.<br>դ) կարդում է գրաբարյան տեքստեր՝ ելնելով պատմական հնչյունափոխության վերաբերյալ տեսական գիտելիքներից անսխալ |
| **ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ « ՀՆՉՅՈՒՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈՒՂՂԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ »** | |
| **Մոդուլի դասիչը** | ՀԼԴ 04 -09 -008 |
| **Մոդուլի նպատակը** | Մոդուլը մշակվել է հնչյունափոխության հետ կապված ուղղագրության և ուղղախոսության կանոններին տիրապետելու, ճիշտ գրելու, հնչյունափոխված արմատը գտնելու կարողություններ և հմտություններ զարգացնելու համար |
| **Մոդուլի տևողությունը** | 34 ժամ |
| **Մուտքային պահանջները** | Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է ուսումնասիրած լինի«Հայոց լեզվի ուղղագրություն և ուղղախոսություն», «Հնչյունաբանական վերլուծություններ կատարելու հմտություններ» մոդուլները |
| **Մոդուլի գնահատման կարգը** | Մոդուլի կատարողականը գնահատվելու է կատարած աշխատանքի հիման վրա՝ հաշվի առնելով նաև յուրաքանչյուր արդյունքի կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումը |
| **Ուսումնառության արդյունք 1** | Բացատրել ձայնավորների հնչյունափոխության հետ կապված ուղղագրությունը և ուղղախոսությունը |
| **Կատարման չափանիշներ** | ա. ներկայացնում է շեշտից կախված հնչյունափոխության ուղղախոսական արժեքը.<br>բ. գտնում է բառի (արմատի) հնչյունափոխված և անհնչյունափոխ ձևերը՝ նշելով հնչյունափոխությունը.<br>գ. կազմում է նոր բառեր առաջադրված բառերից, որոնցում հնչյունափոխվում են *է, ու, ի* ձայնավորները .<br>դ. կազմում է այնպիսի բառ կամ բառաձև գաղտնավանկ ունեցող տրված բառերից ,որոնցում *ը* ձայնավորը սղվում է.<br>ե. դուրս է գրում տրված տեքստից այն բառերը,որոնցում կա հնչյունափոխություն կամ սղում՝ նշելով հնչյունափոխությունը.<br>զ. կատարում է բառակազմական վերլուծություն՝ վերականգնելով բառի բաղադրիչները, ըստ այդմ էլ՝ հնչյունափոխված կամ անհնչյունափոխ արմատը.<br>է. գտնում է այն բառը, որում ձայնավորը հնչյունափոխվել է բաղաձայնի տրված բառաշարքում |
| **Ուսումնառության արդյունք 2** | Մեկնաբանել յա, յու, ույ երկհնչյունների հնչյունափոխության հետ կապված ուղղագրությունը և ուղղախոսությունը |
| **Կատարման չափանիշներ** | ա. վերականգնում է տրված բառերի հնչյունափոխված հիմքերի անհնչյունափոխ ձևերը՝ նշելով հնչյունափոխությունները.<br>բ. կազմում է այնպիսի բառեր, որոնցում տրված բառերը և արմատները մի դեպքում չենթարկվեն, մյուսում ենթարկվեն հնչյունափոխության (լույս-լուսավոր-վերջալույս).<br>գ. գտնում է արմատի և ածանցի հնչյունափոխությունը, բառում կատարված մեկից ավելի հնչյունափոխությունները.<br>դ. գտնում է այն բառերը, որոնցում երկհնչյունների սղում կա տրված բառաշարքերում.<br>ե.կատարում է երկհնչյունների ուղղագրության վերաբերյալ առաջադրանքներ, անսխալ գրել ուղղագրական դժվարություն ներկայացնող բառերով հագեցած թելադրություններ |
| **Ուսումնառության արդյունք 3** | Պարզաբանել փոխազդեցական հնչյունափոխության հետ կապված ուղղագրության և ուղղախոսության կանոնները |
| **Կատարման չափանիշներ** | ա. տարբերակում է փոխազդեցական հնչյունափոխության տեսակները և օրինակներ է բերում..<br>բ. գտնում է հնչյունի անկում կամ հավելում ունեցող բառերը, վերականգնել սկզբնաբառը, համեմատել գրական ձևերի հետ տրված տեքստում.<br>գ. բերում է դրափոխության օրինակներ, համեմատել նախնական ձևերը գրական ձևերի հետ.. .<br>դ. բերում է առնմանության և տարնմանության օրինակներ, համեմատում նախնական ձևերը գրական ձևերի հետ՝բացատրելով հնչյունների փոխազդեցությունը |

| | |
|---|---|
| | ե. բերում է հնչյունների պարզեցման և բարդացման օրինակներ՝ բացատրելով բառի ուղղագրությունը և ուղղախոսությունը (վաքսուն>վացուն (ք+ս=ց) սեպուհ + ական > սեպհական > սեփական (պ+հ=փ) և այլն)<br>զ. կարողանում է բերել հնչյունների ամփոփման և կրճատման, համաբանական հնչյունափոխության օրինակներ՝բացատրելով վանկերից կամ հնչյունակապակցություններից մեկի դուրսմղման հետևանքով առաջացած ուղղագրությունը |
| **Ուսումնառության արդյունք 4** | Իմանալ պատմական հնչյունափոխության հետ կապված ուղղագրություն և ուղղախոսություն |
| **Կատարման չափանիշներ** | ա. բերում է օրինակներ, որոնցում գրաբարյան բառասկզբի *յ* հնչյունը կարդացվում է **հ**, իսկ բառավերջի **յ-***ն* ընկել է.<br>բ. բերում է օրինակներ, որոնցում ընկել են բառավերջի **հ** և **ն** վերջնահնչյունները, բացատրում է արդի հայերենում դրանց վերականգնելու հետևանքով առաջացած ուղղագրությունը.<br>գ.բերում է օրինակներ, որոնցում գրաբարյան պատճառական *-ուցան* ածանցը արդի հայերենում դարձել է **-ց-**, **-ցն-**.<br>դ. բացատրում է հնչյունների միացման և պարզեցման հետևանքով առաջացած հնչյունափոխությունը, բերել օրինակներ |
| **ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ « ԲԱՌԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ »** | |
| **Մոդուլի դասիչը** | ՅՈՒԼԴ - 04 09 -009 |
| **Մոդուլի նպատակը** | Մոդուլը մշակվել է բառագիտությունից տեսական և գործնական գիտելիքներ հաղորդելու, դրանք կիրառելու հմտություններ զարգացնելու նպատակով |
| **Մոդուլի տևողությունը** | 68 ժամ |
| **Մուտքային պահանջները** | այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է նախնական գիտելիքներ ունենա բառագիտությունից, յուրացրած լինի «Հայոց լեզվի ուղղագրության և ուղղախոսության հմտություններ»,«Հնչյունաբանական վերլուծություններ կատարելու հմտություններ» մոդուլները |
| **Մոդուլի գնահատման կարգը** | մոդուլի կատարողականը գնահատվելու է կատարած աշխատանքի հիման վրա՝ հաշվի առնելով նաև յուրաքանչյուր արդյունքի կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումը |
| **Ուսումնառության արդյունք 1** | Բնորոշել բառը, բառապաշարը, լեզվի բառային կազմը |
| **Կատարման չափանիշներ** | ա. տարբերակում է բառապաշարի տարբեր շերտերը՝ համագործածական, գրքային, խոսակցական.<br>բ. ճիշտ է դասակարգում բառապաշարը՝ գործառական և գործածական, ծագումնաբանական .<br>գ. տարբերում է բառապաշարի հարստացման միջոցները՝ բառակազմություն, փոխառություն, պատճենում՝մատնանշելով փոխառյալ և բնիկ բառերի համարժեքությունը.<br>դ. ճիշտ է ներկայացնում հնաբանությունների ոճական արժեքը և նորաբանությունների գործառական դերը.<br>դ. բնագրում, առանձնացնում է բարբառային կազմությունները, օտարաբանությունները.<br>ե. գործածում է տերմինային բառեր ու կապակցություններ, ելնելով հաղորդակցման նպատակներից.<br>զ. ճիշտ է օգտագործել տարբեր ոճական կիրառություն ունեցող բառեր իր խոսքում |
| **Ուսումնառության արդյունք 2** | Տարբերի բազմիմաստ բառերի նշանակությունները բանավոր և գրավոր խոսքում, առանձնացնի բառերի տեսակներն ըստ ձևի և իմաստի հարաբերության |
| **Կատարման չափանիշներ** | ա. տարբերակում է բառերի տեսակներն ըստ իմաստի և ձևի փոխհարաբերության (հոմանիշներ, հականիշներ համանուններ,հարանուններ).<br>բ. գտնում է տրված բառերի հոմանիշներն ու հականիշները, հոմանիշների շարքից ընտրում տրված բառի հետ կապակցվող միավորը, ճիշտ կիրառում հոմանիշների իմաստային նրբերանգները.<br>գ. գտնում է հոմանիշները, հականիշները, համանունները, հարանունները հանձնարարված տեքստում.<br>դ. տարբերակում է բառային և քերականական, տարարմատ և նույնարմատ համանունները, կազմում նախադասություններ. |

| | |
|---|---|
| | ե. տարբերակում է հարանունները և բառային տարբերակները՝ ընտրելով տվյալ նախադասությանը համապատասխանող բառը.<br>զ. տարբերում է մենիմաստ և բազմիմաստ բառերը, կարողանում է բառարանով ստուգել և գտնել բառի գլխավոր ու երկրորդական իմաստները.<br>է. կազմում է նախադասություններ բառի ուղիղ և փոխաբերական իմաստներով.<br>ը. կատարում է տեքստային աշխատանք(գտնել բազմիմաստ բառերը, բացատրել նրանց իմաստները, գտնել հոմանիշներն ու հականիշները, բառերը փոխարինել հարմար հոմանիշներով և այլն) |
| **Ուսումնառության արդյունք 3** | Տարբերակել բառը և դարձվածքը |
| **Կատարման չափանիշներ** | ա. ներկայացնում է բառերի և դարձվածքների փոխաբերական իմաստները և դրանց ոճական արժեքը պատկերավոր խոսք կազմելիս, տարբերակում է դարձվածքներն այլ բառակապակցություններից.<br>բ. կազմում է դարձվածքներից և բառերից հոմանշային շարքեր և նախադասություններ՝ տրված բառակապակցությունների ուղիղ և դարձվածքային իմաստներով.<br>գ.տարբերակում է դարձվածքների և թևավոր խոսքերի ընդհանրություններն ու տարբերությունները, կարողանում է նշել տրված դարձվածքների սկզբնաղբյուրները.<br>դ. օգտվում է հայերենի դարձվածքների հարստությունից, կիրառում է ասացվածքներ, թևավոր խոսքեր իր խոսքում.<br>ե. կատարում է ստեղծագործական աշխատանք (տրված բառերով և դարձվածքներով կազմել նախադասություններ, գրել շարադրություն և այլն) |
| **Ուսումնառության արդյունք 4** | Իմանալ բառերի տեսակներն ըստ կազմության՝ պարզ, բարդ, ածանցավոր և կարողանա կատարել բառակազմական վերլուծություն |
| **Կատարման չափանիշներ** | ա. կատարում է ձևույթաբանական վերլուծություն՝ տարբերակելով հիմնական և երկրորդական ձևույթները՝ իրենց ենթատեսակներով.<br>բ. տարբերակում է գոյականակերտ, ածականակերտ, մակբայակերտ և բայակերտ ածանցները, կարողանում է բառեր կազմել տրված ածանցներով.<br>գ. տարբերակում է բարդությունների տեսակները՝ համադրական, հարադրական,, կրկնավոր, անսխալ գրում է բաղադրյալ բառերը և հնչյունափոխված արմատները.<br>դ. տարբերակում է հապավական բարդությունների տեսակները, արտահայտում բառակապակցություններով .<br>ե.կատարում է բառակազմական վերլուծություն(գտնել բառի բաղադրիչները՝ արմատներ, ածանցներ,հոդակապ, նշել արմատի հնչյունափոխված և անհնչյունափոխ տարբերակները և այլն), բառակազմական վարժություն(գտնել նույն արմատով և ածանցով բառեր, տրված նմուշով կազմել բաղադրյալ բառեր և այլն).<br>զ.համառոտագրում է տրված բառերը |
| **ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ « ԲԱՌԱԿԱԶՄՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈՒՂՂԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ»** | |
| **Մոդուլի դասիչը** | ՀՈՒԼԴ - 04 09 -010 |
| **Մոդուլի նպատակը** | մոդուլը մշակվել է բառակազմության հետ կապված ուղղագրության և ուղղախոսության կանոններին տիրապետելու և դրանք գործնականում կիրառելու հմտություններ զարգացնելու նպատակով |
| **Մոդուլի տևողությունը** | 34 ժամ |
| **Մուտքային պահանջները** | Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է յուրացրած լինի «Հայոց լեզվի ուղղագրություն և ուղղախոսություն», «Հնչյունաբանական վերլուծություններ կատարելու հմտություններ», «Հնչյունափոխության հետ կապված ուղղագրություն և ուղղախոսություն» մոդուլները |
| **Մոդուլի գնահատման կարգը** | մոդուլի կատարողականը գնահատվելու է կատարած աշխատան<br>քի հիման վրա՝ հաշվի առնելով նաև յուրաքանչյուր արդյունքի կատարման չափանիշների բավարար մակարդակի |

| | |
|---|---|
| | ապահովումը |
| **Ուսումնառության արդյունք 1** | Իմանալ նախածանցավոր, վերջածանցավոր, համածանցավոր բառերի ուղղագրությունն ու ուղղախոսությունը |
| **Կատարման չափանիշներ** | ա. վերականգնում է հնչյունափոխված և անհնչյունափոխ հիմքերը, ավելացնելով ածանցներ`կազմում է նոր բառեր,բացատրում դրանց ուղղագրությունը .<br>բ. գտնում է հնչյունափոխված ածանցը` վերականգնելով անհնչյունափոխ ձևը, բացատրում հնչյունափոխված ածանցի ուղղագրությունը .<br>գ. վերլուծում է բառակազմորեն տրված բառերը, ընդգծում ածանցները, բացատրում ուղղախոսությունը.<br>դ. տարբերակում է ածանցի` հոդակապով և առանց հոդակապի միացումը արմատներին, ճիշտ գրել այն բառերը, որոնցում ե-ով վերջացող բաղադրիչի վրա ավելացել է ածանց (ոսկևորել, ուղևոր) |
| **Ուսումնառության արդյունք 2** | Իմանալ բարդ բառերի բաղադրիչների միացման տարբեր ձևերը, դրանց ուղղագրությունն ու ուղղախոսությունը |
| **Կատարման չափանիշներ** | ա. տարբերակում է բարդություններն ըստ գրության ձևի` համադրական (տեսակները` իսկական, կցական, հաստատական) և հապավական.<br>բ. կազմում է իսկական բարդություններ` հոդակապով և առանց հոդակապի, բացատրել հնչյունափոխված արմատի կամ ածանցի ուղղագրությունը.<br>գ. ճիշտ է գտնում կցական բարդություններ` խուսափելով զուգաձևություններից.<br>դ. տարբերակում է հարադրական (վերլուծական) բարդության տեսակները, կատարում առաջադրանքներ միության գծիկով և առանց գծիկի գրվող հարադրական բարդությունների վերաբերյալ.<br>ե. կատարում է բարդությունների ուղղագրության և ուղղախոսության վերաբերյալ տարբեր բնույթի առաջադրանքներ, թեստային աշխատանքներ |
| **Ուսումնառության արդյունք 3** | Իմանալ հապավումների գրության ձևերը և դրանց ուղղագրությունն ու ուղղախոսությունը |
| **Կատարման չափանիշներ** | ա. տարբերակում է հապավումների տեսակները(տառային, վանկային, խառը), ճիշտ է գրել և կարդալ տառային հապավումները (ԿԳՆ` կըգընը, ՀՄԸՄ` հոմենըթմեն և այլն).<br>բ. ճիշտ է կարդում օտար լեզուներից վերցված տառային հապավումները` ճիշտ հնչյունադարձելով և գրադարձելով (ՍիԷնԷն, ԲիԲիՍի, կամ ՆԱՏՕ, ՅՈՒՆԵՍԿՕ).<br>գ.կազմում է վանկային հապավումներ` ճիշտ կիրառելով մեծատառերի և փոքրատառերի գրության վերաբերյալ կանոնները.<br>դ.ճիշտ է կազմում և գրում խառը տիպի հապավումները, տրված հապավումներն արտահայտում է համապատասխան բառակապակցություններով` բացատրելով դրանց ուղղագրությունն ու ուղղախոսությունը |
| **Ուսումնառության արդյունք 4** | Իմանալ համառոտագրությունների ուղղագրությունն ու ուղղախոսությունը |
| **Կատարման չափանիշներ** | ա. ճիշտ է համառոտագրել` գրելով բառի սկզբնատառը(Ա.Բակունց)կամ առաջին մի քանի տառերը` բաղաձայնից հետո ընկած մասի կրճատումով(Հովհ. Թումանյան).<br>բ. ճիշտ է համառոտագրել` գրելով միայն բաղաձայնները կամ դրանց մեծ մասը (հմմտ., պրն.).<br>գ. ճիշտ է համառոտագրել չափ ու կշռի միավորները (կգ, դմ, մգ)..<br>դ. ճիշտ է համառոտագրել եզակի և հոգնակի թվերը (ընկ. ընկ. կամ դդ., թթ.).<br>ե. ճիշտ է կարդում համառոտագրված բառերը |
| **Ուսումնառության արդյունք 5** | Իմանալ մեծատառերի ուղղագրությունը |
| **Կատարման չափանիշներ** | ա. ճիշտ է գրում հարադրավոր հատուկ անունները,որոնց բոլոր բաղադրիչները գրվում են մեծատառով.<br>բ. ճիշտ է գրում հարադրավոր բաղադրյալ հատուկ անունները, որոնց միայն առաջին բաղադրիչն է գրվում մեծատառով.<br>գ.ճիշտ է գրում գրական ստեղծագործությունների, գիտական գործերի, թերթերի, ամսագրերի, պատմական նշանավոր |

| | |
|---|---|
| | անցքերի, պետական տոների, շքանշանների, համաշխարհային կազմակերպությունների, հաստատությունների անունները.<br>դ.կատարում է տարբեր բնույթի առաջադրանքներ մեծատառերի գործածության վերաբերյալ, անսխալ գրում թելադրություններ, թեստային աշխատանքներ: |
| **ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ « ՁԵՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԿԱՄ ԱՆՈՒՆ ԽՈՍՔԻ ՄԱՍԵՐ »** | |
| Մոդուլի դասիչը | ՅՈՒԼԴ - 04 09 -011 |
| Մոդուլի նպատակը | մոդուլը մշակվել է ձևաբանությունից տեսական և գործնական գիտելիքներ հաղորդելու, ձևաբանական վերլուծություններ կատարելու կարողություններ և հմտություններ ձևավորելու համար |
| Մոդուլի տևողությունը | 62 ժամ |
| Մուտքային պահանջները | Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է նախապես գիտելիքներ ունենա բառագիտությունից, յուրացրած լինի «Հայոց լեզվի ուղղագրության և ուղղախոսության հմտություններ», «Հնչյունաբանական վերլուծություններ կատարելու հմտություններ» մոդուլները |
| Մոդուլի գնահատման կարգը | Մոդուլի կատարողականը գնահատվելու է կատարած աշխատանքի հիման վրա՝ հաշվի առնելով նաև յուրաքանչյուր արդյունքի կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումը |
| Ուսումնառության արդյունք 1 | Իմանալ լեզվի ձևաբանական կառուցվածքի և նրա տարրերի մասին |
| Կատարման չափանիշներ | ա. տարբերակում է քերականական իմաստ և ձև հասկացությունները.<br>բ. տարբերակում է քերականական կարգերը.<br>գ.համադրում է կցական և թեքական, համադրական և վերլուծական ձևերի տեսակարար կշիռը հայերենի քերականական համակարգում.<br>դ.տարբերակում է խոսքի մասերը որպես բառապաշարի իմաստաքերականական խմբեր.<br>ե. տարբերակում է խոսքի մասերը ըստ նրանց արտահայտած ընդհանուր իմաստի.<br>զ. որոշում է նյութական, սպասարկու և վերաբերմունքային խոսքի մասերի դերը խոսքի կառուցման մեջ |
| Ուսումնառության արդյունք 2 | Իմանալ նյութական իմաստ ունեցող կամ անվանողական խոսքի մասերը, գոյական անունը |
| Կատարման չափանիշներ | ա. տարբերակում է գոյականի տեսակները(անձնանիշ և իրանիշ, հատուկ և հասարակ, նյութական և վերացական և այլն),կարողանում է ճիշտ գրել բաղադրյալ հատուկ անունները.<br>բ. ճիշտ է կազմում գոյականի հոգնակի թիվը և խոսքում ճիշտ կիրառել, տարբերակում է անհոգնական, անեզական, հավաքական գոյականները.<br>գ. տարբերակում է գոյականի հոլովները՝ ուղղական, սեռական, տրական, հայցական, բացառական, գործիական, ներգոյական.<br>դ. տարբերակում է արտաքին և ներքին հոլովումները, կարողանում է անսխալ հոլովել տրված բառերը և գործածել նախադասությունների մեջ.<br>ե. տարբերակում է որոշյալ և անորոշ առումները, հայերենի հոդերի ցուցական, ստացական և դիմորոշ ֆունկցիաները.<br>զ. գտնում է գոյականի քերականական կարգերը, բնագրից դուրս գրում գոյականները, կատարում ձևաբանական վերլուծություն |
| Ուսումնառության արդյունք 3 | Իմանալ նյութական իմաստ ունեցող կամ անվանողական խոսքի մասերը, ածական և թվական անուններ |
| Կատարման չափանիշներ | ա. տարբերակում է ածականի տեսակները՝ որակական և հարաբերական.<br>բ. տարբերակում է ածականի համեմատության աստիճանները՝ դրական, բաղդատական, գերադրական.<br>գ. կատարում է աշխատանք բնագրի վրա՝ ածականի մակդիրային կիրառության վերաբերյալ<br>դ. տարբերակում է թվականի տեսակները՝ քանակական (բացարձակ, կոտորակային, բաշխական) և դասական.<br>ե. ճիշտ է գործածում թվականի գրավոր արտահայտության ձևերը. |

| | |
|---|---|
| | գ. հոլովում է ածական և թվական անունները և փոխանվանաբար գործածում նախադասությունների մեջ. <br> է. կատարում է ձևաբանական վերլուծություն, զանազան բնույթի վարժություններ, թեստային աշխատանքներ |
| Ուսումնառության արդյունք 4 | Իմանալ, թե ինչ է դերանունը, նրա կիրառությունը |
| Կատարման չափանիշներ | ա. տարբերակում է դերանվան տեսակները՝ անձնական, ցուցական, փոխադարձ, հարցական, հարաբերական, որոշյալ, անորոշ, ժխտական. <br> բ. տարբերակում է դերանվանական հոլովումն անվանականից ճիշտ է հոլովում տրված դերանունները. <br> գ. ճիշտ է կիրառում դերանունների հոգնակի թվի կազմության և հոլովման առանձնահատկությունները խոսքում. <br> դ. բացատրում է դերանունների հարաբերակցությունը այլ խոսքի մասերի հետ՝ որպես անձնանիշ և իրանիշ գոյականներին փոխարինող բառեր, ածականին, թվականին, մակբային փոխարինող բառեր. <br> ե. կատարում է թեստային աշխատանքներ և վարժություններ՝ կապված քերականական ձևերի ճիշտ ընտրության և անսխալ գործածության հետ |
| **ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ « ԲԱՅ. ՆՐԱ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ »** | |
| Մոդուլի դասիչը | ՀՌԼԴ - 04 09 -012 |
| Մոդուլի նպատակը | Մոդուլը մշակվել է ձևաբանությունից տեսական և գործնական գիտելիքներ հաղորդելու, ձևաբանական վերլուծություններ կատարելու, բայի իմաստային, ձևաբանական, բառակազմական, շարահյուսական առանձնահատկությունները տարբերակելու, մակբայի տեսակներն ու առանձնահատկությունները տարբերակելու կարողություններ ու հմտություններ զարգացնելու նպատակով |
| Մոդուլի տևողությունը | 68 ժամ |
| Մուտքային պահանջները | Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է ուսումնասիրած լինի «Հայոց լեզվի ուղղագրության և ուղղախոսության հմտություններ», «Հնչյունաբանական վերլուծություններ կատարելու հմտություններ», «Ձևաբանություն» մոդուլները |
| Մոդուլի գնահատման կարգը | մոդուլի կատարողականը գնահատվելու է կատարած աշխատանքի հիման վրա՝ հաշվի առնելով նաև յուրաքանչյուր արդյունքի կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումը |
| Ուսումնառության արդյունք 1 | Իմանալ բայի դրսևորման ձևերը՝ դիմավոր և անդեմ, անդեմ բայերի/դերբայների/ տեսակները և հարաբերակցությունը այլ խոսքի մասերի հետ |
| Կատարման չափանիշներ | ա. տարբերակում է բայի դրսևորման ձևերը՝ դիմավոր և անդեմ. <br> բ. տարբերակում է դերբայներն ու ձևաբայերը, կազմում է տրված բայերի դերբայական ձևերը <br> գ. հոլովում է դերբայները և որոշել նրանց ձևաբանական ու շարահյուսական առանձնահատկությունները. <br> դ. դուրս է գրում գեղարվեստական գրականությունից օրինակներ՝ դերբայների տարբեր հոլովածներով և շարահյուսական կիրառություններով. <br> ե. բացատրում է է դերբայների հարաբերակցությունը այլ խոսքի մասերի հետ և հարակատար դերբայի երկակի բնույթը. <br> զ. Կազմում է դերբայական դարձվածներով նախադասություններ և կետադրում |
| Ուսումնառության արդյունք 2 | Իմանալ բայի կազմությունը, սեռը |
| Կատարման չափանիշներ | ա. տարբերակում է ածանցավոր բայերի տեսակները՝սոսկածանցավոր, պատճառական, բազմապատկական և կրավորական. <br> բ. կարողանում է տարբերակել բարդ (վերլուծական, հարադրական բայերի) տեսակները՝ հարադիր և զուգադրական. <br> գ. գտնում է անորոշի, անցյալ կատարյալի, դերբայական հիմքերից կազմվող ձևերը, զանազանում է անցյալ կատարյալի հիմքերի տիպերը՝ ցոյական, ռեական, պարզ կամ արմատական Առանձնացնում է տրված բայերի հիմքերը և դրանցով կազմում բայանուն գոյականներ Տրված տեքստից առանձնացնում է բայերը, գտնում նրանց անորոշի և |

| | |
|---|---|
| | անցյալ կատարյալի հիմքերը.<br>դ.խմբավորում է տրված բայերն ըստ սեռի՝ ներգործական, կրավորական, չեզոք<br>ե. առանձնացնում է կրկնասեռ և կրավորաձև չեզոք բայերը.<br>զ. փոխակերպում է ներգործական կառուցվածքի նախադասությունները կրավորական կառուցվածքի նախադասությունների |
| **Ուսումնառության արդյունք 3** | Իմանալ բայի խոնարհումը. դեմք, թիվ, եղանակ, ժամանակ Օժանդակ բայի ուղղագրությունը |
| **Կատարման չափանիշներ** | ա. տարբերակում է բայի դեմքի, թվի, եղանակի, ժամանակի քերականական կարգերը, կարողանում է ձևաբանական վերլուծության ենթարկել տրված բայերը.<br>բ. տարբերակում է բայի եղանակները (սահմանական, հրամայական, ըղձական, ենթադրական և հարկադրական).<br>գ. խոնարհում է տրված բայը սահմանական եղանակի բոլոր ժամանակաձևերով և գործածել նախադասության մեջ.<br>դ. խոնարհում է տրված բայը հրամայական եղանակով և գործածել նախադասության մեջ.<br>ե. խոնարհում է տրված բայը ըղձական, ենթադրական, հարկադրական եղանակների ժամանակներով և գործածել նախադասությունների մեջ.<br>զ. վերլուծում է բնագիրը՝ առանձնացնելով բայի հարացուցային ձևերը և բնութագրելով դրանք |
| **Ուսումնառության արդյունք 4** | Իմանալ երկրորդական բաղադրյալ ժամանակաձևերի կազմությունը, ժխտական ձևերի կազմությունը և ուղղագրությունը Անկանոն և պակասավոր բայեր |
| **Կատարման չափանիշներ** | ա. տարբերակում է երկրորդական բաղադրյալ ժամանակաձևերը (լինել օժանդակ բայով).<br>բ. խոնարհում է տրված բայերը շարունակական, վիճակային, մտադրական ժամանակաձևերով.<br>գ. ճիշտ է կիրառել խոսքում ժխտական ձևերի կազմության և ուղղագրության հետ կապված առանձնահատկությունները.<br>դ. դուրս է գրում տեքստից անկանոն բայերը և բացատրում, թե դիմավոր և անդեմ ո՞ր ձևերում են դրանք անկանոնություն դրսևորում.<br>ե. դուրս է գրում տեքստից անկանոն բայերը և բացատրում, թե որտե՞ղ է դրսևորվում նրանց պակասավորությունը.<br>զ. կատարում է տարբեր բնույթի առաջադրանքներ, վարժություններ, թեստային աշխատանքներ բայի կազմության, ուղղագրության, քերականական կարգերի, շարահյուսական կիրառության վերաբերյալ |
| **Ուսումնառության արդյունք 5** | Իմանա մակբայի տեսակները և առանձնահատկությունները |
| **Կատարման չափանիշներ** | ա. տարբերակում է մակբայի տեսակները (տեղի, ժամանակի, ձևի, չափ ու քանակի, ընդհանրական).<br>բ. ճիշտ է կիրառում մակբայների իմաստային, ձևաբանական, շարահյուսական, բառակազմական առանձնահատկությունները.<br>գ. կազմում է մակբայներ տրված գոյականներից ու ածականներից.<br>դ. գործածում է մակբայներ տրված բայերի հետ և դրանք խմբավորում ըստ տեսակների.<br>ե. մակբայների փոխարեն գործածում է համապատասխան դերանուններ, կազմում է բառակապակցություններ՝ մակբայները գործածելով բայանուն գոյականների և ածականների հետ |
| **ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ « ՍՊԱՍԱՐԿՈՒ ԵՎ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԱՅԻՆ ԽՈՍՔԻ ՄԱՍԵՐ »** | |
| **Մոդուլի դասիչը** | ՀՈՒԼԴ - 04 09 -013 |
| **Մոդուլի նպատակը** | մոդուլը մշակվել է քերականական իմաստ ունեցող կամ սպասարկու խոսքի մասերի, ինչպես նաև վերաբերմունքային խոսքի մասերի<br>վերաբերյալ տեսական և գործնական գիտելիքներ հաղորդելու, ձևաբանական վերլուծություններ կատարելու հմտություններ զարգացնելու նպատակով |
| **Մոդուլի տևողությունը** | 32 ժամ |
| **Մուտքային պահանջները** | այս մոդուլըն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է ուսումնասիրած լինի «Հայոց լեզվի ուղղագրության և |

| | |
|---|---|
| | ուղղախոսության հմտություններ»,«Ձևչյունաբանական վերլուծություններ կատարելու հմտություններ», «Ձևաբանություն» մոդուլները |
| Մոդուլի գնահատման կարգը | մոդուլի կատարողականը գնահատվելու է կատարած աշխատանքի հիման վրա` հաշվի առնելով նաև յուրաքանչյուր արդյունքի կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումը: |
| Ուսումնառության արդյունք 1 | իմանա կապը` որպես խոսքի մաս, նրա տեսակներն ու շարահյուսական դերը. |
| Կատարման չափանիշներ | ա. խմբավորում է կապերն ըստ շարադասության (նախադրություն, հետադրություն, երկդրություն).<br>բ. խմբավորում է կապերն ըստ կազմավորման աստիճանականության (իսկական, կապ, անիսկական կապ, կապական բառ).<br>գ. տարբերակում է կապերն ըստ նրանց արտահայտած հարաբերությունների և իմաստների.<br>դ. խմբավորում է անիսկական կապերն ու կապական բառերը ըստ այն խոսքի մասերի, որոնցից առաջացել են.<br>ե. լրացնում է աղյուսակը տվյալ հոլովները պահանջող կապերով : Տրված կապերի հետ գործածում է համապատասխան հոլովներով բառեր: |
| Ուսումնառության արդյունք 2 | իմանա շաղկապը` որպես խոսքի մաս, նրա տեսակներն ու շարահյուսական դերը. |
| Կատարման չափանիշներ | ա. տարբերակում է համադասական և ստորադասական շաղկապները.<br>բ. խմբավորում է համադասական շաղկապներն ըստ իմաստի (միավորիչ-հավելական, ներհակական, տրոհական).<br>գ. խմբավորում է ստորադասական շաղկապները ըստ իմաստի (մեկնական, նպատակի, ժամանակի, պատճառի և հիմունքի և այլն).<br>դ. խմբավորում է շաղկապներն ըստ կազմության (պարզ, բարդ, ածանցավոր, քերականական ձևերից առաջացած, մենադիր, զուգադիր, կրկնադիր).<br>ե. ծավալում է համառոտ տեքստը` գործածելով տարբեր շաղկապներ: |
| Ուսումնառության արդյունք 3 | իմանա վերաբերականը `որպես խոսքի մաս, նրա գործածությունը խոսքում. |
| Կատարման չափանիշներ | ա. տարբերակում է վերաբերականների տեսակները (հաստատական, ցուցական, ժխտական, երկբայական, գնահատողական,սաստկական, սահմանափակման, բաղձանքի, զիջական, կամային).<br>բ. խավորում է տրված վերաբերականներն ըստ ոճական-գործառական շերտերի.<br>գ. տարբերում է վերաբերականների միջոցով սեփական վերաբերմունք արտահայտել տրված տեղեկությունների նկատմամբ.<br>դ. կետադրում է բնագիրը` ընդգծելով վերաբերականները և որոշելով նրանց տեսակը և կազմությունը: |
| Ուսումնառության արդյունք 4 | իմանա ձայնարկությունը` որպես խոսքի մաս, նրա գործածությունը խոսքում: |
| Կատարման չափանիշներ | ա. տարբերակում է ձայնարկությունների տեսակները (զգացական, կոչական, նմանաձայնական).<br>բ. խմբավորում է ձայնարկություններն ըստ կազմության` պարզ, բարդ (կցական, հարադրավոր).<br>գ. կազմում է զգացական ձայնարկություններով նախադասություններ, որոնցում նրանք արտահայտեն զարմանք, ուրախություն, ափսոսանք, ցավ.<br>դ. բերում է դարձվածքների օրինակներ, որոնց մի բաղադրիչը ձայնարկություն է .<br>ե. փոխադրում է տրված հատվածի բովանդակությունը` գործածելով համապատասխան ձայնարկություններ և կետադրելով: |
| **ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ « ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ. ՏԵՍԱԿՆԵՐԸ »** | |
| Մոդուլի դասիչը | ՅՈՒԼԴ - 04 09 -014 |
| Մոդուլի նպատակը | Այս մոդուլը մշակվել է նախադասության մասին տեսական գիտելիքները գործնականում ուսուցանելու հմտություններ տալու նպատակով: |
| Մոդուլի տևողությունը | 94 ժամ |

| | |
|---|---|
| **Մուտքային պահանջները** | Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է նախապես ուսումնասիրած լինի նախադասություն, նախադասության բնորոշ հատկանիշները, նախադասության տեսակներն ըստ կազմության մոդուլները: |
| **Մոդուլի գնահատման կարգը** | Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է: |
| **Ուսումնառության արդյունք 1** | իմանա  շարահյուսական կապակցման միջոցներն ու եղանակները. |
| **Կատարման չափանիշներ** | ա. տարբերակում  է համաձայնությունը, խնդրախոսությունը/կամ կառավառում/ և առդրությունը.<br>բ. օգտագործում է կապակցության միջոցները`  բառաձևերը, կապերն ու շաղկապները.<br>գ.  գիտի  շարահյուսության  առանձնահատկությունները, կարողանում է ճիշտ  կիրառել հնչերանգը: |
| **Ուսումնառության արդյունք 2** | իմանա` ինչ է բառակապակցությունը, նախադասության տեսակներն ըստ խոսողի վերաբերմունքի կամ եղանակավորման, հաստատական ու ժխտական  նախադասություն. |
| **Կատարման չափանիշներ** | ա. տարբերակում  է բառակապակցության  տեսակները.<br>բ.  տարբերակում է նախադասության  տեսկաներն  ըստ խոսողի  վերաբերմունքի կամ  եղանակավորման.<br>գ. կազմում է  հաստատական և ժխտական նախադասություն: |
| **Ուսումնառության արդյունք 3** | իմանա  նախադասության տեսակներն ըստ կառուցվածքի և կազմության. |
| **Կատարման չափանիշներ** | ա. կազմում է երկկազմ նախադասություն.<br>բ.  կազմում է միակազմ նախադասություն.<br>գ.  կազմում է  համառոտ նախադասություն.<br>դ. կազմում է  ընդարձակ  նախադասություն: |
| **Ուսումնառության արդյունք 4** | իմանա   բարդ նախադասության  տեսակները. |
| **Կատարման չափանիշներ** | ա. տարբերակում է  բարդ  համադասական  նախադասությունը,նրա   տեսակները.<br>բ.  տարբերակում  է    բարդ  ստորադասական  նախադասության  տեսակներն  ըստ  բաղադրիչների.  քանակի,  նրանց կապակցման միջոցները.<br>գ. տարբերում է   գլխավոր և երկրորդական նախադասությունները.<br>դ. տարբերակում է ստորադաս  նախադասությունների բնույթն ու նրանց կապակցությունը: |
| **Ուսումնառության արդյունք 5** | իմանա նախադասության հարակից միավորներն ու մեջբերվող խոսքը,, կետադրական  օրինաչափությունները: |
| **Կատարման չափանիշներ** | ա. տարբերակում է միջանկյալ և  ներդրյալ  նախադասություններ<br>բ. տարբերակում է ուրիշի ուղղակի  և անուղղակի խոսքը.<br>գ. կետադրում է բազմակի անդամներով,տրոհվող որոշչով նախադասություն.<br>գ. կետադրում է տրոհվող հատկացուցչով, բացահայտիչով և իմաստով չկապվող բառերը.<br>դ. կետադրում է դերբայական դարձվածը` նրա տարբեր  կիրառությունների  դեպքում.<br>ե. կետադրում է կոչականը, ուրիշի ուղղակի խոսքի և հրամայական եղանակի բայերը.<br>զ. կետադրում է տրոհվող բառերը, բառակապակցությունները, ձայնարկությունները.<br>է. կետադրում է բարդ համադասական, ստորադասական և միջանկյալ նախադասությունները: |
| **ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ  « ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԸ »** | |
| **Մոդուլի դասիչը** | ՀՌԼԴ - 04-09 -015 |
| **Մոդուլի նպատակը** | Այս մոդուլը մշակվել է նախադասության գլխավոր, երկրորդական անդամների մասին տեսական գիտելիքներ տալու նպատակով: |
| **Մոդուլի տևողությունը** | 54  ժամ |
| **Մուտքային պահանջները** | Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է ուսումնասիրած լինի նախորդ` «Նախադասության  տեսակները» մոդուլը: |

| | |
|---|---|
| **Մոդուլի գնահատման կարգը** | Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է: |
| **Ուսումնառության արդյունք 1** | իմանա, թե որոնք են նախադասության գլխավոր անդամները. |
| **Կատարման չափանիշներ** | ա. տարբերում է ենթական և նրա արտահայտությունները նախադասության մեջ.<br>բ. թվարկում է ենթակայի տեսակները.<br>գ. տարբերում է ստորոգյալի տեսակները.<br>դ. համաձայնեցնում է ենթական ու ստորոգյալը: |
| **Ուսումնառության արդյունք 2** | իմանա, թե որոնք են նախադասության երկրորդական անդամները |
| **Կատարման չափանիշներ** | ա. տարբերակում է գոյական անդամի լրացումները.<br>բ. տարբերակում է բայական անդամի լրացումները/խնդիրներ,պարագաներ/.<br>գ. տարբերակում է տրոհվող լրացումները: |
| **Ուսումնառության արդյունք 3** | իմանա նախադասության բազմակի անդամները. |
| **Կատարման չափանիշներ** | ա. առանձնացնում է բազմակի ենթական, բազմակի բայական ստորոգյալը, բազմակի անվանական ստորոգյալը նախադասության մեջ.<br>բ. տարբերակում է գոյականական անդամի բազմակի անդամներ.<br>գ. տարբերակում է բայական անդամի բազմակի անդամներ: |
| **Ուսումնառության արդյունք 4** | Իմանա պարզ նախադասության շարադասությունը. |
| **Կատարման չափանիշներ** | ա. ճիշտ շարադասությամբ է օգտագործում գլխավոր անդամները նախադասության մեջ.<br>բ. ճիշտ է կիրառում գոյականական անդամը (լրացումների շարադասությունը) նախադասության մեջ.<br>գ. ճիշտ է կիրառում բայական անդամի լրացումները (պարագաների շարադասություն) նախադասության մեջ.<br>դ. ճիշտ է կիրառում խնդիրների շարադասությունը նախադասության մեջ: |
| **Ուսումնառության արդյունք 5** | Իմանա նախադասության այլ տեսակները: |
| **Կատարման չափանիշներ** | ա. տարբերակում է միադեմ, բայական, անդեմ անվանական նախադասությունները.<br>բ. տարբերակում է բառ-նախադասությունը (տեսակները).<br>գ. տարբերակում է թերի նախադասությունը(տեսակները): |
| **ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ »** | |
| **Մոդուլի դասիչը** | ՀՈՒԼԴ - 04 09 -016 |
| **Մոդուլի նպատակը** | Մոդուլը նախատեսված է հիմնական դպրոցներում դասավանդող որպես հայոց լեզվի և գրականության ուսուցիչների համար Մոդուլը մշակվել է հայոց լեզվի դասավանդման ընթացքում մեթոդական կարողություններ տալու, ինտերակտիվ մեթոդներով դասավանդելու հմտություններ մշակելու նպատակով |
| **Մոդուլի տևողությունը** | 56 ժամ |
| **Մուտքային պահանջները** | Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է նախապես ուսումնասիրած լինի «Հայոց լեզվի ուղղագրության և ուղղախոսության հմտություններ», «Հնչյունաբանական վերլուծություններ կատարելու հմտություններ», «Բառագիտություն...», «Ձևաբանություն...», «Շարահյուսություն...», «Ոճաբանություն և խոսքի մշակույթ» մոդուլներըԱյս մոդուլն ուսումնասիրելու համար սովորողը պետք է ուսումնասիրած լինի ԱՀԱԽ 4-09-001 «Ընդհանուր աշխատանքային գործունեության հմտություններ», ՈՒՍՈՒՑ 4-09-001 «Հոգեբանություն», ՈՒՍՈՒՑ 4-09-002 «Մանկավարժությունն իբրև գիտություն և նրա հիմնական հասկացությունները», ՈՒՍՈՒՑ 4-09-003 «Դասավանդողի հաղորդակցման հմտությունների ձևավորում», ՈՒՍՈՒՑ 4-09-004 «Դաստիարակության գործընթաց», ՈՒՍՈՒՑ 4-09-005 «Կրթության բովանդակություն», ՈՒՍՈՒՑ 4-09-006 «Ուսուցման գործընթաց», ՈՒՍՈՒՑ 4-09-007 «Դրդապատճառային տեխնիկայի կիրառում», ՈՒՍՈՒՑ 4-09-008 «Դասավանդման և ուսումնառության օժանդակ միջոցների կիրառում», ՈՒՍՈՒՑ 4-09-009 «Համագործակցային |

| | |
|---|---|
| | ուսումնառություն», ՈՒՍՈՒՑ 4-09-010 «Ուսուցման արդյունքների ստուգում և գնահատում» և ՈՒՍՈՒՑ 4-09-011 «Դասի նախապատրաստում» մոդուլները: |
| Մոդուլի գնահատման կարգը | Մոդուլի կատարողականը գնահատվելու է կատարած աշխատանքի հիման վրա՝ հաշվի առնելով նաև յուրաքանչյուր արդյունքի կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումը |
| Ուսումնառության արդյունք 1 | Ուսուցանի գրագիտություն, ձևավորել անսխալ ու վարժ գրելու և կարդալու հմտություններ. |
| Կատարման չափանիշներ | ա. ուսուցանում է հայերենի հնչյունական համակարգը, հնչյունների դասակարգումը, ձայնավոր և բաղաձայն հնչյունները, երկհնչյունները.<br>բ. ուսուցանում է հայերենի շեշտադրության կանոնները, շեշտից կախված հնչյունափոխությունը.<br>գ. ուսուցանում է ձայնավորների, բաղաձայնների, երկհնչյունների ուղղագրությունը.<br>դ. ստուգում է գրավոր աշխատանքները, ուղղում ուղղագրական, կետադրական և ոճական սխալները, բացատրում և սովորեցնում է ուղղագրական և ուղղախոսական նորմերը |
| Ուսումնառության արդյունք 2 | Ուսուցանի հայոց լեզվի կառուցվածքի, լեզվական միավորների և նրանց միջև առկա հարաբերությունների մասին համակարգված գիտելիքներ, կարողանա խթանել բառապաշարի հարստացմանը. |
| Կատարման չափանիշներ | ա. ուսուցանում է բառերի տեսակներն ըստ իմաստի և ձևի փոխհարաբերության (հոմանիշներ, հականիշներ, համանուններ,հարանուններ).<br>բ. ուսուցանում է բառապաշարի տարբեր շերտերը՝ գրական և խոսակցական, ընդհանուր և սահմանափակ գործածության.<br>գ. ուսուցանում է բառիմաստի տեսակները՝ ուղիղ և փոխաբերական, մենիմաստ և բազմիմաստ.<br>դ. ձևավորում է դարձվածքներ, ասացվածքներ, թևավոր խոսքեր կիրառելու հմտություններ, դարձվածքները այլ բառակապակցություններից տարբերակելու, տեքստի լեզվավոճական և պատկերավորման առանձնահատկությունները ընկալելու հմտություն.<br>ե. ձևավորում է բառերի տեսակներն ըստ կազմության (պարզ, բարդ, ածանցավոր) դասակարգելու, բառի բաղադրիչները (արմատ, ածանց, հոդակապ, հիմք և վերջավորություն) տարբերակելու, բառակազմության հետ կապված ուղղագրությունն ու հնչյունափոխությունը ուսուցանելու կարողություններ.<br>զ. կազմում է բառակազմական առաջադրանքներ՝ գրավոր և բանավոր խոսքում հոմանիշ բառերը ճիշտ կիրառելու, բառերի ճիշտ ընտրություն կատարելու և դրանք տեղին գործածելու նպատակով: |
| Ուսումնառության արդյունք 3 | Ձևավորի լեզվաքերականական գիտելիքների հիման վրա խոսքի և նրա միավորների վերլուծություն կատարելու ունակություն. |
| Կատարման չափանիշներ | ա.ուսուցանում է նյութական բովանդակություն ունեցող կամ անվանողական խոսքի մասերը, թեքվող խոսքի մասերը(գոյական, դերանուն, բայ), մատնանշելով բանավոր խոսքի մեջ դրանց փոփոխությունները.<br>բ.ուսուցանում է նյութական բովանդակությունից զուրկ կամ սպասարկու խոսքի մասերը.<br>գ.ձևավորում է խոսքի մասերի քերականական հատկանիշները (գոյականի թիվը, հոլովը, առումը, դերանվան դեմքը, թիվը, հոլովը, բայի ժամանակը,եղանակը, դեմքը, թիվը, սեռը) գտնելու հմտություններ.<br>դ.մշակում է ինքնուրույն բանավոր և գրավոր խոսք կառուցելու կարողություններ, լեզվաքերականական գիտելիքները խոսքի կառուցման ընթացքում կիրառելու ունակություն<br>ե.ձևավորում է տեքստի վրա կատարվող գործնական աշխատանքի միջոցով գրվածքի լեզվավոճական առանձնահատկությունները բացահայտելու.<br>զ.ուսուցանում է բառակապակցությունը նախադասությունից, նախադասության տեսակներն ըստ կազմության և ըստ հաղորդակցության նպատակի տարբերակելու հմտություններ.<br>է.ձևավորում է շարահյուսական վերլուծություն կատարելու հմտություններ: |
| Ուսումնառության արդյունք 4 | Մշակի շարադրությունների, փոխադրությունների, ռեֆերատների, համառոտագրման և այլ ստեղծագործական աշխատանքների միջոցով կապակցված շարադրանք ստեղծելու հմտություն. |

| | |
|---|---|
| Կատարման չափանիշներ | ա. հաղորդում է գիտելիքներ տեքստի, նրա իմաստային, կառուցվածքային ու ոճական ամբողջականության վերաբերյալ.<br>բ. ձևավորում է գրավոր շարադրանքները ձևակերպելու և ներկայացնելու համար բառերը ճիշտ ընտրելու և դրանք տեղին գործածելու, հոմանիշ բառերը ոճակական նրբերանգները ճիշտ կիրառելու, գրավոր խոսքում մտքերը ճիշտ արտահայտելու, ուղղագրության և կետադրության կանոնները պահպանելու, գրական լեզվի բառակազմական, ձևաբանական, և շարահյուսական նորմերը պահպանելու հմտություններ.<br>գ. ձևավորում է գրավոր խոսքում լեզվի պատկերավորման և հուզաարտահայտչական միջոցներ կիրառելու հմտություններ.<br>դ. ձևավորում է ուսուցողական և ստուգողական թելադրություններ տալու և դրանք ստուգելու կարողություններ ու հմտություններ.<br>ե. ձևավորում է ուսուցողական կամ ձևավորող, հայտորոշիչ և ստուգման կամ ամփոփիչ թեստեր կազմելու, հանձնարարելու և ստուգելու կարողություններ և հմտություններ |
| Ուսումնառության արդյունք 5 | Զարգացնի աշակերտների բանավոր խոսքը՝ կարդացածը պատմելու, քննարկելու,տարբեր թեմաներով զրույցներ անցկացնելու, երկխոսություններ կառուցելու միջոցով |
| Կատարման չափանիշներ | ա. ձևավորում է աշակերտների լեզվական ճաշակը և խոսքի մշակույթը զարգացնելու հմտություններ տարբեր բնույթի տեքստերի լեզվավոճական վերլուծության միջոցով.<br>բ. ուսուցանում է խոսքային գործունեության տեսակները (ունկնդրում, ընթերցանություն, մտքերի գրավոր և բանավոր արտահայտում, մենախոսություն և երկխոսություն, դերային խաղ, բեմականացում, քննարկում, բանավեճ).<br>գ. ձևավորում է հաղորդակցական գործունեության տեսակները (հաղորդում, հարցում, կամքի արտահայտում, ժխտում) և դրանց հետևանքով ձևավորվող խոսքի տեսակները (պատմողական, նկարագրական, դատողական խոսք, դիմում, հրաման, հորդոր, հիծ) ուսուցանելու կարողություններ և հմտություններ.<br>դ. ձևավորում է խոսքն ավելի պատկերավոր դարձնելու նպատակով հայերենի դարձվածքների հարստությունից օգտվելու,խոսքում ասացվածքներ, թևավոր խոսքեր և արտահայտություններ կիրառելու, ոճական երանգավորում ունեցող բառերն՝ ըստ անհրաժեշտության կիրառելու հմտություն: |
| **ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀԱՅ ՀԻՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ»** | |
| Մոդուլի դասիչը | ՀՌԼԴ - 04 -016 |
| Մոդուլի նպատակը | Այս մոդուլը մշակվել է հայ գրականության սկզբնավորման, գրերի գյուտի, Մաշտոցի կյանքի և գործունեության, 5-րդ դարի հայ մատենագության, հայ պատմիչների և նրանց ստեղծագործության մասին գաղափար տալու համար |
| Մոդուլի տևողությունը | 34 ժամ |
| Մուտքային պահանջները | Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը նախապես պետք է կարդացած լինի 5-րդ դարի հայ պատմիչների գործերը, Կորյունի« Վարք Մաշտոցի» աշխատությունը |
| Մոդուլի գնահատման կարգը | Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է |
| Ուսումնառության արդյունք 1 | Իմանա հայ գրականության սկզբնավորման նախամաշտոցյան գիր ու գրականության գոյության, գրերի գյուտի, Մաշտոցի կյանքի ու գործունեության մասին |
| Կատարման չափանիշներ | ա. ներկայացնում է հայ գրականության սկզբնավորումը.<br>բ. արտահայտում, հաստատում ու պաշտպանում է իր կարծիքը նախամաշտոցյան գիր ու գրականության մասին.<br>գ. հիմնավորում ու պատճառաբանում է գրերի գյուտի ազգապահպան դերն ու նշանակությունը.<br>դ. անգիր գիտի Աստվածաշնչից թարգմանված առաջին հայերեն նախադասությունը ե. կարողանում է պատմել Մաշտոցի հոգևոր և աշխարհիկ կյանքի, գրերի գյուտի մասին: |
| Ուսումնառության արդյունք 2 | Իմանալ 5-րդ դարի հայ մատենագրության ընդհանուր բնութագրի, հայ պատմիչների ու նրանց ստեղծագործությունների մասին: |

| | |
|---|---|
| Կատարման չափանիշներ | ա.ներկայացնում է 5-րդ դարի հայ մատենագրության ընդհանուր բնութագիրը.<br>բ.ներկայացնում է Փավստոս Բյուզանդի «Հայոց պատմություն» երկասիրության բովանդակությունը.<br>գ.վերլուծում է Վասակ և Մուշեղ Մամիկոնյանների կերպարները.<br>դ.արժևորում է Եղիշեի «Վարդանաց պատմության» պատմական և գրական արժեքը, բնութագրել Վարդան Մամիկոնյանին, Ղևոնդ Երեցին, Վասակ Սյունեցուն, Հազկերտ II-ին և Միհրներսեհին.<br>ե.ներկայացնում է ընդհանուր գաղափար Ղազար Փարպեցու«Հայոց պատմության» և «Ստախոս աբեղաների մեղադրությունը» թղթի մասին, ներկայացնել հոգևորականության շահամոլության, խարդախության, տգիտության և խավարամոլության քննադատությունն ըստ Փարպեցու «Թղթի».<br>զ.արժևորում է Խորենացու «Հայոց պատմություն» երկասիրության գրական և պատմական արժեքը, ներկայացնում առասպելների սյուժեն, բնութագրում կերպարները, ներկայացնում «Ողբը»՝ որպես ժամանակի մերժելի բարքերի, հասարակական անարդար կարգերի մերկացում: |
| **ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 10-12-ՐԴ ԴԱՐԵՐՈՒՄ »** | |
| Մոդուլի դասիչը | ՀՌԼԴ - 04 09 -016 |
| Մոդուլի նպատակը | Գաղափար տալ ժամանակաշրջանի, հայկական Վերածննության սկզբնավորման, Շնորհալու, Մխիթար Գոշի ստեղծագործությունների, «Սասունցի Դավիթ» էպոսի, Գր. Նարեկացու տաղերի և «Մատյան ողբերգության» պոեմի մասին: |
| Մոդուլի տևողությունը | 34 ժամ |
| Մուտքային պահանջները | Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը նախապես պետք է կարդացած լինի Ներսես Շնորհալու «Ողբ Եդեսիոյ» պոեմը և հանելուկները, Մխիթար Գոշի առակները, «Սասունցի Դավիթ» էպոսը, Գր. Նարեկացու տաղերը և «Մատյան Ողբերգության» պոեմը: |
| Մոդուլի գնահատման կարգը | Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է: |
| Ուսումնառության արդյունք 1 | Վերլուծել Ներսես Շնորհալու «Ողբ Եդեսիոյ» պոեմը, իմանալ հանելուկների և շարականների ժանրը |
| Կատարման չափանիշներ | ա.պատկերացում է տալիս Շնորհալու ապրած ժամանակաշրջանի մասին.<br>բ.պատմում է Շնորհալու կյանքը.<br>գ.ներկայացնում է Շնորհալու շարականները, տաղերը և հանելուկները.<br>դ.վերլուծում է «Ողբ Եդեսիոյ» պոեմը.<br>ե.արտասանում է հատվածներ վերոհիշյալ պոեմից, հանելուկներ, «Առավոտ լուսո» շարականը: |
| Ուսումնառության արդյունք 2 | Ներկայացնել Մխիթար Գոշի առակները, դասդասել ըստ թեմատիկայի, խոսել «Դատաստանագրքի» մասին |
| Կատարման չափանիշներ | ա. ներկայացնում է առակի ժանրը, առակագրությունը մինչև Գոշը.<br>բ. պատմում է Մ. Գոշի կյանքի մասին.<br>գ. վերլուծում է սոցիալական բողոք պարունակող առակները.<br>դ. վերլուծում է Գոշի միապետական հայացքներն արտահայտող առակները,<br>ե. ներկայացնում է «Դատաստանագիրք հայոց» աշխատությունը |
| Ուսումնառության արդյունք 3 | Պատմել«Սասունցի Դավիթ» էպոսի սյուժեն, վերլուծել կերպարները: |
| Կատարման չափանիշներ | ա.ներկայացնում է հայ ժողովրդի հերոսական էպոսի ձևավորման ժամանակաշրջանը, պատմական հիմքը և գաղափարարական բովանդակությունը.<br>բ.թվարկում է էպոսի ասացողներին, տարբերակները, Գարեգին Սրվանձտյանի և Մանուկ Աբեղյանի ավանդը.<br>գ.պատմում է չորս ճյուղերի սյուժեն.<br>դ.բնութագրում է էպոսի գլխավոր հերոսներին.<br>ե.ներկայացնում է էպոսի գեղարվեստական արժեքը, պատկերավորման արտահայտչական միջոցները: |

| | |
|---|---|
| **Ուսումնառության արդյունք 4** | Վերլուծել Նարեկացու «Մատյան ողբերգության» պոեմը և տաղերը: |
| **Կատարման չափանիշներ** | ա. պատմում է Նարեկացու կյանքը և նրա շուրջ ստեղծված ավանդույթները.<br>բ. վերլուծում է «Մատյան ողբերգության» պոեմը՝ վերհանելով հետևյալ գաղափարները՝<br>• ապաշխարողի ինքնաճանաչումը պոեմում.<br>• մարդ և Աստված հարաբերությունը պոեմում.<br>• մարդ և սատանա հարաբերությունը պոեմում.<br>• բանաստեղծի միստիցիզմը պոեմում.<br>• երկվությունը, կասկածը, հույսը պոեմում.<br>• դարաշրջանի գեղարվեստական լայն ընդգրկումը և արատների քննադատությունը պոեմում,<br>• պոեմի արվեստը.<br>գ. վերլուծում է «Տաղ ծննդյան», «Տաղ Վարդավառի», «Տաղ հայտնության» և «Տաղ հարության» ստեղծագործությունները, անգիր է ասում հատվածներ վերոհիշյալ տաղերից.<br>դ. խոսում է տաղերի գեղարվեստական արժանիքների մասին: |
| **ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 13-16-ՐԴ ԴԱՐԵՐՈՒՄ »** | |
| **Մոդուլի դասիչը** | ՀՈՒԴ - 04 09 -017 |
| **Մոդուլի նպատակը** | Այս մոդուլը մշակվել է 13-16-րդ դարերի հայ գրականության մասին գիտելիքներ տալու համար |
| **Մոդուլի տևողությունը** | 34 ժամ |
| **Մուտքային պահանջները** | Այս մոդուլը յուրացնելու համար ուսանողը նախապես պետք է կարդացած լինի Կոստանտին Երզնկացու բանաստեղծությունները, Վարդան Այգեկցու առակները, Հովհաննես Թլկուրանցու, Մկրտիչ Նաղաշի, Գրիգորիս Աղթամարցու, Ֆրիկի բանաստեղծությունները և Քուչակի հայրենները |
| **Մոդուլի գնահատման կարգը** | Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է |
| **Ուսումնառության արդյունք 1** | Վերլուծել Կոստանտին Երզնկացու բանաստեղծությունները: |
| **Կատարման չափանիշներ** | ա. պատմում է Երզնկացու կյանքը.<br>բ. վերլուծում է Երզնկացու բարոյախրատական, գարնանը և բնությանը նվիրված բանաստեղծությունները.<br>գ.բացատրում է վարդի և բլբուլի այլաբանական իմաստը, ձմեռ և գարուն հակադրությունները.<br>դ. վերլուծում է Երզնկացու սիրային բանաստեղծությունները: |
| **Ուսումնառության արդյունք 2** | Վերլուծել Վարդան Այգեկցու առակները: |
| **Կատարման չափանիշներ** | ա. ներկայացնում է Այգեկցու կյանքը.<br>բ. վերլուծում է սոցիալական բողոք պարունակող առակները.<br>գ.վերլուծում է հակաեկեղեցական, հակահոգևորականության տրամադրություններ արտահայտող առակները.<br>դ. վերլուծում է կենցաղային թեմաներով և կյանքի զանազան հարցեր արծարծող առակները.<br>ե. ներկայացնում է Այգեկցու ճառերը |
| **Ուսումնառության արդյունք 3** | Վերլուծել Հովհաննես Թլկուրանցու բանաստեղծությունները: |
| **Կատարման չափանիշներ** | ա. ներակայացնում է Թլկուրանցու կյանքը.<br>բ. ներակայացնում է Թլկուրանցուն որպես սիրո երգիչ.<br>գ. մեկնաբանում է կյանքի և մահվան փոխհարաբերության հարցը Թլկուրանցու ստեղծագործություններում.<br>դ. վերլուծում է Թլկուրանցու խրատական բանաստեղծությունները.<br>ե. վերլուծում է Թլկուրանցու «Տաղ քաջի Լիպարիտի» լիրոէպիկական պոեմը: |
| **Ուսումնառության արդյունք 4** | Վերլուծել Մկրտիչ Նաղաշի և Գրիգորիս Աղթամարցու բանաստեղծությունները: |

| | |
|---|---|
| Կատարման չափանիշներ | ա. պատմում է Մկրտիչ Նաղաշի և Գր. Աղթամարցու կյանքը.<br>բ. վերլուծում է Նաղաշի «Վասն ազահության» բանաստեղծությունը.<br>գ. վերլուծում է Նաղաշի «Վասն դարիպի» բանաստեղծությունը.<br>դ. ներկայացնում է Նաղաշի լիրիկայի սոցիալական մոտիվը.<br>ե. վերլուծում է Գր. Աղթամարցու սիրո և գարնան երգերը.<br>զ. ներկայացնում է Աղթամարցու խրատական բանաստեղծությունները և կաֆաները.<br>է. վերլուծում է «Տաղ գեղեցիկ ի վերայ այգոյ, հոգւոյ և մարմնոյ» բանաստեղծությունը |
| Ուսումնառության արդյունք 5 | Վերլուծել Ֆրիկի բանստեղծությունները |
| Կատարման չափանիշներ | ա. ներկայացնում է Ֆրիկի կյանքը և ապրած ժամանակաշրջանը և անձնական դրաման,<br>բ. վերլուծում է «Ընդդեմ Ֆալաքին» («Բողոք Ֆրրկանն կոչեցեալ բանաստեղծի ընդդեմ բաղդին») բանաստեղծությունը,<br>գ. վերլուծում է «Վասն Արղուն ղանին և Բուղային» բանստեղծությունը,<br>դ. վերլուծում է «Գանգատ» («Բան ի Ֆրիկ գրքոյն») բանստեղծությունը |
| Ուսումնառության արդյունք 6 | Վերլուծել Նահապետ Քուչակի հայրենները |
| Կատարման չափանիշներ | ա. պատմում է Քուչակի կյանքը և նրա հետ կապված ավանդույթները.<br>բ. ներկայացնում է Քուչակին որպես սիրո երգիչ.<br>գ. վերլուծում է Քուչակի խոհախրատական հայրենները.<br>դ. վերլուծում է Քուչակի պանդխտությանը նվիրված հայրենները.<br>ե.արժևորում է Քուչակի հայրենների արվեստը |
| **ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ « ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 17-18-ՐԴ ԴԱՐԵՐՈՒՄ »** | |
| Մոդուլի դասիչը | ՅՌԼԴ - 04 -09 -020 |
| Մոդուլի նպատակը | Այս մոդուլը մշակվել է Նաղաշ Հովնաթանի, Պաղդասար Դպիրի, Պետրոս Ղափանցու և Սայաթ-Նովայի ստեղծագործություններին ծանոթացնելու համար |
| Մոդուլի տևողությունը | 34 ժամ |
| Մուտքային պահանջները | Այս մոդուլը յուրացնելու համար ուսանողը նախապես պետք է կարդացած լինի Ն. Հովնաթանի, Պ Դպիրի, Պ. Ղափանցու և Սայաթ-Նովայի ստեղծագործությունները |
| Մոդուլի գնահատման կարգը | Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է |
| Ուսումնառության արդյունք 1 | Վերլուծել Նաղաշ Հովնաթանի ստեղծագործությունը |
| Կատարման չափանիշներ | ա. պատմում է Նաղաշ Հովնաթանի կյանքը.<br>բ. վերլուծում է սիրո և ուրախության տաղերը.<br>գ. վերլուծում է երգիծական բանաստեղծությունները. |
| Ուսումնառության արդյունք 2 | Վերլուծել Պաղտասար Դպիրի և Պետրոս Ղափանցու ստեղծագործությունը |
| Կատարման չափանիշներ | ա. պատմում է Պ. Դպիրի և Պ. Ղափանցու կյանքը.<br>բ. վերլուծում է Պ. Դպիրի սիրո և գարնան տաղերը.<br>գ. վերլուծում է Պ. Ղափանցու գարնան և բնության երգերը.<br>դ. ներկայացնում է երկու բանաստեղծներին իբրև պահպանողական հոսանքի ներկայացուցիչներ և նրանց երգերի կրոնական-պահպանողական բովանդակությունը |
| Ուսումնառության արդյունք 3 | Վերլուծել Սայաթ-Նովայի ստեղծագործությունը |
| Կատարման չափանիշներ | ա. պատմում է Սայաթ-Նովայի կյանքը.<br>բ. ներկայացնում է ժամանակաշրջանի արտացոլումը նրա պոեզիայում. |

| | |
|---|---|
| | գ. ներկայացնում է Սայաթ-Նովայի վրացերեն և ադրբեջաներեն բանաստեղծությունները և Մեծ գուսանի եռալեզու խաղերի հմայքը.<br>դ. վերլուծում է «Ամեն սազի մեջն գոված» բանաստեղծությունը.<br>ե. վերլուծում է «Դուն էն գլխեն իմաստուն իս» բանաստեղծությունը.<br>զ. վերլուծում է «Քանի վուր ջան իմ, յար…» բանաստեղծությունը |
| | **ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ « ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 19-ՐԴ ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻՆ »** |
| **Մոդուլի դասիչը** | ՀՌԼԴ 04-09-021 |
| **Մոդուլի նպատակը** | Այս մոդուլը մշակվել է ներկայացնելու համար 19-րդ դարի առաջին կեսի հայ գրականությունը, Հարություն Ալամդարյանի, Մեսրոպ Թաղիադյանի, Ղևոնդ Ալիշանի և Խաչատուր Աբովյանի ստեղծագործությունները |
| **Մոդուլի տևողությունը** | 34 ժամ |
| **Մուտքային պահանջները** | Այս մոդուլը յուրացնելու համար ուսանողը նախապես պետք է կարդացած լինի Հարություն Ալամդարյանի «Չափաբերականք» խորագրով ժողովածուն և բանաստեղծությունները, Մեսրոպ Թաղիադյանի չափածո երգերը, «Սոս և Սոնդիպի» լիրոէպիկական պոեմը, «Վեպ Վարսենկան» ստեղծագործությունները, «Ճանապարհորդություն ի հույս» գիրքը, Ղևոնդ Ալիշանի «Եղծ նահապետի շարքը», Խաչատուր Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպը, «Պարապ վախտի խաղալիք» և «Թուրքի աղջիկը» պատմվածքը |
| **Մոդուլի գնահատման կարգը** | Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար ախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է |
| **Ուսումնառության արդյունք 1** | Ներկայացնի Ալամդարյանի ստեղծագործությունը |
| **Կատարման չափանիշներ** | ա. ներկայացնում է Հ. Ալամդարյանի լիրիկան.<br>բ. ներկայացնում է «Չափաբերականք» խորագրով ժողովածուն.<br>գ. ներկայացնում է Հարություն Ալամդարյանի քնարերգության կրոնական և աշխարհիկ մոտիվները |
| **Ուսումնառության արդյունք 2** | Ներկայացնի Մեսրոպ Թաղիադյանի ստեզծագործությունը |
| **Կատարման չափանիշներ** | ա. պատմում է Մ. Թաղիադյանի կյանքը.<br>բ. ներկայացնում է Թաղիադյանի չափածո երգերը.<br>գ. վերլուծում է «Սոս և Սոնդիպի» լիրոէպիկական պոեմը.<br>դ. վերլուծում է «Վեպ Վարդգեսի» և «Վեպ Վարսինկան» արձակները.<br>ե. ներկայացնում է «Ճանապարհորդություն ի հույս» գիրքը |
| **Ուսումնառության արդյունք 3** | Ներկայացնել Ղևոնդ Ալիշանի ստեղծագործությունը |
| **Կատարման չափանիշներ** | ա. պատմում է Ալիշանի կյանքը.<br>բ. ներկայացնում է Ալիշանի` հայ ժողովրդի պատմական անցյալի քնարական կերպավորումը նրա գրաբար և աշխարհաբար բանաստեղծություններում.<br>գ. ներկայացնում է Ալիշանին որպես հայ ազգային շարժման գաղափարախոս և վերլուծել «Երգ Նահապետի» շարքը |
| **Ուսումնառության արդյունք 4** | Ներկայացնել Խաչատուր Աբովյանին` որպես հայ նոր գրականության հիմնադիր և վերլուծել «Վերք Հայաստանի» վեպը |
| **Կատարման չափանիշներ** | ա. պատմում է Խաչատուր Աբովյանի կյանքը.<br>բ. ներկայացնում է Աբովյանին որպես հայ նոր գրականության հիմնադիր.<br>գ. պատմում է «Վերք Հայաստանի» վեպի սյուժեն.<br>դ. ներկայացնում է վեպի թեման և գաղափարը.<br>ե. բնութագրում է Աղասուն` որպես նոր տիպի հերոս հայ գրականության մեջ.<br>զ. ներկայացնում է «Պարապ վախտի խաղալիքը» ստեղծագործությունը.<br>է. ներկայացնում է «Թուրքի աղջիկը» և «Առաջին սերը» պատմվածքները. |

| | |
|---|---|
| | ը. ներկայացնում է «Պատմություն Տիգրանի» մանկավարժական բնույթի երկը |
| **ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ « ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 19-ՐԴ ԴԱՐԻ 50-60-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ »** | |
| Մոդուլի դասիչը | ՀՈՒԼԴ 04 -09 -022 |
